



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները։ Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները։

YEREWANER STAATSUNIVERSITÄT

GÜNTER FUCHS

HANS-ULRICH LÜDEMANN

MÖRDERMORD

DOKUMENTE UND DIALOGE

Aus dem Deutschen übersetzt von

Dora Sakayan
und
Evelina Makarian

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՅՈՒՆԹԵՐ ՖՈՒՔ

ՀԱՆՍ-ՈՒԼՐԻՆ ԼՅՈՒԴԵՄԱՆ

ՄԱՐԴԱՍՊԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՈՒ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գևրմաներնից թարգմանեցին՝

Դորա Սաքայան
և
Էվլինա Մակարյան

VERLAG DER JEREWANER STAATSUNIVERSITÄT

JEREWAN – 2008

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2008

Ցուքս Գյունթեր, Լյուդեման Հանս-Ռվարիխ

Ֆ 996 Մարդասպանի սպանությունը, փաստաթղթեր ու երկխոսություններ: - Եր.: ԵՊՀ Հրատ., 2008 թ., 116 էջ:

Գեղարվեստա-վավերագրական վիպակ հայ նշանավոր վրիժառու Սողոմոն Թեհրեյանի ահարեկչության և դատավարության մասին: Ժամանակին մեծ աղմուկ հանած բեռլինյան այս դատավարությունն այլոց թվում ոգեշնչել է նաև գերմանացի ժամանակակից Հեղինակներ՝ պատմարան Գյունթեր Ֆուբսին և զրոյ Հանս-Ռվարիխ Լյուդեմանին, որոնք զրական-գեղարվեստական խոսքը վարպետորեն համակցում են Սողոմոն Թեհրեյանի դատավարության ընազիր արձանագրությունների հետ: «Մարդասպանի սպանության» հայերեն թարգմանությունը լույս է տեսնում առաջին անգամ:

ԳՄԴ 63.3 (22)

Գերմաններն բնագրի հեղինակներն ընթերցողին տևղեկացնում են, որ իրենց գրքում շեղագիր* տառերով տրված հատվածները վերաբուղում են ընազիր փաստաթղթերի:

Դատավարության ընթացքի փաստական հիմնավորումը կատարված է Հետևելով Բեռլինի նահանգային երրորդ դատարանի երդյալների ատյանի կողմից Թալեաթ փաշային սպանության մեջ մեղադրվող հայ ուսանող Սողոմոն Թեհրեյանի դատաքննության սղագիր արձանագրություններին (տե՛ս էջ 5): Գործ՝ C. J. 22/21 թ. հունիս 2 և 3, Արմին Թ. Վեզների նախարանով: (Տե՛ս Թեսա Հոֆմանի ներածականով՝ «Թալեաթ փաշա դատավարությունը» գործը [“Der Prozess Talaat Pascha”, Deutsche Verlagsgesellschaft für Politik und Geschichte m.b.H. in Berlin W 8 1921], որը հրապարակվել է քաղաքական ու պատմական հարցերով զրադվող Բեռլինի գերմանական հրատարակչության կողմից «Պոգրոմ» շարքում՝ վուանգված ժողովուրդների ընկերության հանձնարարությամբ «Հայերի ցեղասպանությունը դատարանի առաջ» վերնագրով [Der Völkermord an den Armeniern vor Gericht, Göttingen, Wien 1980, 1985]):

Հիտլերի խոսքերի մեջբերումը վերցված է 1919–1945 թթ. Գերմանիայի արտաքին քաղաքականության վերաբերող փաստաթղթերի ժողովածություց, շարք D. VII, No 193, էջ 171, ծանոթագրություն 1 [Akten zur deutschen auswärtigen Politik 1919–1945, Serie D, VII, No 193, S 171, Anm. 1]:

Վեզների հետ հարցագրույցի հատվածը վերցված է Թեսա Հոֆմանի և Ժիլայր Քոչարյանի խմբագրած «Հայաստան. Ցեղասպանություն-Տեղահանում-Աքսոր 1979–1987» [Armenien. Völkermord-Vertreibung-Exil 1979–1987, hrsg. von Tessa Hofmann und Gerayr Koutcharian, pogrom themen 1, Göttingen und Wien, 1987] գրքից:

Մնացած բոլոր աղբյուրները նշվում են տեքստում:

* Ի տարբերություն գերմաններեն ընագրի սույն՝ հայերեն հրատարակության մեջ դատական արձանագրությունները տարբերակված են ուղիղ տառերով (Դ. Ա.):

Ահա նրանք են կրկին՝ ոմբարկու օդաչուի բաճկոնակ հագած և թյարով տոփաններով զինված սափրած գլուխները, որոնք իրենց ուժեղ են զգում, երբ ոհմակով են: Այս անգամ նրանք մի օտարերկրացու են հալածում թեղինի գիշերային փողոցներով մեկ: Սակայն պարոն Մելիքյանի բախտը բերում է: Մի թուրք բանջարավաճառի միջամտության շնորհիվ երիտասարդները ձեռք են քաշում նրանից: Ի՞նչն է ուրեմն պատճառը, որ այդ դեպքից անմիջապես հետո ծանր վիրավորված կալիֆոռնիացի գիտնականը մերժում է մի թուրք բժշկի խնամքը: Արդո՞ք նրա տարօրինակ վերաբերմունքը պետք է վերագրել մատուցված դեղորայքին:

Վիրավորյալ Մելիքյանի երեսակայությունը նրան ներկայից առաջնորդում է զեպի 1921-ի թեղինը, որտեղ երդվյալների ատյանի առաջ կանգնած է նրա հայ մեծ Հայրը, որը մեղադրվում է մարտի 15-ին Հարդենրերգ փողոցում՝ Սալի Ալի Բյու անվան տակ այսուել թափնվող թուրքիայի ներքին գործերի նախկին նախարար Թալեաթ փաշային սպանելու համար: Եվ քանի որ այդ դատավարությունը Մելիքյանի նաև գիտական աշխատանքի նյութն է, չպետք է զարմանալ, որ նա իրեն տեսնում է որպես դատաքննության անմիջական մասնակից: Նույնքան իրական են թվում նրա ներկայությունները սպանված Թալեաթի հետ, որը երդվելով գերմանական իրավական պետության անոնով, համոզված է, որ իրեն սպանողի կանքն ավարտվելու է կացնահարումով:

Կա՞ արդյոք որևէ կապ Բարձր դռան ներքին գործոց նախկին նախարարի՝ Մելիքյանի մեծ Հոր ձեռքով իրազործված, այսպես կոչված, սպանության և ոմն թուրք բժշկից ամերիկացու անբացառվի վախի միջն: Ահա այս հարցերին է փորձում պատասխան տալ «Մարդասպանի սպանությունը» գիրքը:

ԲԵՌԼԻՆ-ՔՐՈՅՑՑԲԵՐԳ

Սեպտեմբերի 27, 1995 թ., 22-ն անց 13:

Գյորլիցի զբուայգուց դեպի Աշխարհապահների ջրանցքը ձգվող ֆորսթեր փողոցը երեկոյան այս ուշ ժամին ամայի է: Կալիֆոռնիացի պարոն Մելիքյանը, որ երեք ամիս է, ինչ թեղինի աղատ համալսարանում գիտական աշխատող է, անիծում է այն պահը, երբ ընկերներին այցելելուց հետո որոշեց ոտքով տուն գնալ: Նա հավատ չէր ընծայել Բերգլիի իր մի քանի աշխատակիցների ասածներին, թե Գերմանիայում գնալով ավելի է աճում ատելությունը օտարերկրացիների հանդեպ: Սակայն հիմա ամեն տեսակի նղոփն այլևս անօգուտ է: Այս պահին Սողոմոն Մելիքյանը փախչում է, որ փրկի կյանքը: Նա հերիս վազում է և կողերը ծակող անասելի ցավից գրեթե խելակորուս է լինում: Կայծակնային արագությամբ նրա աչքերի առջևով կինոժապավենի պես անցնում են տեսարաններ, որոնք իր մեծ Հոր՝ Հայորդի Սողոմոն թեհլերյանի, հետագայում՝ Սարո Մելիքյանի պատմածով լի էին արյունով, բռնաբարություններով ու զիակներով: Դա այն ժամանակ էր, երբ քաղաքացիական չորերով ու զինվորական համազգեստով թուրք Զարդարարները թեհլերյան ընտանիքի բոլոր անդամներին իրենց տեսերից դուրս քշեցին ու նրանց ինչ-որ օտար մի տեղում սպանեցին: Ճանապարհին շատ սակավ էր թուրք Համաքաղաքացիներից եկող օգնությունը: Այդ ամենը տեղի ունեցավ 1915 թ., իսկ տեղահանության պաշտոնավես Հայտարարված վերջնակետը անուն չուներ...

Եվ ահա այսուեղ են Սողոմոն Մելիքյանին հետապնդողները, որմարկու օդաչուի բաճկոնակ հազար երիտասարդներ, որոնք սալահատակին երիզակոչիկներից առաջացած դոփյունով վրա են հասնում ու նրան գևտին տապալում: Նրանցից մեկը ոռնում է:

— Էյ, զու, օտարերկրացի՝ խոզ: Դու էիր, որ չէիր ուզում մեզ կրակ տալ: Չլողին հասկացնել է պետք:

Մեծողները իրենք էլ են վազքից շնչակտուր, այնպես որ նրանցից մեկի արձակած «Օտարներ, Հեռացե՛ք» հերթական ճիշը առաջկա ուժգնությունը չունի: Սակայն ամբողջ ուժով Հարվածել նա դեռ կարողանում է:

ՄԵԼԻՔՅԱՆԸ փորձում է երկու ձեռքով պաշտպանել զլույսը: Նրա պատոված շրթներից արյուն է ժայթքում: Ի վերջո կալիֆոռնիացի Նրիտասարդը պաղատում է նրանց, որ թողնեն՝ գնա:

— Գնա՞լ. դու պետք է սողաս, — զիվային քրքիջով վրա է հասնում Հաջորդն ու սկսում կոչիկի սուր ծայրով խելագարի պես Հարվածել զետնին փոփած մարդուն:

— Մի՛ խիեք, — գոռում է ՄԵԼԻՔՅԱՆԸ: Այժմ այլևս նրա ամերիկյան առողանությունը դժվար է անտեսել:

— Ակնօցավոր օճն ամերիկացի է ձեւանում: Ի՞նչ է, մեզ ապոչի տե՞ղ էն դնում:

ՄԵԼԻՔՅԱՆԻ բոլոր աղաչանքները կարծես միայն ավելի ևն հրահրում երիտասարդներին: Այս անգամ ակաղեմիականը բյուրովի տոռփանով մի Հարված է ստանում գլխին: Շրիսկոցով կոտրվում է ակնոցը:

— Գլուխող վրայիցդ կպոկեմ, խոզի մեզը:

Վերջին բառերը ՄԵԼԻՔՅԱՆԸ այլևս չի լսում: Սակայն գիտակցությունը կորցրած մարդու համար բարեբախտություն է, որ այդ պահին ամուսիների մի զույգ իրենց աղջկան այցելելու ճանապարհին կտրում-անցնում է Ֆորսթեր փողոցը: Բանջարավաճառ էրգուն ինչեն խկոյն ըմբոնում է իրավիճակը:

— Վախսկոտ խուժան, — ամբողջ ուժով գոռում է հիսնամյա տղամարդը՝ մոտենալով նրանց:

Կովազան խումբը բաց է թողնում Սողոմոն ՄԵԼԻՔՅԱՆԻն: Սակայն քանի որ նրանք թվով շատ են, չեն վախսենում ամբակազմ էրգուն ինջեցից: Զլսկոցով բացվում են մետաղյա դանակները:

— Օգնեցն'ք, — ճշում է տիկին ինջեն՝ ամուսնուն շրջապատված տեսնելով:

— Տեսնենք քեզնից ինչ կմնա, եթե քեզ սխտորի պճեղի պես ճըդ-մեմ, — ասում է սահրած զլուխներից մեկն ու խրում դանակը:

Մինչ էրգուն ինջեն տնքոցով զետին է տապալվում, կինն անդադար օգնություն է կանչում: Սակայն փողոցի թե՛ լուսավոր, թե՛ մութպատուհանների հնատեսում ոչ ոք չի շարժվում:

— Տղե՛րք, թուանք կենտրոնով, — զիմում է դանակահարողը ընկերներին:

Նրանց կոչիկների կրունկների դոփյունը արագ հեռանում է գիշերային մթության մեջ:

— Էրգո՛ն, — տիկին ինջեն սարսափահար կուանում է ամուսնու վրա, — էրգո՛ն, — ճշում է նա, և անունն այդ արձագանքում է մեքենաններով լցուն գիշերային փողոցում:

Տիկին ինջեն, սակայն, պատասխան չի ստանում: Միայն պարեկային մեքենան է, որ զգուշացված լինելով մի տաքսու վարորդից, տագնապային սուլոցով խախտում է Ֆորսթեր փողոցի մահվան լրությունը: Այնուհետև ամեն ինչ ընթանում է սովորականի պես:

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆ

Սևպտեմբերի 27, 1995 թ., 22-ն անց 45:

Ամերիկացի Սողոմոն ՄԵԼԻՔՅԱՆՆ ու թուրք բանջարավաճառ էրգուն ինջեն վայրագ հարձակման ննթարկվելուց մոտ 10 րոպե անց քաղաքային հիվանդանոցում բժշկական օգնություն ևն ստանում:

— Գանգոսկրի կոտրվածք, — ախտորոշում է բժիշկ Սևյումյուն, — լավ չէ, երրորդ արտակարգ դեպքն է այսօր, քույր Բևաթե:

Թեև հազիվ 30 տարեկան՝ բժիշկ Սևյումյուն վերջերս ստանձնել է շտապ օգնության բաժանմունքի ղեկավարի պաշտոնը:

— Այն էլ աշխատանքային օրվա ավարտից 15 րոպե առաջ: Այ քեզ բախտ, — հոգոց է հանում բժիշկը:

— Ահա՛, պարոն բժիշկ, բարձրագույն դպրոցի այս անցագիրը ամերիկյան անձնագրի մեջ էր: Բուժքույրը երկու փաստաթղթերը վարանու պահում է ձեռքերում:

Բժիշկ Սևյումյուն հնտաքրքրությամբ վերցնում է դրանք: «Սողոմոն ՄԵԼԻՔՅԱՆ, Ամերիկայի քաղաքացի: Ազատ համալսարան, գիտաշխատող»: Սակայն նա թղթերի զննումը կիսատ է թողնում՝ հիվանդին ցուցաբերելիք առաջին օգնությունն ավարտելու նպատակով:

— Ուրեմն, քույր Բևաթե, ամեն դեպքում մի դեղաչափ զիազեպամ ներարկեք նրան:

Բժիշկ Սևյումյուն վկայականները զնում է խալաթի գրպանն ու դուրս է զալիս վիրաբուժարանից: Հարևան սենյակում նա զիմում է աթոռին անշարժ նստած բանջարավաճառ էրգուն ինջեի կնոջը.

— Մյուս մարդու անունը Սողոմոն ՄԵԼԻՔՅԱՆ է: Մագումով կարծես թե հայ է, տիկին ինջե:

Տիկին ինջեն ձեռքով վանող նշան է անում: Իրեն չի հնտաքրքրում այդ օտարականը, որին իր ամուսինն ուղեց օգնել: Զլ՝ որ ինչ-ոք ձեռվ նա է մեղավորը ինջեն ընտանիքի դժբախտության համար:

— Իսկ իմ էրգուն, պարոն բժիշկ. կգա՞ նորից ինձ հետ, ... տո՞ւն: Բժիշկ Սևյումյուն կրկնում է.

– Նա հայ է, տիկին ինչեւ, – և զլուխը թերահավատ թափահարելով հարցնում է, – չինի՞ թե նա է ձեր ամուսնուն դանակահարել:

Իսկ երր բանջարավաճառի կինը չի արձագանքում, բժիշկը բոնում է նրա ուսերից.

– Տիկին ինչեւ:

Թրքուհին ցնցվում է կարծես հարվածի տակ: Ապա թոթովում է վախվորած.

– Ի՞նչ է լինում ... իմ էրգունի հետ:

– Դեռ վիրահատարանում է, տիկին ինչեւ: Դանակի մի քանի հարված է: Ձեր ամուսինը շատ արյուն է կորցրել:

– Ես ոչինչ չեմ հասկանում: Դուք ... թուրք, ինչո՞ւ դուք չեք ասում էրգունից Ձեր մայրենի լեզվով, պարոն բժիշկ:

Բժիշկն ուզում է պատասխանել, սակայն քույր Բևաթեն խուճապահար բացում է դուռը:

– Բժիշկ, շուտ եկե՞ք: Այս ամերիկացի պարոնը գիտակցության է սկել:

Մոտենալով հիվանդին՝ բժիշկ Սեյումյուն նկատում է, որ կարծես թե քույր Բևաթեի ասածն այնքան էլ ճշմարտությանը մոտ չէ: Սողոմոն Մելիքյանը մերթ հաղորդակից է, մերթ ընկնում է զառանցանքի մեջ. «Մի՛ խփեք, խնդրում եմ, մի՛ խփեք: Go away! Please, let me go! (Հեռացե՞ք, խնդրում եմ, թողե՞ք գնամ)»:

– Մենք քաղաքային հիվանդանոցում ենք: – Բժիշկը մի աթոռ է քաշում ու նստում մահճակալի մոտ:

– Ես բժիշկ Սեյումյուն եմ, – ասում է նա մեղմ տոնով, – դուք ծանր վիրավորված եք, պարոն Մելիքյան:

Ըստ երևոյթին ԱՄՆ-ի քաղաքացու գիտակցությունը մի պահ էր միայն պայծառացել: Նրա արցունքուտ աչքերը մի քանի վայրկան սևովում են սպիտակ խալաթով մարդու վրա: Ապա Սողոմոն Մելիքյանը զլուխն արագ շրջում է պատի կողմը:

– Դուք թուրք եք, ինձ հանգի՛ստ թողեք:

Անտեսելով հիվանդի մերժողական կեցվածքը՝ բժիշկ Սեյումյուն ընդունում է, որ ինքը իրոք թուրք է և բնիկ անսատողցի:

– Սակայն Ձեր վիճակի համար շատ ավելի կարևորն այն է, պարոն Մելիքյան, որ ևս բժիշկ եմ:

Հասկացավ Սողոմոն Մելիքյանը թե ոչ, նա պահպանում է բժշկի հանդեպ իր ժխտական կեցվածքը: Նաև քույր Բևաթեի՝ հիվանդին հանգստացնելու բոլոր փորձերը հակառակ արդյունք են տալիս: Եվ

ահա հանկարծ Մելիքյանը ծառս լինելով գերմարդկային ուժով՝ ապակյա աչքերը հառում է բժշկի վրա և գոյզում մահասարսուր ձայնով.

– Դուք թուրք եք: Դուք ուզում եք ինձ սպանել: Don't touch me! (Ինձ չղիպչե՛ք):

Ուսերը թոթվկեռվ՝ բժիշկ Սեյումյուն տեղից վեր է կենում: Եվ թեև հիվանդը հազիկ թե հաղորդակից է, նա մեկ անգամ ևս դիմում է նրան:

– Ցավում եմ, պարոն Մելիքյան, սակայն Դուք պարտավոր եք թույլ տալ, որ ձեզ դիպչեմ: Քույր Բևաթե, խնդրում եմ, մեկ անգամ ևս արսկե՛ք:

Բժշկի հիվանդասենյակից դուրս գալուց հետո քույրը նստում է հիվանդի մահճակալի մոտ դրված ամուռին: Սողոմոն Մելիքյանը զառանցում է մերթ կիսաճայն, մերթ ամրող ձայնով:

– Դուք ուզում եք ինձ սպանել... Մի թուրք և մի գերմանուհի: Սարքած խաղ է սա: Դուք ուզում եք վրեժ լուծել: Լսո՞ւմ ես, պապիկ, նրանք չեն ուզում, որ ևս ճշմարտությունը գրեմ: Քո և մյուս բոլորի մասին: Նրանք ուզում են, որ աշխարհը մոռանա ձեզ և ձեր մորթված նախնիներին: Մոռանա այն, ինչ ութսուն տարի առաջ կատարվեց ձեզ հետ:

Քույր Բևաթեն, որ թեև ուշադիր, սակայն առանց հասկանալու հետեւում է Մելիքյանի բառերին, չի կարող կոռհել, թե փողոցային այդ հարձակումը ինչեր է արթնացրել հայկական ծագում ունեցող ամերիկացու ևնթագիտակցության մեջ: Նրա տանջահար հոգին շոշափելի իրականության է վերածում ողբերգական այն իրադարձությունները, որոնք ժամանակին այլափոխել էին իր մեծ հոր՝ Սողոմոն թեհերյանի կյանքը, իսկ այժմ էլ ըավական ժամանակ ի վեր դարձել են նրա գիտական հետազոտությունների առարկան: Այս կերպ միայն կարևոր է բացառություն, թե ինչպես Սողոմոն թեհերյանի թոռը իր տենդուտ երեակայության մեջ հանդիպում է այն մարդուն, որը 1915 թ. որպես երիտթուրքական կառավարության ներքին գործոց նախարար, կրում է հայ ժողովրդի բազում տառապանքների ու ջարդերի մեղքը:

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՏԱՐԱՆ, 6-ՐԴ ՊԱՏԺԱԽՈՒՑ

Բեղին, Շաղոթևնբուրգ, Հունիսի 2, 1921 թ., 9 անց 15:

Դատավարություն ընդդեմ հայ ուսանող Սողոմոն Թևլերյանի (դատական գործում՝ Սալոմոն Թևլիիրյան), որը մեղադրվում է 1921 թ. մարտի 15-ին կեսօրից առաջ Բևոլին-Շաղոթևնբուրգի Հարդենքրդ փողոցում թուրք Թալեաթ փաշայի՝ Բարձր դռան ներքին գործոց նախարարի սպանության համար:

«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ. Անցյալ շարաթավերջին Վալթեր Ռաթենաուն ընտրվել է վերակառուցման նախարար; ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ. Այսօրվանից սկսած առավոտյան ժամը 9-ից Լրդվալների դատարանում կլսվի մարտ ամսին թուրք նախարարի մեծ վեզիր Թալեաթ փաշայի սպանության գործը; ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ. Նորելյան մրցանակի դափնեկիր, Հնդիկ Ռաբինդրանաթ Թագորը հինգչարթի օրը Բևոլինի համալսարանում կդասախոսի...»:

1

Կարծես ինքնըստինքյան Սողոմոն Մելիքյանը 1921 թ. Հունիսի 2-ին հայտնվում է պատկառազդու այս շնորհի առաջ, որտեղ ընթանում է Շաղոթևնբուրգի Լրդվալների դատարանի նիստը; Պատանի մի լրազրավաճառ-հեծանվորդ՝ ղեկը բաց թողած, անցնում է նրա կողքով:

Մելիքյանը նայում է հեծանվորդի հետեւից: Ապա շրջվում ու աստիճաններով արագ բարձրանում է: Զնայած բաղմաթիվ միջանցքներին, երիտասարդը լուսնոտի վստահությամբ գտնում է ճիշտ դուռը: Նա կանգ է առնում պատին ցուցադրված թղթի առաջ, որի վրա է տպյալ օրվա դատարանի կազմի ցանկը:

«Նահանգակ», նահանգային դատարանի վարիչ, դ-ր Լևմբերգ: Ատենակալներ՝ նահանգային դատական խորհրդական Բաթե և դատավորի օգնական դ-ր Լաքս: Դատարանի քարտուղար՝ դատավորի թեկնածու Վարմբուրգ...»: Մելիքյանը ուղղում է ակնոցը: Մանր տառերն իրեն վերջերս գնալով ավելի մեծ դժվարություն են պատճառում: Ապա երիտասարդը շարունակում է կիսաձայն կարդալ. «Մեղաղրող կողմ՝ առաջին կարգի դատախազ Գոլնիք: Պաշտպաններ՝ իրավական գաղտնի խորհրդական դ-ր Աղոփ Փոն Գորդոն, Բնոլին, իրավական խորհրդական դ-ր Յոհաննես Վերթհաուեր, Բևոլին, գաղտնի խորհրդական դ-ր Նիմայեր, Քիլի համալսարանի իրավագիտական ամբիոնի պրոֆեսոր»: Ցուցամատն արդեն սահում է ներքեւ տողի վրայով՝ «Երդվալներ՝ որմագիր-Հղկող Գրառու Նաուեն, Բևոլինի մոտ, վաճառական Գրուեր՝ Բևոնաու, ոսկերիչ Բարթել՝ Բևոլին, Նկամտավոր Քյունե՝ Փանքով, տնատեր Էվալդ՝ Շաղոթևնբուրգ, տանիքագործ Վագներ, փականագործ...»:

Մնացյալը կորչում է անհասկանալի քրթմնջոցի մեջ: Մասնագիտությունների ցանկում «ղեղանյութերի տեր» հասկացության այսօրվա անունը պետք է լիներ «ղեղատան տեր»...:

Հանկարծ, կարծես գետնի տակից, Սողոմոն Մելիքյանի կողքին հայտնվում է մի մարդ՝ Թալեաթ փաշան: Խոչոր կազմվածքով, թափեղերով մարդն առանց նախարանի խոսքն ուղղում է անծանոթին.

– Բոլորն էլ գերմանացի ազնիվ քաղաքացիներ են, պարոնս: Գերագույն դատարանը իմ մահվան քավությունը կբաղի, այնպես չէ: Այդ հարցում ևս լիովին վստահ եմ: Այն Համապատասխանում է 1870 թ. մայիսի 31-ի Գերմանիայի քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածին. «Ով դիտավորյալ կերպով մարդ է սպանում, մարդասպանության համար, եթե նա սպանությունը կատարել է կանխամտածված ձեռվ, մահվան է դատապարտվում»:

Առանց մեծ դարմանքի Մելիքյանը գլուխը մի փոքր թեքում է: Թուրքն իրեն անծանոթ չէ:

– Օրենքները շատ լավ եք ճանաչում, թալեա՛թ փաշա:

– Դուք գիտնք, թե ևս ովք եմ, – Հաղթամարմին թալեաթ փաշան շոյված ոլորում է բեղերի ծայրերը, – զե իհարկե՛, վերջ ի վերջո 45 տարեկան հասակում ևս արդեն մեծ վեզիր էի: Եթե դա ձեզ որևէ բան ասում է, պարոն: Ինչպես նաև ներքին գործոց նախարար:

– Ես դա գիտեմ և դեռ շատ ավելին, թալեա՛թ փաշա: Թթվական դատարանը Ձեզ մահվան է դատապարտել: Իսկ դուք 1918 թ. նոյեմբերից Սալի Ալի Բևը անունով ապօրինի ապրում էիք Բևովինում: Կան նաև այնպիսի գերմանացի քաղաքացիներ, Մեհմեդ թալեաթ փաշա, որոնք այն կարծիքին են, որ Դուք հենց որպես Բարձր դռան ներքին գործոց նախարար, պաշտոնավարությամբ վաստակել եք ավելին, քան մահը:

Թալեաթ փաշան աշխատված մի շարժումով գլուխը հետ է զցում: Հնչում է Հեգնական ծիծաղով համանգած պատասխանը.

– Քարոզչություն: Ստերի սուստ: ԶԼ՛ որ ևս՝ որպես երիտթուրքական բարենորոգչական կուսակցության ներքին գործոց նախարար, միշտ եղել եմ գերմանացիների լավ բարեկամը: Եվ եթե դեռ ապացույց եք ուզում, պարո՞ն, ահա՛, Վիլհելմ կայսրը ինձ պարզեվատրել է Պրուսիայի բարձրագույն շքանշանով:

– Որովհետեւ դուք, – ընդմիջում է Սողոմոն Մելիքյանը, – այլ ծառայությունների թվում հոգացել եք այն մասին, որ Հայկական Նկեղեցիների գողացված զանգերից Քրուսի պողպատաճուլարաններում թնդանոթներ ձուլվեն:

– Ի՞նչ կապ ունի այդ ամենը, պարո՞ն, այսօրվա բանավեճի նյութի հետ, – զայրանում է թալեաթ փաշան, – այդ մարդը՝ Թևյոլիյանը, պետք է թալեաթ փաշայի սպանության համար ապաշխարի: Նրա նման մարդասպանն արժանի է զլիսատվելու: Եվ ևս լիովին վստահում եմ գերմանական արդարադատությանը: Պիտի տեսնեք, պարո՞ն, որ ևս այս տեսակետից չեմ սխալվում:

Մելիքյանը գարսանալիորեն անխոռվ է մնում: ԶԼ՛ որ խոսքը վերաբերում է իր մեծ հորը՝ ամբաստանյալ Սարո Մելիքյանին, նույն Սողոմոն թեհերյանին, որի գլուխը բնդագրու այս մարդը զիյուտինի տակ է ուզում տեսնել:

– Մի վայրկյան, թալեաթ փաշա: Վերջ ի վերջո գոյություն ունեն նաև 212 և 213 հոդվածները. նախ՝ ոչ կանխամտածված սպանություն՝ հինգ տարուց ոչ պակաս բանտարկություն, երկրորդ՝ ոչ պակաս, քան վեց ամիս բանտարկություն՝ ի պատասխան բռնություն-ների կամ ստորացումների կատարված սպանության:

Զարմանալիորեն գերմանական իրավական այդ հիմնադրույթները ևս թրբական ներքին գործոց նախարարին անծանոթ չեն: Սակայն թալեաթ փաշայի կարծիքով դրանք չեն վերաբերում իր սպանության գործին: Այդ է պատճառը, որ խոր համոզվածությամբ ասում է.

– Այդպես էլ չիմացա, պարոն, թե ինչ եք ուզում ինձանից: Գերմանիան աշխարհում ճանաչված է որպես իրավական պետություն: Կասկած չկա, ուրեմն, որ զագրելի արարքը իր արդար պատիժը կստանա: Դրանում գուք համոզված եղեք:

Անտեսելով առարկությունը՝ Սողոմոն Մելիքյանը շարունակում է անվրդու:

– Կա նաև 51-րդ հոդվածը. «Պատմելի չէ այն գործողությունը, երբ գործող անձը գտնվել է անզիտակից կամ հոգեւես խանգարված վիճակում, որի հետևանքով բացառված է նրա կամքի ազատ դրսեռումը»:

– 51-րդ հոդված: Կատա՞կ եք անում, պարոն, ի՞նչ է:

Թալեաթ փաշան կարծես ինքն իրենից դուրս է եկել: Նրա բեղերի ծայրերը դողում են:

– Այդ հայ աշարենկիչը ինձ հետապնդել է: Ամեն ինչով զինված՝ եվրոպայով մեկ հետապնդել է ինձ: Այն փաստը, որ նրա բնակարանում գտնվել է 12000 մարկ, եզրակացնել է տալիս Հայերի կողմից կազմակերպված դավադրության մասին: Գուցե ի վերջո դուք է՞լ եք այդ ոճարագործներից մեկը, պարո՞ն:

Մելիքյանը հանում է ակնոցը: Զդայնացնող բծախնդրությամբ բաճկոնի աստառով մաքրում է ապակիներն ու քննող մի հայացք նետում դիմացինի վրա:

– Ուզում եմ հետևյալ ասել, թալեաթ փաշա: Ինձ բնավ չխանգարեց այն լուրը, որ ձերոնք Ձեր դիմակը ցուցադրել են թրբական դեսպանությունում, թեև Ձեր Հայրենիքում մահվան եք դատապարտված եղել:

Թալեաթ փաշան ուղղվում է ազդեցիկ մի մեծություն ցուցադրելու միտումով:

— Դուք ի՞նչ գիտեք, պարո՞ն: Իմ չարանենք սպանությունից հետո Բեռլինի տեղական թերթերից մեկը շատ դիպուկ կերպով գրել է. «Նշանագոր այդ անհատականությունն իր թիկնեղ ուսերով օգնեց Թուրքիային՝ հիմնահատակ քանդելու համբյան ապականված համակարգը: Նույնիսկ դժվարագույն ժամանակաշրջանում նա կարողացավ բարձր դռան սանձերը պահել իր խոշոր, բայց նպատակալաց ձեռքերում»:

— Վե՛րջ, բավական է, — Սողոմոն Մելիքյանը ափերով փակում է ականջները: Նա այլևս ի վիճակի չէ լսելու այդ անտանելի շողոքորթությունները:

Ոչ առանց ինքնագության՝ Թալեաթ փաշան ավարտում է տրվյալ թերթի մեջբերումը: «Իր պաշտոնյաների շրջանում նա վայելում էր բարի մեծավորի համբավ, իսկ հակառակորդներն ամեն պատճառ ունեին վախենալու նրա անընկնծելի, երկաթյա վճռականությունից»:

— Համաձայնե՞ր ինձ հետ, Թալեաթ փաշա, որ այդ ամենը շատ տարօրինակ է թվում. չնայած այս ամբողջ գովերգության՝ սեփական ժողովրդի կողմից մահվան եք դատապարտվել: Ձեր մարմինը դիակառի վրա է դրվել Թիրգարթեն կենտրոնական փողոցում, չնայած որ այդ ժամանակ թրքական դեսպանությունը չէր գործում: Համենայն դեպս այդպես է գրել «Berliner Allgemeine Zeitung»-ը Հարդենբերգի փողոցում Ձեր մահից երկու օր անց:

Եվ Մելիքյանն այսպես է ավարտում իր խոսքը:

— Բավականին երկիվեղկած մի հանգամանք ուրեմն, թե ինչպես վարվեցին Ձեր հանկարծահաս մահվան հետ, Թալեաթ փաշա:

Առանց այս վերջին բառերը նկատի առնելու, պատասխանում է Թուրքիայի նախկին արտաքին գործոց նախարարը:

— Ուրախ եմ միայն, որ ինձ սպանողին չի հաջողվի խուսափել արդար պատժից՝ նրան մի երրորդ պետության հանձնելու միջոցով: Թալեաթ փաշան բարձրացնում է ցուցամատը՝ խոսակցին ուսուցանելով, համաձայն Քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ Գերմանական կայսրության քրեական օրենքները կիրառելի են բոլոր նահանգներում կատարված հանցագործությունների դեպքում, մինչև անգամ եթե հանցագործը օտարերկրացի է:

— Զարմանալի է, թե ինչքան լավ եք յուրացրել գերմանական իրավագիտությունը, — արագ վրա է բերում Մելիքյանը, — չասեք, որ ևս կանխել եմ երդվալների վճիռը, Թալեաթ փաշա: Եթե թույլ տաք,

ավելի ուշ նորից կանդրադառնանք Ձեր հարցին: Իսկ այժմ եկե՛ք մտնենք դատարանի դահլիճ: Ճիշտ այս պահին պարոն նախագահը խոսքն ուղղում է ամբաստանյալին:

2

Նախագահ.— Դատական գործն սկսված է, և անցնում ենք ամբաստանյալի հարցաքննությանը՝ հաստատելու նրա անձնական հանգամանքները: Ծի՛շտ է, որ Դուք ծնվել եք 1897 թ. ապրիլի 2-ին Բազարին:

Ամբաստանյալ.— Այո՛:

Նախագահ.— Ի՞նչ մասնագիտություն ունեին Ձեր ծնողները:

Ամբաստանյալ.— Վաճառական:

Նախագահ.— Որտե՞ղ էին բնակվում:

Ամբաստանյալ.— Բազարինում:

Նախագահ.— Իսկ ավելի ո՞ւշ:

Ամբաստանյալ.— Երբ ես երկու կամ երեք տարեկան էի, ինձ տարան երգնկա:

Նախագահ.— Քանի՞ քոյք ու եղբայր ունեիք:

Ամբաստանյալ.— Երկու եղբայր և երեք քոյք:

Նախագահ.— Սինչև 1915 թ. Ձեր բոլոր քոյքերն ու եղբայրները հայրական տա՞նն էին ապրում:

Ամբաստանյալ.— Նրանք բոլորն էլ այստեղ էին ապրում՝ բացի ամուսնացած քրոջից:

Նախագահ.— Որտե՞ղ եք դպրոց հաճախել:

Ամբաստանյալ.— Երգմկայում:

Նախագահ.— Քանի՞ տարի:

Ամբաստանյալ.— Սուտավորապես 8–9 տարի:

Նախագահ.— Դպրոցը հաջողությա՞նը եք ավարտել:

Ամբաստանյալ.— Այո՛, հաջողությանը:

Նախագահ.— Ձեր ծնողների նյութական պայմանները լա՞վ էին:

Ամբաստանյալ.— Այո՛, շատ լավ:

Նախագահ.— Նրանք տուժեցի՞ն համաշխարհային պատերազմի պատճառով:

Ամբաստանյալ.— Սինչև ջարդերը մեր ընտանիքը վնաս չի կրել:

Նախագահ.— Որոշակի կարծիքներ տարածված էին այդ ջարդերի մասին: Մարդիկ ի՞նչ էին ասում դրանց մասին: Ո՞րն էր դրանց պատճառը:

Ամբաստանյալ.— Ի սկզբանե միշտ էլ ջարդեր տեղի են ունեցել՝ և իմ ծնվելու հետո, և եթե ծնողներիս հետ տեղափոխվեցինք Երգնկա: Ծնողներս միշտ էլ պատմել են, որ ջարդեր տեղի են ունեցել: Խոսում էին, որ բուրքական նոր կառավարությունը միջոցներ է ծեռարկելու մեր դեմ:

Նախազահ.— Գուցե թուրքական կառավարությունը այդ հիմնավորե՞լ է՝ ասելով, թե դրանք թիւել են ուղղական անհրաժեշտությունից: Կամ ի՞նչ էին խոսում այդ մասին:

Ամբաստանյալ.— Այն ժամանակ ինձ ասացին, որ դրանք ունեցել են իրենց կրօնական ու քաղաքական պատճառները:

Նախազահ.— Այժմ հանձնարարելի է քննարկել դեպքի նախապատմությունն ու դրա կապը ամբաստանյալի անձնական հանգամանքների հետ:

Դատավոր Գողնիք.— Կարծում եմ՝ ավելի ճիշտ կլինի բողնել դա և մտածել, թե արդյոք ավելի ճիշտ չէ՝ նախ հրապարակել բացման վճռը:

3

Սողոմոն Մելիքյանը փորձում է իր ձայնով խեղողել միջանցքի աղմուկը, երբ դիմում է էրնստ Փառաքվինին, որի համար կարծես կարեոր է, որ առաջին հայացքից ճանաչվի որպես նախկին զինվորական:

— Ներեցե՞ք, պարոն Փառաքվին, որ այսպես անպաճույն դիմում մմ Ձեզ դատարանի միջանցքում: Որպես վկա՞ եք հրավիրված:

Մարդը մի անգամից շրջում է կարճ խուզած գլուխը: Նրա աչքերը սառնությամբ զննում են Հարցնողին: Ապա հատու կերպով գլուխ տալով՝ կրունկները շրխկոցով խփում է իրար:

— Եկել եմ վկայելու, որ ... թեև ևս հանգուցյալին իր կենդանության օրոք անձնապես չեմ ճանաչել:

Մելիքյանը շարունակում է հարցնել.

— Նախագահող դատավորը խոսեց Թուրքիայում հայերի ջարդերի մասին: Կարո՞ղ եք դա հաստատել, պարո՞ն փոխգնդապետ:

Դատարանի միջանցքում դարձյալ աղմուկով շրխկում են կրունկները:

— Պաշտոնաթո՞ղ փոխգնդապետ, պարո՞ն: Բնակվում եմ Մյունիսնում, Ռյումեր փողոց, թիվ 11: Կարող եմ վկայել, որ ... Հայերը Մուտքում, Ազերբայջանում և առավել ևս թաքվի գրավումից հետո Հալածվել են և երիտթուրքական վարչակարգի օրոք շատ են տառապել: Իմ կարծիքն է:

Առանց հրավիրի խոսակիցներին մոտենում է մեկ ուրիշը, որը նույնպես առկոչված է որպես վկա:

— Ներեցե՞ք, պարոնայք, բոլորովին պատահարար լսեցի ձեր խոսակցությունը: Թույլ տվեք ներկայանալ, մայոր էնդրես: Գործի հանգամանքներին կարող եմ հետեւյալն ավելացնել դեռևս տարիներ առաջ մի շարք փաստերի հիման վրա, որոնց գնո կանդրադառնամ, եկել եմ այն համոզման, որ սպանվածը՝ թաղեաթ փաշան, որպես Բարձր դռան ներքին գործոց նախարար, խիստ նպատակադրված ձգուում էր բնաջնջել թուրքիայում ապրող հայ ժողովրդին:

Մելիքյանի աչքից չի վրիպում միջանցքում կանգնածների հանկարծակի տեղաշարժը: Նա քաղաքավարի կերպով չնորհակալություն է հայտնում պաշտոնաթող փոխգնդապետ պարոն Փառաքվինին ու մայոր էնդրեսին՝ միաժամանակ նրանց հայտնելով, որ դատարանը հենց նոր ավարտել է խորհրդակցությունը, և որ բոլորը կրկին հրավիրվում են երդվյալների դատարանի դահլիճ:

— Մեկ վայրկյան, պարո՞ն, Թալեաթ փաշան արագ շրջանցում է բուռն վիճաբանող խոսակիցների մի խմբի ու բռնում Սողոմոն Մելիքյանի թերը: — Մեկ վայրկյան, ևս չեմ կարող ասվածը թողնել անպատճախան: Իմ այն ժամանակվա երիտթուրքական կառավարությունը, ենելով անվտանգության օրինական պահանջից, պարտավոր էր կայացնել հայերին տեղահանելու որոշումը: Որպես թուրքական պետության թշնամիներ, նրանք Ռուսաստանի հոժարակամօնականներն ու գործակիցներն էին:

Մելիքյանը զայրույթից շառագունում է:

— Լավ է գոնեն, որ Դուք տարրերություն եք գնում պետության ու ժողովրդի միջև: Թուրքական պետությունը Դուք էիք և ձեր նմանները, Թալեաթ փաշա: Թուրք ժողովուրդը դարեր ի վեր խաղաղ ապրել է հայ փոքրամասնության հետ: Իսկ ի՞նչ է նշանակում տեղահանություն: Այդ բառի նպատակն է՝ շեղել մարդկանց ուշադրությունը այն բանից, որ խոսքը անթիվ ջարդերի մասին է: Եվ այդ ամենը ձեր հրամանով:

Մինչեւ պատասխանելը Թալեաթ փաշան ամուր սեղմած պահում է խոսակցի թերը:

— Զարդե՞՞ր: Ի՞մ հրամանով, պարո՞ն: Ոչ երբե՞ք: Պատասխանատու նահանգապետներին հղած իմ հեռազերում խոսքը միայն հայերի աքսորի մասին է եղել: Ի դեպ, ինձ զարմացնում են այդ երկու զինվորական պարոններն իրենց արտահայտություններով: Այդ երբվանի՞ց են գերմանացի սպաները համարձակվում դատավճիռ կա-

յացնել բարեկամ պետության քաղաքական գործիչների հասցեին: Ես իմ պաշտոնավարման ժամանակ ճանաչել ու գնահատել եմ գերմանացի բարձրաստիճան շատ ուրիշ զինվորականների, քանի որ նրանք խոսքով ու գործով աջակցում էին մեր երիտրուրֆական կառավարությանը: Որինակ, գևներալ Լիման ֆոն Զանդերսը: Կամ նրա մեծարգո գործընկեր Կոլմար բարոն ֆոն Ֆեր Գոլցը:

Սողոմոն Մելիքյանը կտրուկ շարժումով արձակում է թեր Թալաթ փաշայի ձեռքից: Նա մեծ գժվարությամբ է զսպում իր Հուգ-մունքը:

— Ի՞նչ է զինվորականների մասին այս ամրող խոսակցության իմաստը, Թալաթ փաշա: Մի՛ ցրեք մարդկանց ուշադրությունը Ձեր սևիական պատասխանատվությունից: Դատավարության ընթացքում անպայման կխոսվի Ձեր Հեռազրերի մասին: Եկե՛ք նաևս լսենք նահանգային դատարանի վարիչ դ-ր Լեմբերգի փաստարկները...

4

Նախագահ (դատարանի խորհրդակցությունից հետո).— Ուզում ենք մախ ամրաստանյալից մանրամասնորեն լսել, թե ինչպե՞ս բանը հասավ քարդերին, և ինչերի՝ միջով անցավ նրա ընտանիքը: Ամրաստանյալը կարող է հատվածներով պատմել, իսկ հետո նրա պատմածը կքարգ-մանվի:

Ամրաստանյալ.— Երբ 1914 թ. պատերազմն սկսվեց, և հայերը զորակոշեցին: 1915 թ. մայիսին լուր տարածվեց, որ դպրոցները պետք է փակվեն, և քաղաքի ակամավոր մարդիկ և ուսուցիչները պետք է ուղարկվեն ճամբարներ:

Նախագահ.— Նրանց տարան հատո՞ւկ ճամբարներ, համակենտրոնացմա՞ն ճամբարներ:

Ամրաստանյալ.— Չգիտեմ, նրանց հավաքում էին ու տանում: Երբ նրանց շարասյուներով տարան, լուրեր տարածվեցին, որ առաջին տեղահանվածներին արդեն սպանել են: Իսկ հետո մի հեռազրից տեղեկացանք, որ Երզմկայի աքսորյալներից կենդանի է մնացել միայն մեկ եղանակ: Սարտիրոսյանը: Հունիսի սկզբին երաման տրվեց, որ բնակչությունը պետք է պատրաստ լինի՝ բռնելու քաղաքը: Մեզ նաև հայտնիցին, որ փողոն ու քանկարժեք իրերը կարող ենք պահ տալ իշխանություններին: Երեք օր անց՝ վաղ առավոտյան, բնակչները քաղաքից դուրս հանվեցին:

Նախագահ.— Մե՞ծ խմբերով:

Ամրաստանյալ.— Այն վայրկյանից, որ բնակիչներին քաղաքը թողնելու հրաման տվեցին, մարդկանց քաղաքից դուրս քեցին ու մի տեղ կուտակեցին: Այնուհետև քարավաններով ու շարասյուներով ամբոխն առաջ շարժվեց:

Նախագահ.— Բնակիչները իրավունք ունեի՞ն իրենց իրերը կամ ամրող ունեցվածքն իրենց հետ տանել:

Ամրաստանյալ.— Եթե կարելի ամեն ինչ վերցնել: Մարդիկ կարող էին տանել միայն այն, ինչ որ իրենց հազին ունեին:

Նախագահ.— Քանի՞ օր քայլեցիք:

Ամրաստանյալ.— Չգիտեմ, ծնողներիս առաջին օրն իսկ սպանեցին:

Նախագահ.— Ինչպե՞ս մահացան Ձեր ծնողները, քույրերն ու եղբայրները:

Ամրաստանյալ.— Երբ շարասյունը քաղաքից մի քիչ հեռացել էր, կանգնեցրին: Ոստիկանները սկսեցին թալանը՝ աշխատելով մարդկանց փողն ու քանկարժեք իրերը ձեռք գցել:

Նախագահ.— Ուրեմն պահակախո՞մքն էր, որ թալանում էր տեղահանվածներին:

Ամրաստանյալ.— Այո՛:

Նախագահ.— Ինչպե՞ս, ուրեմն, սպանվեցին Ձեր ծնողները:

Ամրաստանյալ.— Թալանի ժամանակ քարավանի առջևից կրակեցին մեզ վրա: Մի ոստիկան քաշեց-տարավ քրոջ, իսկ մայրս գոռում էր. «Կուրանա՞ն աշքերս»: Այլևս չեմ կարող հիշել այդ օրը, այլևս չեմ ուզում, որ ինձ հիշեցնեմ այդ օրվա մասին: Ավելի լավ է տեղմուտեղը մեռնեմ, քան թե շարունակեն նկարագրել այդ սև օրը:

Նախագահ.— Սակայն պետք է Ձեզ հիշեցնեմ, որ դատարանի համար շատ կարևոր է այդ դեպքերի մասին հենց ձեզանից լսել, քանի որ Դուք միակն եք, որ կարող եք մի քան ասել այդ մասին:

Ամրաստանյալ.— Ամեն ինչ տարան, ինձ էլ ծեծեցին: Հետո տեսա, թե ինչպես կացնով ճեղքեցին եղբորս գլուխը:

Նախագահ.— Ըրող քաշեցին-տարա՞ն: Նա ետ եկա՞վ:

Ամրաստանյալ.— Այո՛, քրոջ տարան ու բռնաբարեցին:

Նախագահ.— Նա շվերադարձա՞վ:

Ամրաստանյալ.— Ո՛չ:

Նախագահ.— Ո՞վ կացնով ճեղքեց Ձեր եղբոր գլուխը:

Ամրաստանյալ.— Երբ զինվորներն ու ոստիկանները սկսեցին կոտորածը, նրանց միացավ նաև ամբոխը: Այդ ժամանակ էր, որ զարդվեց կրտսեր եղբորս գլուխը: Իսկ մայրս ընկավ:

Նախագահ.— Ինչի՞ց:

Ամրաստանյալ.— Չգիտեմ, գնդակից թե ուրիշ բանից:

Նախագահ.— Որտե՞ղ էր Ձեր հայրը:

Ամրաստանյալ.— Հորս չտեսա: Նա առջևում էր, որտեղ նաև կորիվ էր տեղի ունենում:

Նախագահ.— Իսկ դուք ինքներդ ի՞նչ եղաք:

Ամրաստանյալ.— Ես զլսիս մի հարված զգացի ու ընկա: Թե ինչ եղավ հետո, շիմացա:

Նախագահ.— Այդպես ընկած մնացի՞ք այնտեղ, որտեղ ջարդը տեղի ունեցավ:

Ամրաստանյալ.— Թե ինչքան այնտեղ մնացի, չգիտեմ: Գուցե երկու օր: Երբ արքնացա, շուրջու շատ դիակներ տեսա, քանի որ այդ ժամանակ ամբողջ քարավանը կոտորել էին: Սկզբում շիմացա, թե որտեղ եմ, հետո դիակներից հասկացա իրողությունը:

Նախագահ.— Կարողացա՞ք պարզել, որ դիակների մեջ էին գտնվում Զեր ծնողները, քույրերն ու եղբայրները:

Ամրաստանյալ.— Մորս դիակը տեսա երեսնիվայր փոված, իսկ ավագ եղբարս դիակը ինձ վրա էր ընկած:

Դատախազ Գումիք.— Կարծեմ Զեր կրտսեր եղբա՞յրն էր, որի գլուխը ջարդել էին կացնով:

Նախագահ.— Դա Զեր կրտսե՞ր եղբոր դիակն էր:

Ամրաստանյալ.— Ո՛չ, ավագինը:

Նախագահ.— Այդպիսով, Դուք ընչազուրկ ու աճօգնական մնացիք. այդ ժամանակ ի՞նչ արեցիք:

Ամրաստանյալ.— Գնացի լեռները, մի գյուղ գտա: Այնտեղ մի ծեր կին կար, նա ինձ օրևան տվեց: Եվ երբ վերքերս լավացան, ինձ ասացին, որ այլս ինձ պահել չեն կարող, որ դա կառավարության կողմից արգելված է, և որ իրենց մոտ հայ պահողներին մահապատիժ է սպառնում:

Նախագահ.— Զեր հայրենակիցնե՞րն էին, որ Զեզ օրևան տվեցին:

Ամրաստանյալ.— Քրդեր էին: Լավ մարդիկ էին, նրանք էին, որ ինձ խորհուրդ տվեցին Պարսկաստան գնալ:

Նախագահ.— Որքա՞ն մնացիք այնտեղ:

Ամրաստանյալ.— Մեկ տարի կամ գուցե քիչ ավելի: Լուր եկավ, թե ուսները գրավել են Երզնկան: Ուզում էի գնալ այնտեղ՝ ազգականներ փետրելու: Բացի դրանից հաստատ գիտեի, որ տանը դրամ կար, ուզում էի այդ դրամը վերցնել:

Նախագահ.— Ի՞նչ գտաք այնտեղ:

Ամրաստանյալ.— Երբ տեղ հասա, տեսա բոլոր դրաները ջարդված, տան մի մասը քանդված, իսկ երբ ներս մտա, վայր ընկա:

Նախագահ.— Ուշաբակվեցի՞ք:

Ամրաստանյալ.— Այո՛, կորցրի գիտակցությունս:

Նախագահ.— Երկա՞ր տեսն այդ անգիտակից վիճակը:

Ամրաստանյալ.— Չեմ կարող ասել՝ որքան:

Նախագահ.— Բայց հետո ուշքի եկար. ի՞նչ արեցիք դրանից հետո:

Ամրաստանյալ.— Երբ ուշքի եկա, գնացի իսլամ ընդունած երկու հայ ընտանիքի մոտ. նրանք միակն էին, որ փրկվել էին ամբողջ քաղաքում:

Նախագահ.— Ուրեմն միայն երկու ընտանի՞ք գտաք նախկին հայ ընակչությունից: Նրանք էլ մահմենակա՞ն էին դարձել: Իսկ երբ ուսները գրավեցին Երզնկան, նրանք դարձյա՞լ հայ քրիստոնյա էին և որպես քրիստոնյա էին իրենց զգում: Դա՝ էր ամբողջ, ինչ մնացել էր Երզնկայի բնակչությունից:

Ամրաստանյալ.— Ընդամենը քսան հոգի, իսկ ընտանիք՝ միայն երկուսը:

Նախագահ.— Զեր հայրական տանը ուրիշ որևէ բան գտա՞ք:

Ամրաստանյալ.— Սի քանի գործիք. մնացածը այրված էր կամ քալանված: Սակայն փողը, որ քաղված էր հողի մեջ, դեռ տեղում էր:

Նախագահ.— Որքա՞ն փող գտաք:

Ամրաստանյալ.— 4.800 բուրքական ֆունտ:

Նախագահ.— Կյանքի որոշակի ծրագիր չունեի՞ք: Ինչո՞ւ եք այսքան շատ տեղից տեղ փոխադրվել:

Ամրաստանյալ.— Ես միշտ էլ ուզում էի սովորել սակայն մտքերս խառնաշփոր վիճակում էին և չի ուզում մի տեղ հաստատվել ու մնալ, քանի որ հակում չունեի դեպի որևէ մասնագիտություն:

Նախագահ.— Սալոնիկում ու Սերբիայում եղած ժամանակ դպրոց հաճախել ու սովորել եք:

Ամրաստանյալ.— Ո՛չ, Սալոնիկում եղել եմ ազգականներիս մոտ՝ այնտեղ բուժվելու նպատակով:

Նախագահ.— Ինչի՞ց էիր տառապում:

Ամրաստանյալ.— Ջղաձգության նոպաներ էի ունենում:

Նախագահ.— Քանի՞ անգամ են կրկնվել այդ նոպաները, երբ վերստին տեսաք Զեր հայրական տունը:

Ամրաստանյալ.— Երգնելայում երկու անգամ նոպա եմ ունեցել, բայց չգիտեմ, թե ինչ էին այդ նոպաները: Ամեն անգամ, երբ ջարդերի տեսարաններ էին աշքին առաջ գալիս, նոպաները կրկնվում էին:

Նախագահ.— Սերբիայում, Կոստանդնուպոլսում և Սալոնիկում ապրած ժամանակ ունեցել եք նման նոպաներ:

Ամրաստանյալ.— Այո՛:

Նախագահ.— Խսկ մարդիկ ո՞ւմ էին համարում այդ խժդությունների հեղինակ:

Ամբաստանյալ.— Թե ով էր դրանց հեղինակը, Կոստանդնուպոլսում եղած ժամանակ թերթերից տեղեկաց:

Նախագահ.— Ե՞րբ համոզվեցիք, որ Թալեար փաշան էր հեղինակը:

Ամբաստանյալ.— Երբ Կոստանդնուպոլսում էի, թերթերից տեղեկաց:

Նախագահ.— Որևէ բան իմացա՞ք այն մասին, թե որտեղ էր գտնվում Թալեար փաշան:

Ամբաստանյալ.— Կոստանդնուպոլսում ոչ: Կարծում էի, թե նա Կոստանդնուպոլսում է և քանվում է ինչ-որ տեղ:

Նախագահ.— Արդյոք այն ժամանակ արդեն մտածե՞լ էիր վրեժ լուծելու մասին այդ մարդուց, որը Զեր կարծիքով Զեր ընտանիքի տխուր ճակատագրի մեջըն էր կրում:

Ամբաստանյալ.— Ո՛չ:

Նախագահ.— Ժամանակն է, որ անցնենք բացման վճռի հրապարակմանը:

Պաշտպան Ֆոն Գորդոն.— Ուզում եմ հետևյալ հարցն ուղղել ամբաստանյալին, թե արդյոք նա թերթերում կարդացե՞լ է, որ Թալեար փաշան այդ խժդությունների համար Կոստանդնուպոլսի զինվորական դատարանի կողմից մահվան է դատապարտվել:

Ամբաստանյալ.— Կարդացել եմ և Կոստանդնուպոլսում էի գտնվում, ներ Զեմալը ջարդերի հեղինակներից մեկը, Կոստանդնուպոլսում արդեն կախաղան էր հանվել: Թերթերն այդ ժամանակ գրեցին, որ Թալեարն էնվեր փաշան նույնպես մահվան են դատապարտվել:

Պաշտպան Ֆոն Գորդոն.— Քա՞նի հայ բնակիչ ուներ Երզնկան:

Ամբաստանյալ.— Մոտավորապես քանի հազար:

Պաշտպան Ֆոն Գորդոն.— Հունիսի սկզբի՞ն էր, որ հրամանը կամ կարգադրությունը տրվեց, որ բոլոր հայերը տեղահանվեն, ըստ որում շարասյուներով, որոնց լայնությունը հինգից վեց մարդ էր:

Ամբաստանյալ.— Այո՛, այդպիսի հրաման տրվել է:

Պաշտպան Ֆոն Գորդոն.— Որքա՞ն էր շարասյան երկարությունը: Մե՞կ ժամվա:

Ամբաստանյալ.— Չգիտեմ, գուցե հինգ ժամվա:

Պաշտպան Նիմայեր.— Խնդրում եմ ամբաստանյալին հարցնել, թե նա արդյոք գիտե՞՝ որ հայերը 1908 թ. երիտրուքերի, մասնավորապես Թալեար ու Էնվեր փաշանների հետ մեկտեղ հեղափոխություն արնցին՝

իրենց ազգային հոլյուսերը կապելով նրանց հետ, սակայն հետո չափազանց հիասքափվեցին, երբ երիտրուքերը հայերի հետ սուլթան Համիլից ավելի վատ վարվեցին:

Ամբաստանյալ.— 1908 թ. ես դեռ շատ փոքր էի: Սակայն երբ մեծացան ավելի հասկացող դարձա, ինձ պատմեցին, որ հայերը համագործակցել են երիտրուքերի հետ, իսկ հետո չարաշար հիասքափել են, երբ, շնայած դրան, ջարդեր տեղի ունեցան, այսպես՝ 1909 թ. Աղանդում, որ զոհվեց քառասուն հազար մարդ:

5

Մինչ դատարանի ունկնդիրները երկար ընդմիջման համար միջնցքում իրենց տեղերն էին գրավում, թալեարթ փաշան, առանց ժամանակ կորցնելու, հուզված ձայնով դիմում է Սողոմոն Մելիքյանին:

— Ալլահը վկա: Ես խսկապես այլ բան էի սպասում: Ի՞նչի մասին են բանակցում այստեղ՝ գերմանական երդվալների դատարանի առաջ: Գուցե բարեհաճեկ ինձ բացատրել, պարո՞ն:

— Լիովին հավատում եմ ձեզ, թալեարթ փաշա, որ զոհ չեք հարցաքննության այսօրինակ ընթացքից: Վստահ եմ, որ ձեր պաշտոնավարման ժամանակ որևէ դատապար այսպիսի խորությամբ չեք գրադի սպանության կասկածի տակ եղողի հետ:

— Ասում եք՝ սպանության կասկածի՝ տակ եղող: Պարո՞ն, չե՞ս որ սպանությունը փաստ է: Թե՞ս ինչ-որ մեկը ուղում է վիճարկել, որ այս մարդը կեսօրից առաջ ինձ Հարդենբերգ փողոցում դարանակայել է և որ վախկոտի պես հետևեց զիսիս մեջ է կրակել: Բոլոր վկաներն այս դատարանում պետք է հարցաքննվեն սպանության առիթով: Ուրիշ ոչնչի մասին, քան թալեարթ փաշայի սպանության, պարո՞ն:

— Ոչնչից ոչինչ է ծնվում, ասում է ժողովուրդը: Ամբաստանյալն ի վերջո, թալեարթ փաշա, իր քմահաճույքից դրդված չէ, որ կրակել է Ձեզ վրա: Դատարանի նախագահն հետաքրքրում է Հանցագործության շարժադիմթը: Հասկացե՞ք վերջապես, որ այստեղ խոսքը նաև ավելի քան մեկ ու կես միլիոն հայերի բնածնիցման մասին է, մի բան, որ իր ժամանակին նահանգների պատասխանատուները Ձեր հրահանգով են կատարել: Եվ ճիշտ այդ կապակցությամբ է, որ այստեղ պետք է ցուցմունք տան մեծ թվով վկաներ: Ո՛չ, չեմ կարող ընդունել զատարանի հասցեին Ձեր պարսագաները: Ընդհակառակը, նախագահող դատապարը շատ լավ գիտե, թե ինչ է անում:

ՄԵԼԻՔՅԱՆՐ ԽՈՍԱԿԳԻՆ ԹՊՈՂՆՈՒՄ է այդպես կանգնած, իսկ ինքը մոտենում է մի տիկնոջ, որն այդ պահին ջերմացչից իրեն սուրճ է լցնել տալիս: Քիչ առաջ ՄԵԼԻՔՅԱՆՐ նրա Հայացքից ու շարժուձևից հասկացել էր, որ վերջինս ուղում է խոսել նրիտասարդի հետ:

— Ամբողջ ժամանակ հետեւում եմ Ձեզ, պարո՞ն: Երեսում է, որ դատավարությունը Ձեզ հոգեպես շատ է տանջում: Ի դեպ, ինձ ևս, ինչպես և մյուս բոլոր ունկնդիրներին:

Խմելուն հատկացված փոքրիկ դադարը Սողոմոն ՄԵԼԻՔՅԱՆՆ օգտագործում է տիկնոջը ներկայանալու համար:

— Իսկ ևս Թորա ֆոն Վեղել-Ցարլիսերն եմ, պարո՞ն: Կողքինս տիկին էլվերսն է: Գիտե՞ք, պարո՞ն, տիկին էլվերսն ու ևս այսօր վաղ առավոտից ոտքի վրա ենք: Ստամոքսը, անշուշտ, սնունդ է պահանջում: Ձեզ բուտերբորդ կարո՞ղ եմ առաջարկել: Տիկին էլվերսը Ձեզ մի բաժակ էլ սուրճ կտա:

— Շնորհակալություն, չեմ ուղում,— զլուխը թափահարելով ասում է ՄԵԼԻՔՅԱՆՐ և անմիջապես նյութին է անցնում. — Ճի՞շտ լսեցի, տիկին ֆոն Վեղել-Ցարլիսերգ: Դուք և տիկին էլվերսը տվյալ ժամանակաշրջանում թուրքիայի այդ նահանգներում աշխատել եք որպես բուժքուրեր, այնպես չե՞՞: Ինձ հետաքրքրում է, թե որոնք են Ձեր անձնական դիտարկումները, որ կարող եք հայտնել դատարանին:

— Ո՞չ ուղղակի անձնական դիտարկումներ: Ես միայն փոխանցելու եմ թուրք զինվորների ասածները: Նրանք մեզ պատմեցին, թե ինչպես են կոտորել հայ կանանց ու երեխաներին: Եվ, ի պատասխան մեր զարհուրանքի, նրանք միայն ասացին. «Ի՞նչ աննենք: Զէ՞՞ որ դա Բարձր դռան հրամանն է»: Նրանք պատմեցին, որ բոլորին սպանելու համար չորս ժամ է պահանջվել: Եզներ լծած սայլերը պատրաստ են եղել դիակները զետը տանելու համար: Այստեղ կառքերը ուղղակի գետի մեջ ևն չընել, և ջուրը մնոյաներին քշել-տարել է գևտնիվայր: Թուրք զինվորներից մեզը մեր գերմանացի դեղագործ Գելզենին ասաց. «Մեր գործը լավ չարեցի՞՞նք»:

Մի խոր կնճիռ է ծվարում ՄԵԼԻՔՅԱՆԻ հոնքերի միջև, երբ նա հավաստիանում է.

— Հարգելի՝ տիկին, գերմանացի դեղագործ Գելզենի ասված խոսքերը դուք կրկնում եք որոշակի շեշտադրությամբ:

Տիկին ֆոն Վեղել-Ցարլիսերգը բարձրացնում է ուսերը: Նա ակներևուն զժվարանում է անկեղծ պատասխան տալ:

— Ինձ սիսալ չհասկանաք: Այդ օրերին, չնայած մեր ակնհայտ վրդովունքին, չի կարողանում ձերբագատվել սոսկալի այն զգա-

ցողությունից, որ և՛ տարարախտ հայերը, և՛ զագանացած թուրքերը այն կարծիքին էին, որ մենք՝ գերմանացիներս, հավանություն ենք տալիս աննկարագրելի այդ իրադարձություններին ...

ՄԵԼԻՔՅԱՆՐ տեղի չի տալիս:

— Բացատրություն ունե՞ք, տիկին ֆոն Վեղել-Ցարլիսերգ այս Ձեր ննթադրության համար:

— Ոչ, բայց միգուցե ...

Կինը մի պահ վարանում է: Միայն մի քանի րոպե է, ինչ նա ճանաչում է իր խոսակցին: Ո՞վ գիտե, թե նա ինչպես կընդունի, եթե ասի ամբողջ ծշմարտությունը: Սովորաբար ամեն ինչի մասին կարելի է խոսել, բայց ոչ ամեն տեղ ամեն ինչի մասին:

— Ես ո՞չ գերազույն դատարան, ո՞չ էլ երդյաներին եմ ներկայացնում, հարգելի տիկին, — անկեղծորեն հանգստացնում է Սողոմոն ՄԵԼԻՔՅԱՆՐ: — Ինձ կարող եք հանգիստ պատմել, թե ինչ ննթադրություններ ունեք վեց տարի առաջ կատարվածի մասին:

— Այո՛, իհարկե, — սմափկում է տիկին ֆոն Վեղել-Ցարլիսերգ: — Ինչպես բոլորը գիտեն, մեր կայսրն ու Բարձր դուռը պատերազմի ժամանակ դաշնակիցներ էին, պարո՞ն: Իսկ գերմանական կառավարությունը (գոնե ինձ միշտ այդպես է թվացել) բավարար լրջությամբ չի ընդդիմացել այդ ջարդերին: Սակայն ուզում էի մի բան էլ ասել թուրքիայում մեր կատարած դիտարկումների մասին:

ՄԵԼԻՔՅԱՆՐ լարգած սեղմում է շրթունքները: Այն, ինչ նա մինչ այժմ գիտի 1915 թ. արյունահեղությունների մասին, լսել էր հայ պապից: Սակայն գերմանացի ազնվական տիկինը դեպքերից անմիջականորեն տուժած մեզը չէ, ուստի նրա ասածը դատարանը զնաւտելու է որպես անկողմնակալ ցուցմունք:

— Նատ լավ հիշում եմ, երիտասարդ: 1915 թ. Հունիսի 18-ի երեսկոն էր. կանգնած էինք արդեն հիշատակված մեր բարեկամ Գելզենի տան առաջ: Մեզ մոտենցավ մի ոստիկան, որը հայերին քշողներից մեկն էր: Քշել, ահա ինչպես էին որակում նրանք ամեն անգամ իրենց սոսկալի արարքը: Այդ ոստիկանն ուրեմն պատմեց, որ նրանք ճանապարհին ամեն օր տասից տասներկու տղամարդ են սպանել ու ձորը ննտել: Ճանապարհին՝ ամեն զյուղում, նորանոր կանանց են հափշտակել ու բռնարարել: Անձամբ ինքը, կարեկցանքից դրդված, երեք մերկ կնոջ դիակ է թաղել և հույս ունի, որ ամենակարող Աստված մի օր նրան այդ բարի գործի համար կփոխհատուցի:

ՄԵԼԻՔՅԱՆՐ խոր չունչ է քաշում: Ապա համոզվելու համար կրկին հարցնում է.

– Եվ այդ ամենն անձա՞մբ եք լսել, հարգելի՛ տիկին:

Տիկին ֆոն Վեղել-Յարլսերգը զլսով հավանության նշան է ա-նում: Նա իր նկարագրությունը դեռ չի ավարտել:

– Հունիսի 19-ի առավոտյան, երր մաշվան դատապարտվածներին մեր մոտով անցկացրին, մնաք նրանց հետ քաղաք գնացինք: Խմբում միայն երկու տղամարդ կար: Կանանցից մի քանիսը հոգեկան հիվանդ էին դարձել: Նրանցից մեկը անդադար գոռում էր. «Ուզում ենք մուտքան դառնալ: Ուզում ենք գլուխացի դառնալ: Ինչ ուզում եք, կղառնանք: Միայն փրկե՛ք մեզ: Մեզ տանում են Կամախ, այնտեղ կտրելու են մեր վզերը»: Տիկին ֆոն Վեղել-Յարլսերգը տարված է հիշողություններով: Նա հեծկլտում է:

– Մրտիդ այդքան մոտ մի՛ ընդունիր, սիրելի՛ս, – տիկին էլվերսը մի թևով գրկում է արտասվող կնոջն ու նրան թաշկինակ մեկնում, որ արցունքները սրբի:

– Զավում եմ, – քրթմնջում է Սողոմոն Մելիքյանը և զլուխ է տա-լիս մեղավորի պես:

Մակայն տիկին ֆոն Վեղել-Յարլսերգը անսպասելի արագու-թյամբ հավաքում է իրեն: Նա ուզում է մեջքը և կարծես վերևից ներքեւ նայում իր առջև կանգնած երիտասարդին:

– Այն ժամանակ, պարոն, մնաք երկար սպասեցինք, մինչև մեր աչքի առաջով անցավ-գնաց սրտաճմիկ կերպարանք ունեցող մարդ-կանց այդ երթը: Մահվան դատապարտվածների ամբոխի թվում քայ-լում էին բազմաթիվ երեխաներ. նրանցից մի քանիսը աչքի էին ընկ-նում բաց գույնի մազերով ու մեծ, կապույտ աչքերով, որոնք մեզ էին նայում մահասարսուր լրջությամբ ու այնպիսի բնազդային վեհու-թյամբ, որ կարծես նրանք այստեղ, երկրի վրա, արդեն աւել դատաս-տանի հրեշտակներ լինեին: Մի հույն կառապան ասաց, որ նրանց բոլորին իրար են կապկապել ու մի բարձր ժայռից նետել Եփրատի ալիքների մեջ՝ մահվան բերանը: Մարդիկ հազարավոր դիակներ են տեսել, որ քշվում էին գետի հորձանքով ...

Քանի որ դատարանի կատարածուն դատական քննության շարու-նակությունն է հայտարարում, Մելիքյանը հոգատարությամբ դա-տարանի դահլիճ է ուղեկցում հեծկլտանքներից ցնցվող տիկին ֆոն Վեղել-Յարլսերգին:

6

Նախագահ. – Նախ ուզում եմ հրապարակել բացման վճիռը:

Զարտաւդար (ընթերցում է բացման վճիռը). – Սեխաննիկայի բաժնի ուսանող Սալոնն Թեյլիրյանը՝ Շառլորենբուրգի Հարդենբերգ փողոցի 37 տան բնակիչ, Դիտմանի մոտ, 1921 թ. մարտի 16-ից նախաքննական կալանքի տակ, ծնված 1897 թ. ապրիլի 2-ին Թուրքիայի Բազարի ա-վանում, թրահպատակ և հայ բողոքական: Ամբաստանվում է 1921 թ. մարտի 15-ին Շառլորենբուրգում բուրքական նախկին մեծ վեզիր Թալեար փաշային դիտավորյալ սպանելու և սպանությունը կանխա-մտածված կատարելու համար: Ամբաստանված է Թրեական օրենսգրքի 211-րդ հոդվածով: Նախաքննական կալանքը շարունակվում է վերո-հիշյալ հիմունքներով: Բեռլին, ապրիլի 16, 1921 թ., նահանգային երրորդ դատարան, 6-րդ պատժախուզուց:

Նախագահ (բարգմանչին). – Հայտնե՛ք ամբաստանյալին, որ բաց-ման վճիռով իրեն մեղադրում են Թալեար փաշային կանխամտածված սպանելու համար:

Ամբաստանյալ. – (Լուս է):

Նախագահ. – Եթե այս մեղադրանքին «այս» կամ «ոչ» պատասխանը տալու լինեիք, ի՞նչ պատասխան կտայիք:

Ամբաստանյալ. – Ո՛չ:

Նախագահ. – Ուրիշ առիթներով Դուք Զեզ այլ կերպ եք պահել: Դուք խոսովանել եք, որ հանցանքը կատարել եք կանխամտածված կեր-պով:

Ամբաստանյալ. – Ե՞րբ եմ ասել:

Նախագահ. – Ուրին այսօր հայտարարում եք, որ չե՞ք ասել:

Պաշտպան ֆոն Գորդոն. – Խննդում եմ հարցնել ամբաստանյալին՝ ինչո՞ւ նա իրեն մեղավոր չի ճանաչում:

Նախագահ. – (Հարցն ուղղում է ամբաստանյալին)

Ամբաստանյալ. – Ինձ մեղավոր չեմ ճանաչում, որովհենակ խիղճն հանգիստ է:

Նախագահ. – Ինչո՞ւ է Զեր խիղճը հանգիստ:

Ամբաստանյալ. – Ես մարդ եմ սպանել, սակայն մարդասպան չեմ եղել:

Նախագահ. – Ասում եք, որ խղճի խայր չե՞ք զգում: Զեր խիղճը մա-քո՞ւ է: Դուք Զեզ չե՞ք կշտամբում: Բայց Դուք Զեզ պետք է հարցնեք՝ ցանկացել եք սպանել Թալեար փաշային:

Ամբաստանյալ.— Հարցը չեմ հասկանում: Չէ՞ որ ես նրան արդեն սպանել եմ:

Նախագահ.— Ուզում եմ ասել՝ ծրագիր ունեցել եք:

Ամբաստանյալ.— Ես որևէ ծրագիր չեմ ունեցել:

Նախագահ.— Ե՞րբ արթնացավ Ձեր մեջ այդ միտքը:

Ամբաստանյալ.— Դեպքից մոտ երկու շաբաթ առաջ ես ինձ շատ վատ էի զգում, և կոտորածի տեսարանները դարձյալ եկան աչքերիս առաջ: Մորս դիակը տեսա: Նա ոտքի ելավ, ինձ մոտեցավ ու ասաց. «Դու տեսար, որ Թալեաթն այստեղ է և այդքան անտարբե՞ր ես: Դու այլևս ին որդին չես»:

Նախագահ (ամբաստանյալի ասածը կրկնելով երդվյալներին).— Այն ժամանակ ի՞նչ արեցիք:

Ամբաստանյալ.— Անմիջապես արթնացա ու որոշեցի սպանել այդ մարդուն:

Նախագահ.— Ինչպե՞ս բանը հասավ արարքին:

Ամբաստանյալ.— Որովհետև մայրս էր ասել: Այդ մասին էի մտածում, երբ մարտի 15-ին Թալեաթին տեսա ...

Նախագահ.— Որտե՞ղ տեսար նրան:

Ամբաստանյալ.— Սենյակումս ընթերցելս հետ և առաջ էի անում, երբ տեսա, որ Թալեաթը դուրս եկավ:

Նախագահ.— Տեսար, որ Թալեաթը դո՞ւրս եկավ:

Ամբաստանյալ.— Նախ նրան իր բնակարանի պատշգամբում տեսա, հետո նա դուրս եկավ: Երբ դուրս եկավ, դարձյալ հիշեցի մորս, կրկին տեսա նրան իմ առջև և ապա տեսա այն մարդուն, որն ին ծնողների, քույրերի ու եղբայրների նահկան պատճառն էր:

Նախագահ.— Մտովի տեսար Ձեր ազգականներին և մտածեցիք, որ Թալեաթ փաշա՞ն է պատասխանառու քափած արյան համար, ոչ միայն Զերոնց, այլև Ձեր հայրենակիցների արյան համար: Գիտեի՞ք, որ Թալեաթ փաշան դուրս է գալու:

Ամբաստանյալ.— Ո՛չ:

Նախագահ.— Հետո ի՞նչ արեցիք:

Ամբաստանյալ.— Այն պահին, երբ նա դուրս եկավ, վերցրի ատրճանակս, վագեցի հետևից ու կրակեցի:

Նախագահ.— Թիկունքի՞ց կրակեցիք:

Ամբաստանյալ.— Այո՛:

Նախագահ.— Ատրճանակի փողը զիսի՞ն պահեցիք:

Ամբաստանյալ.— Այո՛, շատ մոտ:

Նախագահ.— Հետո ի՞նչ եղավ:

Ամբաստանյալ.— Միայն այսքանը գիտեմ (չեմ կարող ճշգրիտ նկարգրել), որ Թալեաթ փաշան գետին ընկավ, տեսա, թե ինչպես է նրա դեմքից արյունը հոսում, և մարդիկ կանգնած էին շորջը:

Վկա Նիկողայոս Եսեն, վաճառական Ծաղլորնորորդից, 40 տարեկան, բողոքական, երդվում է:

Նախագահ.— Դուք ականատե՞ս եք:

Վկա.— Այո՛:

Նախագահ.— Մեզ կպատմե՞ք, թե ինչ տեսար:

Վկա.— Երեքշարքի էր, մարտի 13-ը, առավոտյան ժամը 11-ին անցնում էի Հարդենքերգ փողոցով Վիրենքերգ փողոց գնալու համար՝ այցելու տարբեր հաճախորդների: Մսամբերգի գործարանի ներկայացուցիչ եմ: Իմ առջևից գնում էր մոխրագույն վերարկուով մի պարոն: Նա գնում էր դանդաղ, զբոսնողի քայլվածքով: Հանկարծ այս պարոնը ամբաստանյալը, արագ քայլերով իմ կողքով անցավ: Ձեռքը գրպանը տարավ:

Նախագահ.— Ո՞ր էիք գնում: Ազ կողմո՞վ էիք քայլում:

Վկա.— Այո՛, կենդանաբանական այգու ուղղությամբ:

Նախագահ.— Վերարկուով պարո՞նի հետևի՞ց:

Վկա.— Այո՛:

Նախագահ.— Այդ պահին ամբաստանյալը մայրով՝ Ձեր կողքի՞ց անցավ:

Վկա.— Այո՛:

Նախագահ.— Նա ատրճանակը հանեց. ո՞ր գրպանից:

Վկա.— Այդքան ստույգ չեմ կարող ասել, կարծում եմ աջ ծոցագրապանից: Ամեն դեպքում ատրճանակ էր: Հանեց ու շատ մոտիկից կրակեց պարոնի ծոծրակին, և վերջինս վայրկենապես երեսնիվայր փուեց զետին: Գանգը բացվեց: Ամբաստանյալը գետին նետեց ատրճանակն ու փորձեց փախչել: Առջկից գնում էր մի տիկին: Նա ուշաբավկեց: Ես նրան նախ բարձրացրի, կարծելով, որ նա էլ է վիրավորվել: Հետո վագեցի ամբաստանյալի հետևից և Ֆազան փողոցում քոնցի նրան: Բնականաբար մեծ բազմություն հավաքվեց, մարդիկ ամեն կողմից խելազարի պես հարվածում էին ամբաստանյալին: Մի պարոն բանալիով անընդհատ հարվածում էր զլիսին: Մեկն էլ գորում էր. «Պինդ պահե՛ք մարդասպանին»: Ապա նս ամբաստանյալին կենդանաբանական այգու մոտ գտնվող պահակային ոստիկանի մոտ տարա: Նա ծխել ուզեց: Այստեղ ևս շատ մարդ կար, և նրան կրկին ծեծեցին:

Նախագահ.— Համոզվա՞ծ եք, որ ամբաստանյալը մայրով Ձեր կողքից անցավ:

Վկա.- Այո՛:

Նախազահ.- Եվ նա հետևի՞ց եկավ:

Վկա.- Այո՛:

Նախազահ.- Եվ կրակեց պարոնի ծոծրակի՞ն:

Վկա.- Այո՛:

Նախազահ.- Այնպես չէ ուրեմն, որ նա փողոցի դիմացից եկավ և ապա Թալեաք փաշային իրենից առաջ քողնելով՝ կրակեց հետևից:

Վկա.- Ո՛չ:

Նախազահ.- Նա դիմացի՞ց նայեց Թալեաքին:

Վկա.- Ո՛չ, ես դա վիճարկում եմ: Ամբաստանյալը արագ քայլերով մոտեցավ, առանց մի խոսք ասելու հանեց ատրճանակն ու կրակեց պարոնի ծոծրակին:

Նախազահ.- Եվ նա անմիջապե՞ս վայր ընկավ:

Վկա.- Նա ընկավ դեմքի վրա:

Նախազահ.- Ինչ-որ պահ ամբաստանյալը տեղում մնա՞ց:

Վկա.- Ո՛չ:

Նախազահ.- Խսկոյն փախուստի՞ դիմեց:

Վկա.- Այո՛: Նա մտավ Ֆագան փողոցը և ուղղվեց դեպի Կանտի փողոց:

Նախազահ.- Ո՞ր կողմից էր քայլում տիկինը:

Վկա.- Տիկինը գնում էր այդ պարոնի առջևից:

Նախազահ.- Ո՞չ նրա կողքից:

Վկա.- Ո՛չ:

Նախազահ.- Նա պարոնի հե՞տ էր:

Վկա.- Ո՛չ:

Նախազահ.- Եվ նա ուշաբափեց:

Վկա.- Այո՛:

Նախազահ.- Մոտակայքում կա՞ր ուրիշ մեկը:

Վկա.- Ո՛չ:

Նախազահ.- Դուք առաջի՞ն էիք դիակի կողքին:

Վկա.- Այո՛: Ես նախ տիկնոջը քարձրացրի:

Նախազահ.- Եվ դուք հետո՞ միայն նկատեցիք, որ պարոնը մեռած է:

Վկա.- Այո՛:

Նախազահ.- Ուրիշնե՞րն էլ մինչ այդ մոտեցան:

Վկա.- Այդ ժամանակ անցնում էր կահույքի մի մերենա, և ապա մի պարոն իր ծառայի հետ դուրս եկավ առանձնատնից:

Նախազահ.- Այլ հարցեր կա՞ն վկային: Չկան:

Վկա ոստիկանապետ Փառլ Ծոլց՝ 47 տարեկան, Շառլորենբուրգից: Երդվում է:

Նախազահ.- Ի՞նչ ունեք ասելու դեպքի մասին:

Վկա.- Այդ օրն ինձ զանգահարեցիմ՝ հայտնելով, որ Հարդենբերգ փողոցում սպանություն է կատարվել և այն, որ մարդասպանն արդեն ձերքակալված է: Գնացի դեպքի վայրը ու այնտեղ տեսա սպանվածին՝ մայթի վրա ընկած: Վայրը շրջափակվեց պահակային ոստիկանների կողմից:

Նախազահ.- Ինքներդ սեփական դիտարկումներ չկատարեցի՞ք դեպքի մասին:

Վկա.- Ո՛չ:

Նախազահ.- Դուք դիակո՞վ գրադկեցիք, թե՞ հանցագործով:

Վկա.- Զրադկեցի դիակով և հանեցի նրա իրերը, իսկ հանցագործին այլևս չտեսաւ:

Նախազահ.- Հայտարարությունը, որ արել եք, հիմնված է ուրեմն միայն այն անձանց ցուցմունքների վրա, որ Դուք գտել եք տեղում: Անձնական դիտարկումներ, ուրեմն, չե՞ք կատարել:

Վկա.- Ո՛չ:

Նախազահ.- Այլ հարցեր կա՞ն վկային: Չկան:

7

Սողոմոն Մելիքյանը մոտենում է տարիքուտ մի մարդու, որը դատարանի միջանցքում մանրագայլ ու անհանգիստ ետ ու առաջ է գնում:

— Պարոն Հյուպատո՞ս:

— Խնդրեմ:

Մելիքյանը ներկայանում է, ապա հարցնում:

— Դուք Հայտնի եք որպես թուրք-Հայկական Հարաբերությունների փորձագետ: Արտաքին գործոց նախարարություն Հզած Ձեր մի Հեռագրում Հայերի նկատմամբ կիրառվող վայրագությունների կապակցությամբ պահանջել էիք (Թույլ տվելք, պարոն Հյուպատոս, Ձեր խոսքը որպես բացառություն մեջ բերեմ), որ գերմանական մամուլում տեղ չգտնեն թուրքերի հերքումները, որի հետևանքով կարող է ստեղծվել գերմանացիների՝ այդ վայրագությունների համաձայն լինելու պատրանքը:

— Որտեղից Ձեզ այդ տեղեկությունը, պարոն, — վրդովկած առարկում է Հյուպատոսը: Խոսելիս նրա ցից փորը ՀաղիկՀաղ ծածկող

բաճկոնի վրա կախված ժամացույցի ոսկե շղթան դես ու դեն է շարժվում: — Ի դեպ, Հետևելով արտաքին գործոց նախարարության սահմանած կարգին, ևս Հրաժարվում եմ խոսել այդ գործի մասին որպես անհատը անհատի Հետ: Իսկ դատարանում ցուցմունք կտամ լոկ փաստերի վրա Հենվելով՝ բացառելով ամեն տեսակի կողմնակալ կարծիք:

Փոքրիկ մարդը շրջվում է ու վերսկում իր զբոսանքը դատարանի միջանցքում: Սակայն Սողոմոն Մելիքյանից հեշտ չէ ազատվել: Նա իր քայլվածքը հարմարեցնում է վերջինիս քայլվածքին:

— Դուք առիթ չեք ունենա ցուցմունք տալու, պարո՞ն հյուպատոս:

— Համեցե՞ք, — հյուպատոսի աչքերի չուրջ զղային ցնցումները սաստիկանում են, երբ նա կանգ է առնում: Մելիքյանը զիմով է առնում:

— Նախագահող դատավորի առաջարկով լրացուցիչ ապացույցներ չեն ներկայացվելու, քանի որ դատարանն ու երդվալները հայտնել են, որ իրենց վճռի կայացման համար արդեն իսկ հավաքված փաստերը բավարար են և նոր ապացույցների կարիք չունեն:

— Իսկ ո՞վ եք դուք, որ պայծառատեսի պես... — Նեղ ուսերով մարդը կանգ է առնում: Բայց նա դարձյալ կորցնում է մտքի թևը, երբ վերսկում է խոսել. — Բայց դա կիններ մի ...

— Հանգիստ կարող եք նստել էզեր գնացող հաջորդ գնացքը, պարո՞ն հյուպատոս, — խորհուրդ է տալիս Մելիքյանը, — Ձեզ ցանկանում եմ հաճելի տունդարձ:

Հյուպատոսը Հեռանում է Սողոմոն Մելիքյանից, որն անմիջապես ընկնում է կատաղությունից փնչացող Թալեսաթ փաշայի ձեռքը:

— Ինչի՞ մասին էր Հյուպատոսի Հետ այդ միջնախաղը, պարո՞ն: Ի՞նչ է, ուզում եք մարդկանց ուշադրությունը շնորհ ամբաստանյալի վերջին ցուցմունքից: Այն, որ նա ահազին ոսկի է ստացել իմ նկատմամբ եղկալի այդ մահափորձը կատարելու համար, Դուք գիտակցաբար չլսելո՞ւ եք տալիս:

— Թույլ տվեք Հավաստիացնել, Թալեսաթ փաշա, որ ևս ոչ մի բառ բաց չեմ թողնում այն ամենից, ինչ այստեղ ասվում է Ձեր դեմ:

— Ինչ ասվում է իմ դեմ: Ե՞ս ևմ դատարանի առաջ ամբաստանվածը, թե՞մ մեկ ուրիշը:

Ցցուն կեցվածքով լայնաթիկունք մարդը նման է վրիժառության հսկայական հրեշտակի: Միայն կատաղությունից դողացող բեղերի ծայրերն են, որ չեն պատշաճում սուրբ պատկերին:

— Այս, այդ խեղճ հայերի հոգին: Ապա մի Հարցը՝ք, պարո՞ն, դատարանի դահլիճում նստած գերմանացիներին, թե ո՞վ այդքան

ոսկի ունի կամ երբեք կարող է ունենալ կյանքում: Ո՞չ, այդ մարդը վարձու մարդասպան է: Հայ վաճառականները մինչեւ վերջին կաթիլը ծծել են իմ թուրք Հայրենակիցների արյունը: Այստեղից էլ բոլոր թուրքերի արդարացի իրավունքը՝ ապստամբելու այդ խարերա քրիստոնյա խուժանի դեմ:

Մելիքյանը րարձրացնում է ցուցամատը՝ նախազգուշացնելով:

— Թալեսաթ փաշա, այժմ արդեն Դուք զրպարտում եք թուրք ժողովրդին: Ամբողջ աշխարհը գիտե, որ նույնիսկ 1895—96 թթ. կոտորածները վարչական միջոցառումներ էին: Հուզմունքից երիտասարդի կոկորդը սեղմվում է: Միայն մի քանի անգամ ուժեղ հազարուց հետո նա կարողանում է շարունակել:

— Խարերա քրիստոնյա խուժա՞ն: Իսկ ինչպես պատահեց, որ կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի կամ Հալեպի հարուստ հայ վաճառականներն էին, որ բոլոր կոտորածներից անմաս մնացին: Ասեմ ձեզ, Թալեսաթ փաշա, նրանք ի վիճակի էին փրկազին վճարել: Բայց նրանք, ովքեր չունեին ոչինչ տալու, բացի մի քանի կտոր ունեցվածքից, ինչպես, օրինակ, զյուղացիներն ու արհեստավորները, նրանց բոլորին քշեցին անապատ ու ճամբարներում ոչնչացրին: Հարյուր հազարավոր տղամարդ, կին ու երեխա անխղճորեն ընածնջեցին:

Երիտթուրքերի ներքին գործոց նախկին նախարարն անդրդվելի է մնում: Խոր ընդգում արտահայտելով նա հակածառում է:

— Կարծես այդ, այսպես կոչված, համակենտրոնացման ճամբարները իմ հայտնագործությունը լինեին: Մի՞թև անզիացիներն այլ կերպ վարվեցին բուրերի Հետ Հարավային Աֆրիկայում: Մի՞թև իմ մնղքն է, թե ինչպես են իմ ստորագրյալները տեղերում մեկնարանել ու կատարել Հրամաններս:

— Մի՛ արդարացեք, Թալեսաթ փաշա: Զէ՞ որ Կոստանդնուպոլսում ուազմական դատարանն ապացուցել է, որ Դուք մեղադրանքի առաջին կետերից առաջինի համար, որ Հայերի կոտորածներն էին, լիովին պատասխանատու եք: Ձեր գեմ կայացած 1919 թ. հուլիսի 5-ի մահավճիռը բավական խոսուն է: Մելիքյանը աջ ձեռքով օդի մեջ մի օդակ է գծում, որը զցվելու էր խոսակցի վիզը, եթե Հանցակից ընկերները նրան ժամանակին երկրից չհանեին, որպեսզի Փարիզով ծածուկ Բենյանում հայտնվեր: Ըստ որում Հարց է ծագում, թե ինչպես 1921 թ. ո՞չ թուրքական, ո՞չ էլ գերմանական զաղտնի ծառայությունը չգիտեր, թե որտեղ էր գտնվում ներքին գործերի փախստական նախկին նախարարը իր կողոջ ու ծառաների Հետ: Նատ ավելի հավանական է, որ երկու կողմն էլ կառավարական մակարդակից վեր,

Հանդուրժում էր Թալեաթ փաշայի գաղտնի վտարանդիությունը: Զէ՞ որ նրա զեմ մահապատիժ կայացնելով Առաջին աշխարհամարտի հաղթական ուժերի ցանկությունները կատարված էին ...

– Դա իրավական սլսալունք էր, – գոռում է Թալեաթ փաշան վրդովկած: – Պատմական մի թերավճիռ: Որովհետև այն կայացել է թուրք ժողովրդի կամքին Հակառակ, պարոն:

– Հիշո՞ւմ եք խորհրդարանի Հայ անդամ Վարդգեսին, – անսպասելի հարցնում է Սողոմոն Մելիքյանը:

Օձիքն ազատած մարդու մի ժայիտ է տարածվում Թալեաթ փաշայի դմբին: Մի՞թև նրա գերիմաստուն խոսակիցը չի կուահում, որ հիշատակելով Վարդգեսի նման մի մարդու՝ նա ջուր է լցնում Թալեաթ փաշայի ջրաղացին:

– Հրաշալի՞ է, պարոն, որ այս առիթով հիշեցիք Վարդգեսին: Ես՝ Թալեաթ փաշաս, իրեւ թե Հայատյացս, իսկապես Հայ բարեկամ ունեի: Անշուշտ անվիճելի է, որ մենք՝ ևս, որպես երիտթուրք, նա, որպես Հայ, միասին Հեղափոխություն արեցինք, պարոն: Մենք բացայտորեն օգնեցինք իրար անգամ ընտրությունների ժամանակ: Պատկերացնում եմ, որ սա ձեր հնարած արյունախում Թալեաթ փաշայի մասին պատմության հետ անհամատելի է:

Մելիքյանը անձնատուր չի լինում: Նման իրադրություններում նա գիտակցում է Հոգու ամեն մասնիկով Հայոց պատմության և իր մեծ Հոր կյանքի հետ միաձուլվելու արժեքը:

– Իսկ ի՞նչ պատահեց 1915 թ. ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը:

Անշարժ դեմքով Թալեաթ փաշան նայում է խոսակցին: Արդյո՞ք այս դաժան մարդը չի կարողանում հիշել կամ զուցե հիշողությունից դուրս՝ ուղղում վանել այն ամենը, ինչի Համար պատասխանատու էր Բարձր դռան ներքին գործոց նախարար եղած ժամանակ:

– Քանի որ Դուք չեք կարողանում հաղթահարել հիշողության որոշ կորուստներ, Թալեաթ փաշա, ևս Ձեզ կհիշեցնեմ, – շարունակում է երիտասարդը, – որ այդ գիշեր ձերբակալվեց ու աքսորվեց 235 Հայ, որոնք այդ ժողովրդի ամենակարկառուն մտավորականներն էին: Իսկ հետագա օրերին Հարյուրավոր ուրիշ մարդիկ նրանց հետեւց դեպի մահ գնացին: Այդ օրվանից 1915 թ. ապրիլի 24-ը ամբողջ աշխարհում հիշատակի ու ոգեկոչման օրն է այն բոլոր Հայերի, որոնք զոհ գնացին նախ սուլթան Համիդի, ապա Ձեր, իսկ հետո Քեմալ փաշայի կազմակերպած ջարդերին:

– Պի՞՛ւ – Թալեաթ փաշան կատաղած փնչացնում է քթանցքերից այսպես, որ բեղերի ծայրերը շարժվում են: – Ամբողջ աշխարհի հա-

յերի համար հիշատակի ու ոգեկոչման օ՞ր: Ահա սրա համար է, որ մենք՝ թուրքերս, Հայերին մեղադրում ենք: Այսպես կոչված համաշխարհային հասարակայնությունը փաղուց է, որ գնված է մանր չարչիական հոգեբանության տեր այս Հայ վերապրողներից, պարոն: Բայց մի բոպե ...

Թալեաթ փաշան ցուցամատը բաղմանշանակ պարզում է օդում:

– Գերմանիան հասկանում էր, որ Հայերի տեղահանումը բխում էր մեր կենսական անհրաժեշտությունից: Գերմանիան լավ հասկացավ Հայերի տեղահանման մեր կենսական պատճառները: Գերմանական իշխանությունները ի վերջո գիտեին, թե ովքեր են Ռուսաստանի նիդակների ծայրերը:

– Տեղահանում կամ վերաբնակեցում մոլորեցնող անվան ներքո Դուք ուզում էիր քաղաքակիրթ աշխարհից թաքցնել, որ ձեր ուզածը Հայ ժողովրդի վերջնական բնախնում է:

– Կրկին վերաղանալով իմ Հայ բարեկամ Վարդգեսին, պարոն, ևկնք հիշենք, որ Վարդգեսը, օրինակ, զերծ մնաց ամեն ինչից, – Հակաճառեց Թալեաթ փաշան:

– Ակացուցված է, որ միայն 15 մտավորական է կենդանի մնացել: Զուտ պատահականություն է սա, թե ավելի շուրջ պետք է ենթադրել, որ նրանք այնքան հարուստ էին, որ փրկազնով ազատվեցին: Մի՞թև չգիտեկ, որ Ձեր բարեկամ, բաղմից ամբաստանված Վարդգեսը հետագայում այնուամենայնիվ ձերրակալվել է:

Թալեաթ փաշան Հայացքն ուղղում է զատարանի միջանցքի՝ բաց գույնով ներկված առաստաղին: Նրա սրտառուչ նախաղաստությունները այնպես են հնչում, կարծես թե դրանք մի տեղից կարդացվեին:

– Ես և երիտթուրքական շարժման իմ ընկերները ունեինք մի հիանալի ծրագիր, այն և ստեղծել Համաթուրքական, Համահիւլամական կայսրություն: Իսկ դրա մեջ քրիստոնյաների Համար պարզապես տեղ չկար:

– Ճիշտ է, – Հաստատում է վերջին զրույթը Մելիքյանը, – Հայերը թուրքիայում մնացած վերջին քրիստոնյա ժողովուրդն են: Իսկ Կոստանդնուպոլսի Գերմանիայի դեսպանն իր Հունիս 30-ի հեռագրում, որն ուղարկել էր Բևոլին՝ Վիլհելմի փողոց արտաքին գործոց նախարարություն, Ձեզ և Ձեր կառավարությանը փայլուն հեռանկարներ էր Հավասարություն: «Հայերի Հարցը լուծված է: Երիտթուրք գայլերի ու համական անհամբեր սպասում է, թե ներ Հունաստանը թուրքիայի դեմ կշրջի: Հունարերը թուրքիայի մշակույթ կրող տարրն են: Այն ժամանակ նրանք էլ կրնաջնջվեն Հայերի նման»:

Արյունը լսիում է Թալեաթ փաշայի դեմքին: Կարծես ուր որ է ծանրամարմին այդ մարդը կաթված է ստանալու:

– Երիտրուրք գայերի ոհմա՞կ: Մի՞թե զա գերմանացի դիվանագնուի բառապաշար է, պարո՞ն, – Թալեաթ փաշան հայացքը հառում է իրևն ֆիզիկապես զիջող խոսակցին. ապա հարցնում է բացահայտորեն սպառնալից տոնով. – Վերջապես ո՞վ եք Դուք, պարո՞ն, որ նման ստարանություններով անդադար ինձ մեղաղրում եք:

Առանց վարանելու Սողոմոն Մելիքյանը պատասխանում է ժպիտով.

– Ո՞վ եմ ես, Թալեաթ փաշա: Եկե՞ք այսպես ասեմ. մի մարդ, որ ապագայից է գալիս: Իսկ եթե ավելի ճիշտ եք ուզում իմանալ՝ Սողոմոն Մելիքյանը:

– Մելիքյան, – հարցնում է Թալեաթ փաշան փնթփնթալով, – գաղթական հայ: Դա ինձ ոչինչ չի ասում:

– Կայիփոռնիայի նաշանգի Սան Ֆրանցիսկո քաղաքում ծնված, մեծացած ու սովորած, – ավելացնում է Մելիքյանը: – Ի դեպ, Թեյլիրյանը սխալ է, իմ մեծ հոր անունը Թեյլիրյան էր ...

– Ամբաստանյալը Զեր մեծ հայրն է, – Թալեաթ փաշան հանկարծ ինքն իր մեջ կուչ է գալիս: Հաղթանամ և ուժեղ մարդու չափերը կարծես նվազում են, երբ հետեւյալ պատասխանն է տալիս.

– Նոր աշխարհից եկած մարդասպանների Թեյլիրյան զարմից մեզը: Այն, որ Զեզ նման մեկն այստեղ կանգնելու իրավունք ունի, վառ ապացուց է, որ իմ և իմ բարեկամների բոլոր ջանքերը զուր անցան: Ինձ լսեք, պարո՞ն ... դատարանի համար նույն է թե՛ Զեր, թե՛ վարձված մարդասպանի անունը: Ուզում եմ, որ ինձ հանգիստ թողնեք:

Մելիքյանը մի լավ սրախոսություն լսածի նման այնպես բարձր է ծիծաղում, որ դատարանի շենքի վերձիգ պատերն արձագանքում են:

– Եթե զա Զեզ կմիտիթարի, պարո՞նս, Դուք արդեն Զեր հանգիստն ունեք: Հավիտյանս հավիտենից: Եվ, կասկած չկա, այժմ Դուք միայն մեկ իդա ունեք՝ տեսնել իմ մեծ հորը գիշոտինի տակ:

– Զեզ հետ, պարո՞ն, այևս ո՛չ մի բառ չեմ փոխանակի: – Թալեաթ փաշան շրջվում է գնալու համար: Սակայն Սողոմոն Մելիքյանը կրնկակոխ հետեւում է նրան:

– Ես Զեզ կարող եմ մի բան կանխագուշակել, Թալեաթ փաշա: Մի բան, որ անշուշտ Զեզ դուք կգա:

Թուրքիայի ներքին գործոց նախակին նախարարն իրապես կանգ է առնում: Գեմքին թերահավատություն կա, երբ նա գոռողաբար հարցնում է.

– Ի՞նչ լավ բան կարելի է սպասել Ձեզնից՝ այնտեղ ներսում մեղադրյալի աթոռին նստած մարդասպանի հետնորդից: Ինձ համար: Թալեաթ փաշայի պես մեկի համար:

Մելիքյանի համար դժվար է՝ չնայած ի ցուց դրած հանդգնության, պահպանել հանգստությունը:

– Աչա ուրեմն լավ լուրը: Քանի որ այսօր 1921 թ. հունիսի 2-ն է, – երիտասարդը մի պահ դիմում է մատների օգնությանը, – մտքում հաշվելոց թույլ եմ, ուրեմն, 1943 թ. մարտին Զեր աճյունը Բևողինից կտեղափոխվի Ստամբուլ:

– Որտե՞ղ է այդ Ստամբուլը:

Սողոմոն Մելիքյանը ճպտում է.

– 1930-ից Ստամբուլը Զեր հարազատ կոստանդնուպոլիսի նոր անունն է: Այնտեղ Դուք 1943 թ. մարտին Գերմանիայի ղետպան Ֆրանց ֆոն Փափենի ներկայությամբ կզտնեք Զեր վերջին հանգըրփանը: Այսպես կոչված՝ Ազատության բլրի վրա: Որքան որ գիտեմ, այն միշտ էլ եղել է մեծամեծների գերեզմանոց:

– Իսկապե՞ս, – Թալեաթ փաշան շոյված ուղղում է բեղերի ծայրերը:

– Ինչո՞ւ պետք է Զեզ խարեւ, Թալեաթ փաշա: Մամուլը մեծ աղմուկ է հանելու այդ իրադարձության կապակցությամբ: Թուրքական կառավարությունը պաշտոնապես հանդես է գալու չնորհակալական խոսքով՝ սրտառուչ բառեր նվիրելով նաև Գերմանիայի ույլսականցեր Աղորֆ Հիտլերին: Զայետք է զարմանալ՝ նկատի ունենալով Զեր միջն առկա հոգեհարազատությունը:

– Քիչ առաջ ասացի, չե՞՞՝ ոգեռքում է Թալեաթ փաշան: – Այսպիսով ապացուցվեց, որ այն ժամանակ ամերիկամետ դավադիրների կողմից կայացված մահավճիռ պատմական սխալ էր:

Մելիքյանը զլխով է անում: Սակայն նրա ղեմքը տիսուր է, երբ ասում է.

– Զեր մահվան օրը, Թալեաթ փաշա, այսօրը Թուրքիայում ամեն տարի նշվում է, և համապատասխանաբար ամեն տարի մամուլը երկրով մեկ մեծարում է Զեզ:

Մի պահ Թալեաթ փաշան մոռանում է իր առջև կանգնած մարդու հանդենաց ատելությունը: Հպարտությունից փրփած սկսում է բացատրել:

– Զեք պատկերացնի, պարո՞ն, թե ինչ մեծ բավականություն եմ ստանում: Թեկուզ և արևմտյան գերմանացիները, համենայն գեպս, հրաշալի ազգ են: Սակայն քիչ առաջ խոսեցիք հոգեհարազատության մասին պարո՞ն ույլսականցեր ... հետ:

Թալեաթ փաշան հարցնում է անունը, և թե ինչու այդ ԱղոլՓ Հիտկեր իր հետ հոգեհարազատ պետք է լինի:

— Հրեաներ, այսպես էին կոչվում երկրորդ աշխարհամարտից առաջ...

— Ի՞նչ, մի պատերազմ է՞ր և տեղի ունենալու, — ընդհատում է Թալեաթ փաշան: — Իսկ ե՞րբ է դա լինելու, պարո՞ն, եթե կարելի է հարցնել:

— 1939 թվականին, — պատասխանում է Մելիքյանը՝ կրկին րունելով խոսակցության թերթ: — Ուրեմն Հրեաներն այդ ժամանակ որոշ իմաստով գերմանացիների հայերն էին: Մարզկության պատմությունը մեզ կարծես սովորեցնում է, որ վաղ թե ուշ գրեթե ամեն ժողովուրդ իր հայն է ունենում: Թեև ևկե՛ք ընդունենք, որ մի այլ ազգի ընաժնջումը ոչ միշտ է Ձեր կատարելագործությամբ կատարվում:

— Ինչե՞ր եք շարունակ հայտարարում, — ընդգում է Թալեաթ փաշան: — Քանի՞ անգամ պետք է Ձեզ համար կրկնեմ՝ 1915 թ. երիտթուրքական կառավարության ձեռնարկած անհրաժեշտ միջոցառումները մի բան էին, իսկ Սալոմոն Թելիքյան անունով մի հայ ոճրագործի Հարդենրերգ փողոցում կատարած նենգ սպանությունը՝ մի այլ բան:

— Թեհերյան, — ուղղում է Երիտասարդը, — դեմ չե՞ք լինի, եթե այժմ գնամ լսելու պապիկիս դեմ հարուցված դատաքննության շարունակությունը:

— Պապիկ, — հարցնում է Թալեաթ փաշան գաղտնիք գուշակողի պես:

— Ձեր մտածածք չէ, պապիկ հայերեն մեծ հայրիկ է նշանակում:

— Մեծ հայրիկ, — կրկնում է Թալեաթ փաշան՝ երեսը արհամարհանքով ծամածուլով: — Ինչո՞ւ ևմ ևս ընդհանրապես խոսքի րոնկում կոնակից լսիող մարդասպանի ժառանգի հետ:

8

Վկա տիկին Քրիստինե Թերգիբաշյան՝ նախընքաց վկայի կինը, 26 տարեկան: Հարցաքննությունն ընթանում է քարզմանչի միջոցով: (Երդման արարողությունից հետո).

Նախազան. — Դեպքի մասին ոչինչ չգիտե՞ք:

Վկա. — Ոչի՞նչ:

Պաշտպան Ֆռն Գորդոն. — Խնդրում եմ վկային հարցնել ոճրագործությունների մասին: Նախ՝ քեզ պատերազմի ժամանակ իր հայրենիքում է եղել և ապա՝ որտե՞ղ էր քնակվում:

Վկա. — Ես երգումում եմ եղել:

Նախազան. — Դա Զեր հայրենիքն է:

Վկա. — Այո՛:

Նախազան. — Այնտեղ տեղի ունեցե՞լ են տեղահանություններ:

Վկա. — 1915 թ. հուլիսին հավաքեցին այնտեղի բնակիչներին ու ասցին, որ պետք է հեռանան քաղաքից: Քաղաքի հարուստներն այդ լուրն ստացան ուր օր առաջ, մյուսները՝ տեղահանությունից մեկ ժամ առաջ:

Նախազան. — Նկարագրեցե՛ք, քեզ ինչքա՞ն մարդ տեղահանվեց, քեզ ինչպէ՞ս կատարվեց այդ ամենը, քեզ ինչքա՞ն քայլեցիք, և ի՞նչ պատահեց:

Վկա. — Մեր ընտանիքը 21 հոգուց էր բաղկացած: Մնաց միայն երեքը: Նախազան. — Ինչքա՞ն էր մեծ խումբը:

Վկա. — 500 ընտանիքը:

Նախազան. — Ինչպէ՞ս մահացան Զեր ընտանիքի անդամները:

Վկա. — Մեզ հետ էին հայրս ու մայրս, երեք եղբայրներս, ամենամեծը՝ 30 տարեկան, երեք տղաներ՝ ամենափոքը վեց ամսական, ամուսնացած քույր՝ ամուսնու և վեց երեխաների հետ, ամենամեծը՝ 22 տարեկան: Մեփական աշքերովս տեսա բողոքի մահը: Միայն երեքը ողջ մնացին ու փրկվեցին: Երդիկում եմ, որ նրանք սպանվեցին Կոստանդնուպոլիսից եկած հրամանով:

Նախազան. — Ի՞նչ եղանակով:

Վկա. — Երբ մի փոքր գնացինք, խմբից առանձնացրին 500 երիտասարդ: Նրանց թվում էր եղբայրներից մեկը: Սակայն նրան հաջողվեց փախչել ու ինձ մոտ գալ: Ես նրան աղջկա շորեր հագցրի:

Նախազան. — Ի՞նչ եղան առանձնացվածները:

Վկա. — Նրանց իրար կապեցին ու ջուրը զցեցին:

Նախազան. — Որտեղից գիտեք:

Վկա. — Մեփական աշքերով տեսա:

Նախազան. — Որ նրանց գե՞տը նետեցին:

Վկա. — Այո՛, նրանց գետը նետեցին, և հոսանքն այնքան սրընթաց էր, որ քուր ջուրը նետվածներին քշեց-տարավ:

Նախազան. — Ի՞նչ եղան մնացածները:

Վկա. — Մենք գոռում էինք, լաց լինում ու չգիտեինք ինչ անել: Սակայն մեզ անգամ լաց լինել չէին բողնում, այլ սվիմներով առաջ էին մղում:

Նախազան. — Ովքե՛ր էին որանք:

Վկա. — 30 ոստիկան և զինվորների մի ջոկատ:

Նախազան. — Նրանք աջ ու ձախ հարվածո՞ւմ էին:

Վկա. — Այո՛:

Նախագահ.— Հետո ի՞նչ պատահեց Զեր ընտանիքի անդամներին:

Վկա.— Մենք ինչ-որ կարող էինք շալակել դրանով հասանք Սալաթիա: Այնտեղ մեզ լեռ բարձրացրին ու տղամարդկանց կանանցից բաժանեցին: Կանայք կանգնած էին տղամարդկանցից մոտ տասը մետր հեռու և կարող էին իրենց աշքերով տեսնել, թե ինչ պատահեց իրենց տղամարդկանց:

Նախագահ.— Ի՞նչ կատարվեց տղամարդկանց հետ:

Վկա.— Նրանց կացնահարեցին ու ջորդ նետեցին:

Նախագահ.— Ուրեմն կանայք ու տղամարդիկ այս ձևով կոտորվեցին:

Վկա.— Միայն տղամարդիկ այս ձևով մահացան: Երբ մի փոքր մրնում էր, ոստիկանները գալիս էին ու ընտրում ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին և տանում, իրենց կին դարձնում: Ոստիկաններից մեկն էլ ինձ մոտ եկավ և ուզում էր իրեն կին տանել: Ովքեր չէին հնագանդվում ու տեղի չէին տալիս, նրանց ավիճակարում էին կամ երկու ոտքից բռնելով՝ պատառուում: Մինչև իսկ ճեղքում էին հոյի կանանց կողերը, երեխաներին դուրս հանում ու դեն նետում: (Մեծ իրարանցում սրահում: Վկան բարձրացնում է ձեռքը): Երդվում եմ:

Նախագահ.— Ինչպես եք Դուք փրկվել:

Վկա.— Եղբորս էլ զլուխը կտրեցին: Երբ մայրս դա տեսավ, ընկավ ու տեղում մահացավ: Հետո մի քուրք եկավ ինձ մոտ և ուզում էր իրեն կին տանել, և երբ ես նրան քանի տեղ չդրեցի, երեխայիս առավ ու դեն շպրտեց:

Նախագահ.— Եվ այս ամենը իրո՞ք ճշմարիտ է, երևակայություն չէ:

Վկա.— Ինչ որ պատմեցի, շատ ավելի նվազ է, քան ճշմարտությունը: Շատ ավելի վատ է եղել:

Նախագահ.— Ո՞ւմ էին այդ ժամանակ այդ արհավիրքների պատասխանատուն համարում:

Վկա.— Դրանք կատարում էին ենքներ փաշայի իրամանով, և զինվորները ստիպում էին տարագիրներին ծնկի գալ ու գոչել՝ կեցցե՛ փաշան, քանի որ նրանք փաշայի քույլտվությամբ էր, որ ապրում էին (հուզում դահլիճում):

Պաշտպան Նիմայեր.— Այստեղ՝ դահլիճում, բազմիցս գոյացած հուզումներից պարզ դարձավ, որ վկայի ցուցմունքները գրեթե անհավատալի են բվում: Սակայն գոյություն ունեն այդպիսի հազարավոր զեկույցներ: Եվ որպեսզի վկայի արժանահավատության վրա ամենաթթված տարակուսանք չընկնի, պիտի խնդրեմ հարցաքննել երկու իրազեկ մարդկանց՝ պարո՞ն պրոֆ., դ-ր Լեփսիուսին և Նորին գերազանցության Լիման ֆոն Զանդերսին:

9

Թեև Թալեաթ փաշան հայտարարել էր, որ այլևս չի ցանկանում խոսել մարդասպանի թոռան Հետ, Հնաց նոր լսածի պատճառած վրդովմունքը իրեն դարձյալ Մելիքյանի կողմն է քշում:

— Զգվել եմ այս մշտական ու ահավոր պախարակումներից: Այդ կինը չգիտե, թե ինչ է ասում: Ձև՝ որ ինքը կենդանի է: Սակայն թուրքիայում հայերի կարծեցյալ կոտորածների պատճությունը նույնն է, միշտ մյուսներն են, որ իրը թե այդ օրերին սպանվել են:

Սողոմոն Մելիքյանի ճակատը ծածկվում է կնճիռներով: Հանում է ակնոցը, զննող հայացքով դիտում ապակիների միջով, ապա փչում ձախ ապակու վրա ու մաքրում բածկոնի թեքով: Այնուհետև մտմտալով ասում է.

— Տարօրինակ է, Թալեաթ փաշա:

— Ի՞նչն է տարօրինակ, — Հնչում է պատասխանը:

— Այն, որ ոչ թե Ձեր անունը տրվեց, այլ Ձեր մեղսակցի՝ Էնվեր փաշայի:

— Մեղսակի՞ց: Այսուհետև, պարո՞ն, Ձեր բառերն ավելի զգուշորեն ընտրեցե՞ք: Էնվերն այն ժամանակ նախարարների խորհրդում ուղարկան նախարարն էր, 1909 թ. մեր հիմնադրամ «Ազատություն և առաջաղջիմություն» կոմիտեի շատ կարող ու մեծավաստակ մարտընկերը:

— Որը 1918 թվականին նույնպես կարողացավ խուս տալ արդար պատժից և Բևողինով փախչել Մոսկվա, — շարունակում է Մելիքյանը. — Որը 1921 թ. գծտվեց սովետների Հետ և Բուլսարեստում հակարուշեկան ապստամբություն Հրահրեց: Խակ 1922 թվականին, նստած կարսի նահանգում, կրկն հայերի կոտորածների հրաման տվեց՝ Երևանից արևմուտք ընկած տարածքներում: Բայց 1922 թվականի օգոստոսի 5-ին Տաջիկստանում ընկավ սովետների ղեմ կովում:

— Էնվերն էլ է մահացել, ցավում եմ:

— Արդարության ուշացած մի արտահայտություն:

— Մի՛ ձեսցըք: Ձեր նողկալի գոհունակությունը անկարելի է թաքցնել: — Թալեաթ փաշան զայրացած խոսակցին ձեռքով վանում է: — Որպեսզի մի բառ ևս վատանեմ այդ կարծեցյալ վկայի մասին, ասեմ, որ գատարանում ուղղակի աչքի է զարնում հոտառության պակասը: Մարդասպանության այս դատական գործում հարցաքննել մի հայուհու նշանակում է այծին պարտիդպան կարգել ...

– Իսկ ի՞նչ ևղան այն հարյուր հազարավոր հայուհիները, որոնք համալրեցին թուրքական հարեմները կամ բռնի ուժով ամուսնացան: Երեսում է՝ լավ կարծիքի չեք կանանց մասին, Թալեսա՛թ փաշա: Դա Ձեր կամքն է: Թերես ընդունեք զերմանացի գրող Արմին Վեգների ցուցմունքը, որ սղագրել է միայն դատարանի քարտուղարը: Ցավոք, նախագահող դատավոր Լեմբերգը հայտնի պատճառներով թույլ չտվեց, որ Վեգները իր ցուցմունքը տա դատարանի ու երդվյալների հետ երես առ երես: Բայց ևս Ձեզ համար սիրով կկարդամ սղագրությունից մի հատված:

– Նեղություն մի՛ կրեք, պարո՞ն Մելիքյան: Ինչպես տեսնում ես դատարանի ներկա իրադրությունը, ևս Ձեզանից, միևնույն է, չեմ կարողանա փախչել:

Սողոմոն Մելիքյանը ուղղում է ակնոցը: Ապա առանց հատուկ շեշտադրության ընթերցում է սղագրությունը. «Վկա Արմին Թ. Վեգներ, բնակության վայրը Նոյզլորսոն/Մարկ, սույնով հայտնում է, որ պատերազմի ժամանակ եղել է սանհիտարական մի առաքելության անդամ, ըստ որում 1915 թ. եղել է Դարդանելում և Կոստանդնուպոլսում: Այստեղից, օգտագործելով արձակուրղը, 1915 թ. հուլիսօգոստոս ամիսներին գնացել է Փոքր Ասիա՝ ստուգելու կոտորածների մասին տարածվող լուրերը: Նա այցելել է անապատի ամենատարբեր վայրերում սփոված աքտորյաների բազմաթիվ ճամբարներ և սեփական աչքերով տեսել անսահման թշվառությունն ու ծանր համաճարակները: Նա հանդիպել է մարդկանց, որոնք ուսկի էին կու տվել այն թաքցնելու և ապա կղկղանքի մեջ փնտրելու համար: Նա տեսել է, թե ինչպես հայերն իրենց հատուկ եռանդով փորձել են անապատում բնակություն հաստատել ու առեստրով զբաղվել: Սակայն հազիվ գործն սկսած՝ ամեն ինչ իգուր է անցել, քանի որ նրանց կրկին քշել են հետուները: Զարդերի մասին նա պատկերավոր նկարագրություններ է լսել ինչպես հայերից, այնպես էլ թուրքերից: Արմին Վեգներն առաջարկել է դատավարության ժամանակ բոլոր երդվյալներին ներկայացնել մեծ մասամբ իր ձեռքով արված բազմաթիվ լուսանկարներ, որոնք բացահայտում են տարագիր հայերի ծայրահեղ թշվառությունն ու կոտորածների հետքերը: Նա իր տեսած սարսափները նկարագրել է 1919 թ. Հունվարին Ամերիկայի նախագահ Վիլսոնին ուղղած բաց նամակում, որը լույս է տեսել «Berliner Tagesschatt»-ում: Այս առումով արժե հիշատակել նաև նրա «Ճանապարհ առանց տունդարձի» աշխատությունը, որը լույս է տեսել Դրեզդենի Տեխնիկական համարակալչությունում»:

Մելիքյանը թուղթը ցած է գցում ու նայում հատակին: Այս փոքր դադարով նա ուզում է Թալեսաթ փաշային առիթ տալ՝ խորհեղու Վեգների ցուցմունքի մասին:

– Գրողները նախընտրում են հորինված բաները, քան ճշմարտությունը՝ ասում է Թալեսաթ փաշան՝ վերջ զնելով խոսակցությանը Արմին Վեգների ցուցմունքների մասին: Մի այլ բան է հուզում Թուրքիայի նախագին նախարարին. «Այդ թանաքակերը իսկապես գրել է Ամերիկայի նախագահին»:

– Ո՞չ միայն գրել է, Թալեսաթ փաշա: Նա միացել է բոլոր նրանց, ովքեր չեն ուզում, որ աշխարհը հայացքը թեքի, երբ Սամանյան կայսրությունում հայ ժողովուրդը հետևողականորեն բնախճզվում է:

– Պահ, – զուրս է թոշում Թալեսաթ փաշայի բերանից:

Մելիքյանը մեքենայարար ձեռքը տանում է բաճկոնի գրպանը: Մինչ ձեռքերը արագ-արագ հարթեցնում են մի թղթի կտոր, նա ասում է.

– 1972 թ. դեկտեմբերին Վեգները մի հարցագրույցի ժամանակ վկայել է, որ ինքը երբ ֆելդմարշալ ֆոն զեր Գուցի շտարի հետ դեպի Բաղդադ էր ուղևորվում, հաճախ է անցել հայերի մահվան ճամբարների մոտով: Ըստ Վեգների մինչ թուրքերը խոսափում էին այդ ճամբարների մասին խոսելուց և միտում դրանց գոյությունը, գերմանացիները դրանք չտեսնելու էին տալիս: Նախ չեն ուզում տեսնել այդ ամենը, քանի որ թուրքերի հետ զաշնակից էին, ապա վախնենում էին հիվանդություններից ...:

Զնայած Թալեսաթի ճանձրույթ արտահայտող դեմքին՝ Սողոմոն Մելիքյանն այժմ սկսում է կարդալ Վեգների պատասխանները հարցագրույցից. «Անրադիս ճերբակալվեցի, այն էլ գերմանացիների կողմից, որովհետև թուրքերը նկատել էին, որ նս զրադիւմ էի հայերով: Այսպես, այլ իրերի բվում անապատում գտնվող բռնազարդաներից վերցրել էի նամակներ, որ գոտուս տակ բաքցներով՝ հասցրել էի Կոստանդնուպոլիս: Այնտեղից դեսպանի միջոցով դրանք ուղարկել էի Ամերիկա, քանի որ այն ժամանակ Ամերիկան դեռ պատերազմի մեջ չեր մտել: Սակայն թուրքերն այդ նկատել էին ու նրանց համեմի չեր, որ ինչոր մեկը հետամտում է այդ գործին: Ես, իհարկե, կապի մեջ էի նաև Յոհաննես Լեփախուսի՝ գերմանացի նշանավոր արևելագետի հետ, որը դեռևս 1895 թվականից, երբ Արդուլ Համիլի իշխանության օրոք տեղի ունեցան հայերի նկատմամբ հալածանեները, հայերի պաշտպանն էր: Ես նրան ժամանակ առ ժամանակ փոստային բացիկների միջոցով տեղեկություններ էի ուղարկում. «Եղա Դեր Զորում և անապատի այլ վայ-

բերուն, սակայն այստեղ այլև հայկական գորգեր չկարողացա ճարել»:
Դա լրկ ծածկագիր էր, որի նպատակն էր բացիկը գրաքննությունից գեր պահել:

Թալեաթ փաշան, բերանը լայն բացած, հորանջում է: Բերանի առաջ պահած մատանիներով զարդարված ձեռքի հետեւից երևում նն բեղերի ոլորված ծայրերը:

— Կա նաև գերմանացի մեկ այլ գրող՝ Ֆրանց Վերֆելը, Թալեաթ փաշա: Նա 1928 թ. ճանապարհորդեց Թուրքիայում և 1933 թ. գրեց ազգային կառայի իմ նախնիների բնախնաման մասին: Եվ ինձ թվում է, Թալեաթ փաշա, որքան ժամանակն անցնի, այնքան ավելի այժմեական կրառնա Վերֆելի «Մուսա լիուան 40 օրը» վեպը: Սա շատ մեծ քան է և, ինչպես ասացի, սրանք հայ ականատեսներ չեն՝ Վեգներ ու Վերֆել անուններով այս գրողները:

— Դա նրանց ավելի արժանահավատ չի դարձնում. ճշմարտություն և բանաստեղծություն, ինչպես գերմանացի մի մեծ բանաստեղծ անցյալ դարում անվանել է իր կենսագրականը:

— «Բանաստեղծություն և ճշմարտություն» է դա կոչվում, հեղինակը՝ Գյոթե, — ուղղում է ամերիկացին:

Այստեղ Մելիքյանի գլխում մի միտք է ծագում: Խոսակցի սնափառությանը դիմումով նրան առաջարկում է կարդալ այն հատվածները, որտեղ Ֆրանց Վերֆելը նկարագրել է Թալեաթ ու Էնվեր փաշաներին: «Ի դեպ, զա տեղի է ունենում վերը նշված պատվելի Լեփսիուսի միջոցով՝ նրա 1915 թ. օգոստոսի 10-ին Բարձր դռան ուղամական նախարարին կատարած այցելության առիթով»:

— Ե՞ս: Խեկալին գրողում: Որը գրվել է իմ մահից հետո՞:

Թալեաթ փաշան չի կարող լավ բան ակնկալել: Սակայն նկարագրված լինել վեպում՝ լրիվ անունով, ուզի, թե չուզի, իր բնավորության համաձայն խնդրում է տեսնել համապատասխան հատվածը:

— Ըստ Ֆրանց Վերֆելի տվյալների՝ նա իր զրական ելույթների ժամանակ միշտ կարդացել է այս գլուխց: Եվ պատահական չէ, որ Սոլոմոն Մելիքյանը սկսում է դր Լեփսիուսի և Էնվեր փաշայի միջև տեղի ունեցած վիճարանությունից:

«Լեփսիուսը ջղաճգորեն իրար է սեղմում ձեռքերը, սակայն ոչ մի բառ չի ասում: Այս բախտախնդիրը ու շփացած մարդուկը աշխարհակալ տերության բացարձակ տիրակալն է: Նրա նրբակերտ, գայթակիշ զիշիկն այնպիսի թվեր է հորինում, որ իրականությանը գիտակ ամեն մարդու պետք է ապշեցնեն: Պատվելիին նա խարել չի կարող, քանի որ վերջինս ստույգ զիտի, որ Անատոլիայում հազիկ վեց միլիոն մաքուր

բուրք կա: Եթե անգամ հաշվի առնվեն Հյուսիսային Պարսկաստանի, Կովկասի, Քաշգալի ու Թուրքեստանի բոլոր վրանաբնակ բուրք ազգությունները, ինչպես նաև Եվրոպայի կեսի չափ տարածք գրադեցնող տափաստաններում բափառող ծիազողերը, ամբողջը դարձյալ քան միլիոնի չի հասնի: «Նման երազները, մտածում է Լեփսիուսը, ազգայնական բնրամոլության արդյունք են»: Միաժամանակ, սակայն, նա կարեցանքով է լցվում պատերազմի այդ նրբակազմ աստծո՝ մանկանիտ ների հանդեպ: Յոհաննես Լեփսիուսը ասում է բանիմաց մարդու ծայնով. «Դուք ցանկանում եք նոր կայսրություն հիմնել, Զերը գերազանցություն: Սակայն նրա հիմնապատերի տակ կմնա հայ ժողովրդի դիակը: Կարո՞ղ է դա օրինություն բերել: Միքե՞ն հնարավոր չէ, նույնիսկ այժմ, խաղաղ մի ուղի որոնել»:

Այստեղ Ենվեր փաշան առաջին անգամ բացահայտում է ողջ ճշմարտությունը: Նրա դեմքի զուսպ ժամանում է, աչքերը դառնում են սառն ու սեեռուն, իսկ շրբունքները նահանջում են խոշոր, զիշտիչ ատամներից: «Մարդն ու ժամտախտի բացիները իրար հետ հաշտ ապրել չեն կարող, ասում է նա: – Խաղաղություն չկա»:

— Կարծում էի, որ այդ Վերֆելը Թալեաթ փաշայի մասին է արտահայտվում, պարո՞ն, ընդմիջում է Թուրքիայի ներքին գործոց նախկին նախարարը հիմնապատասխան:

— Մի վայրկյան, Մելիքյանը թղջում է ցուցամատն ու թերթում մի քանի էջ ևս: – Ահա՝ համապատասխան հատվածը:

Երիտասարդն ուղղում է ակնոցն ու ուժեղ հազարով մաքրում կոկորդը: Ապա կարդում է ցածր, բայց հաստատուն ձայնով:

«Անհամար ձեռքեր բափով բացում են դոները, որոնք կառավարական գրասենյակների միջով տանում են Թալեաքի աշխատասենյակը: Հաստանդամ նախարարի համար այդ գրասենյակը չափազանց փոքր է: Երբ հսկան, ինչպես այժմ, բարձրանում է գրասեղանից, նա խափանում է պատուհանի լոյսը: Թալեաքի խոշոր զիսի վրա սպիտակին են տալիս քունքները: Արևելցու ուռուցիկ շրթների վերևում ճոճկում են ձյուրի պես և, փոքրիկ բեղերը: Պարարտ կրկնակզակը դուրս է նղում բարձրադիր օճիքի լայն կտրվածքից: Բամբակյա սպիտակ բանկոնակը, որպես անկեղծության խորիդանիշ, ծածկում է աղեղնածն դուրս ընկած որովայնը: Ամեն անգամ որ Թալեաք բեյը տեսնում է Երկիշխանության այդ համակառավարչին՝ Էնվերին, պահանջ է զգում իր ուժեղ բարձրարար դմել շնորհալի այդ երիտասարդի նեղ ուսին: Սակայն ամեն անգամ Էնվերի դեմքին ծվարած սառը վեհերությունը այդ նտերմիկ մերձեցմանը արգելք է հանդիսանում: Եվ դա զարմանալի է, քանի որ

Թալեաթը չափազանց հաղորդասեր ու ճարտարախոս մարդ է, որն իր բացարձակ գերազանցությամբ կարող է միանգամից իին զիվաճագետի պատին սեղել, մինչ Ենվերը՝ ժողովրդի կուռքը, կայսերական արքայադաստեր ամուսինը, հաճախ մեծ ընդունելությունների ժամանակ կարող է կես ժամ շարունակ մտամոլոր ու շփրշած մի կողմ քաշված, կանգնած մնալ: Թալեաթն իր մսոտ, հսկա ձեռքն իջեցնում է ու բավարարվում մեկ հարցով:

«Ուրեմն գերմանացին քեզ մո՞ւ էր»:

Ենվեր փաշան հայացքը հառում է դեպի Բոսֆոր, նրա խայտացող ջրերով, շտապող շոգենավերով ու փոքրիկ մակույկներով, օրվա այդ ժամի լուսի մեջ ամբողջ քացող մշտադալար նոճիներով ու ավերակներով: Ապա նրա հայացքը կրկին ներս է գալիս ու շրջագայում դատարկ աշխատասենյակում, մինչև կանց է առնում գործածածկ փոքրիկ սեղանի վրա հանգչող բանկարժեք իրի՝ հեռազրական մի հին սարքի վրա: Այդ խոճուկ գործիքի վրա Մորգեի այրութենն է մատնահարել փոստի և հեռազրատան ստորին պաշտոնյա ժալեաթը նախքան նրա՝ Իրքիհատի հեղափոխության միջոցով խալիքայական կայսրության պետական գործչի առաջին աստիճանին բարձրանալը: Թող յուրաքանչյուր այցելու ըստ պատշաճի հիանա զիսապտույտ քերող Վերելի այս խորհրդանշով: Ենվերը նույնպես բարյացակամությամբ է նայում Մորգեի այդ նշանավոր գործիքին, մինչև որ հիշում է հարցը. «Այն, գերմանացին: Նա մի քիչ փորձեց ոայխսթագով սպառնալ...»:

Թալեաթ փաշան կնճռոտում է ճակատը: Իր մասին ասվածը սըրտովը չէ: Ուրեմն այդ Վերֆելը նրան չի հետաքրքրում: Վերջապես թալեաթն ասում է բարձրաձայն:

— Եկե՛ք գնանք լսելու դատարան կանչված երկու փորձագետի ցուցմունքները: Նրանք արդեն երգվել են և այժմ տարանջատելու և ճշմարտությունը բանաստեղծությունից:

10

Փորձագետ, գրող դ-ր Յոհաննես Լեփսիուս, 62 տարեկան, ավետարանական (փորձագետների երդման արարողությունից հետո):

Նախազահ.— Դուք գիտեք, թե խոսք ինչի մասին է: Խնդրում եմ շատ հեռվից չսկսել և արտահայտվել միայն հետևյալի մասին. 1915 թ. հայկան ջարդերի մեծածավալ նման պայրագություններ շա՞տ են տեղի ունեցել, և ըստ Ձեր ուսումնասիրության ու փորձառության, հավաստի են վկաների նկարագրություններն ու ամբատանյալի՝ իր անձնական վերապրումների մասին տված տեղեկությունները:

Փորձագետ Լեփսիուս.— Համընդիանուր տեղահանությունը որոշվել էր երիտրուքական կոմիտեի կողմից՝ ներքին գործոց նախարար Թալեաթ փաշայի, նաև ուզմական նախարար Էնվեր փաշայի հրամանով և իրազործվել է երիտրուքական կոմիտեի կազմակերպության օժանդակությամբ: Տեղահանությունը, ընդհանուր արտորը, որի որոշումը ընդունվել էր դեռևս 1915 թ. ապրիլին, վերաբերում էր Թուրքիայի ողջ հայ ժողովրդին՝ չնշին բացառություններով, որոնց ես դեռ կանդրադառնամ: Պատերազմից առաջ Թուրքիայում ապրում էր 1.850.000 հայ: Տեղահանվել է մոտավորապես 1.400.000 հայ: Ինչպե՞ս էր հնարավոր այդքան կարծ ժամանակում մեկ միլիոն մարդ ոչնչացնել: Դա միայն հնարավոր էր՝ կիրառելով ամենավայրած եղանակները, ինչպես ապացուցվել է Կոստանդնուպոլիսի ուզմական դատարանում Թալեաթ փաշայի և նրա ընկերների դեմ հարուցված դատավարության ժամանակ: Հայերին ոչնչացնելու հրամանի կատարման երաշխիքն այն էր, որ տեղահանության իրականացումը Կոստանդնուպոլիսից հանճնարարված էր կուսակալներին, նահանգապետներին և քաղաքագլուխներին, այսինքն՝ Թուրքիայի վերին պաշտոնյաներին, կառավարության նախագահներին ու նահանգային խորհրդականներին: Այն պաշտոնյաները, որոնք չեն հնազանդվում, աշխատանքից հանվում էին: Օրինակ՝ Հայեպի կուսակալ Զենալ փաշան մերժել էր իր կուսակալությունում ի կատար ածել հայերի արտաքսման հրամանը: Թալեաթը պաշտոնանկ արեց նրան: Բանակի 3-րդ գորամիավորման պետը հրաման արձակեց, ըստ որի որևէ բոլոր, որ օգնություն ցույց կտա հայերին, կսպանվի իր իսկ տան առաջ, իսկ նրա տունը կիրկիզվի: Ակամա հարց է առաջանում ինչպե՞ս նման անցքերը պատմականորեն հնարավոր դարձան: Հայկական հարցն ինքնարույս տունկ չէ, այն եվրոպական դիվանագիտության գործն է: Հայ ժողովուրդը Ռուսաստանի ու Անգլիայի քաղաքական շահերի գոհը դարձավ: Երկու պետությունների մրցակցությունն Արևելքում սկզբնավորվում է Ղրիմի պատերազմից ու Բեռլինի վեհաժողովից: Լոնդոնի ու Պետերբուրգի միջև դիվանագիտական շախմատային խաղում հայը զինվորն էր, որ մերք առաջ էր մդվում, մերք զոհ տրվում: Մարդասիրական պատճառները, ինչպես «Քրիստոնյաների հովանավորությունը», պատրվակներ էին: Երբ Աբդուլ Համիդը 1895 թ. ստորագրել էր Անգլիայի, Ռուսաստանի ու Ֆրանսիայի պարտադրած բարենորդությունների ծրագիրը, ծանուցեց, որ Հայկական հարցն այժմ պատճառ է: Խշան Լոքանը սուլթանին հասկանալ տվեց, որ մտահոգության կարիք չկա, քանի որ Ռուսաստանը նշանակություն չի տալիս բարենորդությունների իրազործմանը: Սուլթանն այստեղից հետեւթյուններ արեց:

Պաշտպան Վերքառությունը.— Դուք ասացիք, որ դիվանագիտական խաղը Ռուսաստանի ու Անգլիայի միջև նպաստեց հայերի բնաշնչմանը, ինչո՞ւ:

Փորձագետ Լեփսիխուս.— Որովհետև նրանք թուրքերին վախ ներշնչեցին, որ մտադիր էին Հայաստանին անկախություն տալ, որով կվտանգվեր ասիական Շուրքիայի գոյությունը:

Պաշտպան Վերքառությունը.— Առաջներում լսում էինք, թե պատճառն այն է, որ թուրքերը մահմերական են, իսկ հայերը՝ քրիստոնյա, և որ ատելությունը հարյուրավոր տարիների վաղեմություն ունի:

Փորձագետ Լեփսիխուս.— Համարությական, համախալամական կայսրություն ստեղծելու ցնորամիտ այդ գաղափարը, որտեղ քրիստոնյաների համար տեղ չէր լինելու, առաջինը հղացել են կոմիտեն ու Էնվեր փաշան:

11

— Պարուն փորձագետը ևս,— զիմում է Սողոմոն Մելիքյանը Թալմաթին, — իր փաստարկներում հիշատակեց խորհրդարանի հայ անդամ Վարդգեսին, որը 1915 թ. ապրիլին Կոստանդնուպոլսի հայ մտավորականների ձերբակալումից հետո բացատրություն է պահանջել Ձեզնից: Դրա Լեփսիխուսը բառացի մեջքերեց Ձեր պատասխանը. «Մեր տկարության օրերին դուք բռնեցիք մեր կոկորդն ու բարձրացրիք Հայկական բարենորոգումների հարցը: Ահա թե ինչու մենք օգտագործելու ենք ստեղծված նպաստավոր կացությունը՝ Ձեր ժողովրդին այնպես ցըելու, որ 50 տարով մոռանաք բարենորոգումների գաղափարը»:

— Հիշում եմ, — շնչաց Թալմաթ փաշան՝ երեսը պահած ձեռքի հետեւում, — այս բառերն ասվեցին իմ հայ բարեկամ Վարդգեսի հետ զրոյցի ժամանակ: Դրա վրա Վարդգեսը հարցրեց, թե արդյոք մտադիր ենք շարունակել Արդուլ Համիդի գործը:

Սողոմոն Մելիքյանը դեպի խոսակիցն է մոտեցնում գլուխը: Նա ցանկանում է ստուգել խոսակցին, երբ հարցնում է.

— Վարդգեսին անկեղծ պատասխան տվեցի՞ք:

— Կարծես չգիտեք, — Փշչացնում է Թալմաթ փաշան: Նրան բարկացնում է, որ իրեն այդ աստիճանի ապուշի տեղ են դնում: Ապա կտրուկ պատասխանում է.

— Բավական անհաջող հարց մի մարդու կողմից, որը գիտի պատմության հետագա ընթացքը:

Երիտասարդը ժպտում է անխոռով.

— Ես դա Ձեր բերանից էի ուզում լսել, Թալմաթ փաշա:

— Նա ինձ հարցընց, թե մտադիր ենք շարունակել սուլթան Համիդի վարած բնաշնչման գործը: Ես Վարդգեսին կարծ ու կտրուկ պատասխանեցի՝ այս: Բայց ինչի՞ համար է այս ամբողջ շաղակրատանքը: Ես մնում եմ նույն կարծիքին. խայտառակություն է, որ այստեղ խոսվում է ամեն ինչի մասին, բայց իմ՝ Գերմանիայի ամենաշավառարիմ դաշնակցի սպանության մասին.

Սողոմոն Մելիքյանը լուսում է: Կարծես թողնելով, որ իր վերջին բառուց մի անգամ ևս արձագանքեն իր հոգում: Այս աստիճանի խարեւությունն ու անպատկառությունը անզորության զգացողություն ևն առաջացնում նրա մեջ: Ուստի նյութը փոխում է ու կանխագուշակելով դատավարության ընթացքը՝ ասում:

— Պաշտպան դր Վերթառություն իր պաշտպանական ճառում Ձեզ ընդուղելու և որպես փալստական ոճրագործ, որը երբեք գերմանացի ժողովրդի դաշնակիցը չի եղել, այլ սոսկ առնչվել է զինվորական նախակին ուժիմի հետ:

— Հետաքրքրական է, — մեջ է ընկնում Թալմաթ փաշան: Նրա նպատակն է՝ կասեցնել տվյալ բոպեի հոսքը: Բարձր դուռն ներքին գործոց նախակին նախարարը այդ պահին ի վիճակի չէ ձևակերպելու որևէ ընդդիմաբանություն:

— Այս առաջ չեմ ընկնի, — ասում է Սողոմոն Մելիքյանը ներողամտություն հայցող տոնով: — Սակայն մի զաղտնիք ևս կցանկանայի Ձեզ բացահայտել, Թալմաթ փաշան՝ Հաջորդ փորձագետի վկայությունն ավելի քան գոհացուցիչ կիխի Ձեզ համար:

Մարմնեղ մարդը ձեռքով վանողական նշան է անում: Մինչեւ անգամ նրա բեղերի ցցված ծայրերը պատրաստ էին հումկու հականարկածի: Թալմաթ փաշան՝ հոյսը, որ դատավարությունը հօգուտ իրեն կընթանա, թեև զգալիորեն պակասել է, սակայն զեռ ամբողջովին սպառված չէ: Նա վրդովված ֆինժինթում է.

— Այս ամենը ի վերջո վեր է ածվում զոհի հանդեպ դավադրության:

Ապա չկարողանալով հաղթահարել հետաքրքրությունը՝ հարցնում է.

— Շատ բարի, ի՞նչ է այդ մարդու անունը:

— Նորին մեծություն գեներալ Օտտո Լիման ֆոն Զանդերս:

Պատշաճելով վկայի անվան՝ Մելիքյանի պատասխանը հնչում է, ինչպես շնորհի ձայնը գորանոցի հրապարակում:

Փորձագետ Զանդերս.— Պարոն դ-ր Լեփսիուսի ասածին ուզում եմ ռազմական տեսակետից մի քանի քան ավելացնել: Իմ կարծիքով, այն ամենը, ինչ կատարվել է Հայաստանում և ինչ ամփոփված է «Հայկական ջարդեր» անվան տակ, պետք է երկու մասի բաժանել: Առաջինը, ըստ իս, հայերի տեղահանության երիտրուքերի կառավարության հրամանն է: Այդ հրամանի համար, ուրեմն, կարող ենք երիտրուքական կառավարությանը պատասխանատու համարել, ըստ որում՝ կարգադրության համար աճրողովին, իսկ հետևանքների համար՝ մասամբ: Երկրորդը՝ Հայաստանում տեղի ունեցած ռազմական բախումներն են. նախ՝ որովհետև հայերը պաշտպանվում էին և չեն ուզում զինաքաղաքի բուրքական կառավարության հրամանով, և ապա, որ անկասկած ստույգ է, որ նրանք մասամբ ուսւների կողմից բուրքերի դեմ դուրս եկան: Բնականարար դա պատճառ դարձավ բախումների և, ինչպես սովորաբար պատահում է, պարտվող կողմի նախճիրի: Կարծում եմ, որ սրանք այնպիսի բաներ են, որ պետք է տարբերակել: Կառավարությունը կարգադրել է տեղահանությունը, ըստ որում ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական իշխանությունների գենույցների հիման վրա, որոնք ռազմական պատճառներով անհրաժեշտ են համարել Արևելյան Անառողիան դատարկել հայերից:

Թեթևացած մարդու մի ժպիտ պարզորոշ գծագրվում է Թալեաթ փաշայի դեմքին: Նա իր գոհունակությունը դժվարությամբ է թաքցնում:

— Մի՞թև այս խոսքերը չեն պարզաբանում մեր միջոցառումների ստիպողական անհրաժեշտությունը, պարո՞ն: Շնորհավորում եմ. այդ գեներալն իսկ և իսկ գերմանացի զինվորական է:

Թալեաթ փաշայի գովարանական արտահայտությունը ամերիկացի պատմարանին ուղղակի մարտահրավեր նետեց: Նա շատ բան ավելի լավ գիտի Թուրքիայի Հայերի մասին իր ուսումնասիրությունների շնորհի:

— Գերմանացի զինվորականները Ձեզ մոտ՝ Թուրքիայում, միշտ էլ սիրված են եղել, այնպես չէ՞: Գուց փաշայի մասին արդեն խոսել ենք: Մինչև 1895 թ. գեներալն էր վարում Քրուփից և Մաուզերից զենքի

մատակարարման բոլոր բանակցությունները: Էլրինզենի մի նախաշխնական տորփեղո նավեր էր մատակարարում Թուրքիայի ռազմածովային նավատորմին:

Թալեաթ փաշան բարձրացնում է ձևոքը ի նշան առարկության: Նրա դեմքն այլևս չունի մի քանի բոպկ առաջիկ ուրախ արտահայտությունը: Գերմանական զինվորականության հանդեպ բարեկամական զգացմունքներ տածելը մի բան է, իսկ այն խոսքը, որ դրամական հարցերում բարեկամությունը վերջանում է, բոլորովին այլ բան: Այդ դրույթը հաստում են նրա հետևյալ խոսքերը.

— Եթե Դուք այդպես լավատեղյակ եք մեր գործերին, պարո՞ն, ապա Ձեր ուշաղրությունից չպեսք է վրիպած լինի, որ Քրուփը 1886 թ. Թուրքիային հավելյալ զներով վաճառել է 426 դաշտային հրետանի և 60 հրասանդ:

Սողոմոն Մելիքյանն ապշած է:

— Իրականում դա ինձ համար նորություն է: Կամե՞ք, թե որտեղից Ձեզ այդ մանրամասները:

— Այդ մասին ինձ պատմել են, — խուսափում է Թալեաթ փաշան որոշակի պատասխանից:

— Ուրիշն Գերմանիայի զինվորականությունը ճանապարհ է Հարթել գերմանական կապիտալի Համար, — շարունակում է Մելիքյանը իր ելույթը, — զա նշանակում է, որ Թուրքիան միայն 1889 թ. բանակի սպառագինման համար իրացրել է 15 միլիոն մարկ Deutsche Bank դրամատնից փոխ առնելու միջոցով: Այսպիսով գերմանացիները կրկնակի շահույթ ստացան և՛ զենք վաճառելով, և՛ համապատասխան տոկոսավճար ստանալով:

Թալեաթ փաշան մտքով գեռ զենքի միջպետական գործարքի հետ է, որը, լավագույն ցանկության դեպքում էլ չի կարելի բարեկամական անվանել: Եվ նա չի թափցնում սրտում պահածը, երբ արտահայտում է գգոռհությունը.

— Դեռ լավ հիշում եմ, պարո՞ն, թե ինչպես Գերմանիան 1919 թ. իր հին նավատորմից դուրս գրված նավերը բարձր զներով մեր վզին կապեց:

— Գործարքը գործարք է, Թալեաթ փաշա, — ծիծաղելով հաստատում է Մելիքյանը: — Այդուհանդեռ, եթե արդարամիտ եք, եկեք ընդունենք, որ յուրաքանչյուր այդպիսի գործարքի համար թուրքական կողմն ստանում էր լրացուցիչ բախչի:

Բարձր դռան միջնորդների կաշառակերությանն ուղղված բացահայտ այդ մեղաղրանքը Թալեաթ փաշայի վրա քիչ է ազդում:

— Արևելքի համար դա միշտ էլ սովորական բան է եղել: Ընդ որում,— Երիտթուրքական ներքին գործոց նախակին նախարարը զյուրությամբ հիշում է,— ասում են, որ Գոլց փաշան, օրինակ, քանի որ այդ անունն այստեղ դեր է խաղում, միշտ հրաժարվել է նման բախչից: Դա անհամատեղելի էր նրա՝ պրուսական սպայի պատվախնդրության հետ, հայտարարել է նա ...

— Ասում են նաև,— Հակաճառում է Մելիքյանը,— որ բարոն ֆոն դեր Գոլցի, որին Դուք Գոլց փաշա անվանեցիք, նվիրատվության դրամը այնքան աղմուկով չի նետվել տուփը, որ լսվեր եկեղեցով մեկ:

— Որքան բնորոշ է Զեղ, — Թալեսաթ փաշան զայրութով է արձագանքում գերմանացի բարոն ֆոն Գոլց փաշային վերագրվող կաշառակերության գունազարդված նկարագրությանը, — Չե՞ք կարող որեւ մեկին թողնել առանց պախարակելու: Զեմ զարմանա, եթև նաև փառահեղ այդ գեներալին՝ Լիման ֆոն Զանդերսին, քննադատելու միքան չգտնեք, պարոն Մելիքյան:

— Նատ լավ կարող եմ տարրերակել երկուսին: Նորին գերազանցություն գեներալ Լիման ֆոն Զանդերսը համարվում է Ալղիանուպոլսի ու Զմյուռնիայի հայ բնակչության փրկիչը: Նրա միջամտության չնորհիվ էր, որ 1916 թ. Հայերը մեծ մասամբ զերծ մնացին տեղահանումից: Իսկ հիմա նա Բարձր առյանի առաջ շատ լավ բաներ է ասելու Ձեր մասին, Թալեսաթ փաշա: Մեջ է բերում Մելիքյանը:

14

Փորձագետ Զանդերս.— Բանակի երամանատարներն ու քաղաքացիական իշխանությունները զեկուցել են Կոստանդնուպոլիս այն, ինչ որ ես մի քիչ առաջ ասացի, իսկ դրա հիման վրա տեղահանության երամանները ընկել են հնարավորինս վատ ձեռքերի մեջ: Հարկ է այստեղ շեշտել, որ բորքական ոստիկանությունը պատերազմից առաջ բավականին լավ վիճակում էր: Ուներ 85 հազար աշխատակից և իսկապես առաջնակարգ զորամաս էր: Սակայն հետազայում ընդգրկվեց բանակի մեջ և մասնատվեց ու ստեղծվեց մեծ մասամբ օժանդակ մի ոստիկանություն, որը համալրված էր ոչ լավագույն տարրերից: Սասամբ ավագակներ էին, մասամբ՝ զործագորկներ: Այդ մարդկանց շրջանում կարգապահությունը բնականաբար բույլ էր: Այս հանգանքը պետք է հաշվի առնվի, եթե խոսկում է ոճրազործությունների մասին: Բացի դրանից, չպետք է անտեսել, որ ուղեկցող այդ խումբը գտնվում էր «սրբազն պատերազմ» անորոշ պատկերացման ազդե-

ցության ներքո, հանձին հայերի տեսնում էր քրիստոնյաների և հավատում, որ նրանց հետ անողոք վարվելով՝ քարի գործ է անու: Արդեն նշանաւում է էր նրանց վրա ու կոտորում: Մեր մասին կարող եմ ասել (որովհետև մենք, ինչպես այստեղ քարեհանց մատնանշել դը Լեփսիսիուսը, քանից կասկածի ենք ենթարկվել), որ ոչ մի գերմանացի երբեկ չի մասնակցել հայերի դեմ ճենարկված միջոցառումներին: Ըստիակառակը՝ միջամտել ենք, որտեղ կարողացել ենք: Թե Թալեսաթ անձնապես որքանով է մասնակցել հրամանների արձակմանը, չեմ կարող ասել. ինչքան զիտեմ, հայերի տեղահանման զիսավոր կարգադրությունը տրվել է 1915 թ. մայիսի 20-ին: Ամեն դեպքում դա կոմիտեի մտքի արտադրանքն է և անշուշտ արժանացել է նախարարների խորհրդի համատեղ համաձայնությանը: Գործադրությունը, ինչպես ասացի, նահանգապետների, ստորադաս պաշտոնյանների և ամենից առաջ ահավոր ոստիկանության ծեռքում է եղել: Համենայն դեպս, ես այստեղ ի պաշտոնն պետք է ասեմ, որ Թուրքիայում իմ անցկացրած հիմք տարիների ընթացքում ես երբեք Թալեսաթի ստորագրությամբ հայերի դեմ ուղղված որևէ հրահանց չեմ տեսել և չեմ կարող վկայել, որ այդպիսին գոյություն է ունեցել:

15

Մինչ նախագահող դատավոր դը Լեմբերգը բնոմիջումից հետո վերադառնում է դատարանի դահլիճ, Սողոմոն Մելիքյանը դեռ զրուցում է արագործն ծխող տարիքում մի մարդու հետ:

— Պարոն Անտոնյան, Դուք ծագումով հայ եք և Հրավիրված եք որպես պաշտպանության վկա: Կարո՞ղ եք ինձ ասել, թե ինչպես եք ձեռք բերել Ձեր ներկայացրած հինգ հետազոտերի բնագրերը, որոնք Թալեսաթ փաշան սկսած 1915 թ. սեպտեմբերի 3-ից ուղարկել է Հայեակի ոստիկանատուն:

Ֆրանսարանակ Արամ Անտոնյանը, Հայացքն ուղղելով ծխախոտից բարձրացող կապույտ ծխի օղակին, պատասխանում է.

— Առաջին հեռագիրը, ցավոք, միայն կարողացել եմ վերարտադրել ըստ Նայիմ բեյի պատճենների:

— Չե՞ք ասի, պարոն Անտոնյան, ո՞վ է Նայիմ բեյն, ու ի՞նչ կապ կար 1915 թ. նրա և Երիտթուրքերի ներքին գործոց նախարարի միջների:

— Նայիմ բեյն այն ժամանակ Հայեակի պատճենների մասին: Բացի դրանից, չպետք է անտեսել, որ ուղեկցող այդ խումբը գտնվում էր «սրբազն պատերազմ» անորոշ պատկերացման ազդե-

Մելիքյանը գիտի, որ Թալևաթ փաշան ևս շատ ուշադիր հետևում է այս խոսակցությանը: Երիտասարդ գիտնականը, չցանկանալով մեկ անգամ ևս ենթարկվել Թալևաթի քննադատությանը, թե ինքը հուշող հարցեր է տալիս, երբ խոսքը Երիտթուրքական կառավարության՝ արդեն սպանված ներքին գործոց նախկին նախարարի հանցանքի մասին է: Այդ պատճառով ամերիկացին ջանում էր ձայնի մեջ զետեղել որոշ կասկած, երբ հարցնում է.

— Սկսալմունքն ամբողջովին բացառված է, պարո՞ն Անտոնյան: Մտածում եմ. ինչպես կարող էր տեղահանության համար նույնպես պատասխանատու մեկը Ձեզ հանրավորություն տար ծանոթանալ կառավարության փաստաթղթերին:

Արամ Անտոնյանը առանց զժվարության հարցին տրամարանական պատասխան է տալիս:

— Դրա միակ պատճառն այն էր, որ նա ուզում էր հանցանքից ազատվել: Եթե հանկարծ, ինչպես և փառք Աստծո տեղի ունեցավ, իրադրությունը կրկին փոխվեր:

Մելիքյանը ուզում է մի անգամ ևս համոզվել.

— Հիշատակված հինգ հեռագրերը, որ ներկայացրել եք պաշտպանությանը, վստահութեան բնագրեր էին՝ Թալևաթ փաշայի ստորագրությամբ, այնպես չէ՞:

Ֆրանսիացի հայը մի քանի անգամ զլիսով հաստատում է:

— Ինչպես ասում եք: Ի դեպ, ևս անցյալ տարի Փարիզում մի զիրք ևմ հրատարակել, որի մեջ տեղադրել եմ բնագրերի ճշգրիտ պատճենները: Եվ եթե Ձեզ հետաքրքրում է վերնագիրը. «Documents officiels concernant les Massacres arméniens...» («Հայկական ջարդերին վերաբերող պաշտոնական փաստաթղթեր»):

Սողոմոն Մելիքյանը շարժում էր շրթունքները՝ մտքի մեջ դրոշմելով վերնագիրը:

— Ցավոք, — շարունակում է պարոն Անտոնյանը նկատելիորեն ճնշված, — Լոնդոնում թարգմանության ժամանակ շատ հեռագրերի բնագրեր կորան:

Մելիքյանը մատնացուց է անում խոսակցի պիշակի աջ գրպանում դրված թղթերը: Ապա լարված դեմքով խնդրում է.

Կկարդա՞ք այս հեռագրերից առաջինը:

Պարոն Անտոնյանը մոտենացուց է զատարանի միջանցքի պատին ամրացված մոխրամանին ու Հանգժնում ծխախոտը: Երբ կրկին խոսակցի առաջ է կանգնում, պատրաստակամությամբ հանում է հեռագրերի պատճեններն ու սկսում ընդիջումներով կիսամայն կարդալ.

«Հեռագիր 502: Հալեպի նահանգապետարան: Հանձնարարում ենք կանանց ու երեխաների վրա ևս տարածել այն հրամանները, որոնք Ձեզ առաջարկված են արական սեռի նշանակոր անձանց նկատմամբ, և այդ առաջարյանը կատարելու համար նշանակել վստահելի պաշտոնյաների: Սեպտեմբերի 3, 1915 թ., ներքին գործոց նախարար Թալեաթ»:

«Թալևաթ, Թալևաթ», — զնզում է Սողոմոն Մելիքյանի ականջներին: Ամերիկացի պատմաբանին չար ստվերի պես հետևող Թալևաթ փաշային հանդուրժելու չափն անցած է այլևս: Սպանության մեղադրանքով դատարանի առաջ կանգնած Սողոմոն Թեհլերյանի թոռան համար մեկ անգամ ևս հնչում է անդուսպ բացականչությունը՝ Թալևաթ:

— Առհասարակ ստուգվել են թուրքերնից ֆրանսարենի վերածված այդ թարգմանությունները, պարո՞ն: Եթե դա արել է այս հայ զրչակ Անտոնյանը, ապա պարզ է, թե ինչ նպատակով է կատարված այս թարգմանությունը:

Մելիքյանին չի զարմացնում, որ պարոն Անտոնյանը հանկարծ անհայտանում է: Օդեղներ կերպարանքի պես մարդը կարծես հալվել-չքացել է: Պատմաբանն ուրեմն վերստին կենտրոնանում է Թալևաթ փաշայի վրա՝ պարզաբանելով միտքը:

— Որքան գիտեմ, պաշտպանության կողմից ներկայացված բնագրերի իսկությունը երդվյալ լեզվագետների կողմից ըստ կանոնի ստուգվել է:

— Այլևս ոչինչ չեմ ուզում լսել այսպես կոչված հրամանագրերի մասին: Հասկանո՞ւմ եք, Մելիքյան:

Թալևաթ փաշան կատաղած՝ երկար ձեռքերը թափահարում է օգում: Բեղերը՝ կաղամախուր բարակ ճյուղերի պես, անդադար ցնցվում են: Նրա ձայնի հնչերանցը որոշ չափով ուժեղանում ու սրվում է:

— Թույլ չեմ տա, որ ինձ փակցվի բոլոր ժամանակների մեծագույն մարդասպանի պիտակը: Այն էլ Ձեզ նման մարդկանց կողմից:

Սողոմոն Մելիքյանը մնում է անվրդով:

— Եթե դա ձեզ կհանգստացնի, Թալևաթ փաշա, մարդկության պատմության մեջ եղել են շատ ավելի մեծ մարդասպաններ, քան Դուք:

— Մի՛ սկսեք հիմա ինձ համեմատել Աղա խանի, Հոների կամ խաչակիրների հետ: Ի դեպ, վերջիններս քրիստոնյա էին, որոնք հանուն Աստծու իրենց իրավունք վերապահեցին Արևելքում անպատիժ ավերելու, կողոպտելու ու պղծելու:

Պատմաբան Մելիքյանը զլուխն է թափահարում:

— Խոսքո ոչ թե վաղ անցյալի, այլ գալիք պատմության մասին է, Թալեաթ փաշա: Զեր մաշից հետո նղել է Խորհրդային Միություն կոչվող մեծ տերության գևներայիշմուս Ստալինը ...

Թալեաթ փաշան կտրուկ ընդհատում է:

— Ստալին, Խորհրդային Միություն: Այս պահիս գաղափար չունեմ դրանց մասին: Իմ բարեկամներն ու ես, մնաք միշտ էլ այդ անիծյալ Հնենին խիստ վտանգավոր հանցագործ էինք համարում:

— Իրո՞ք: Սակայն Զեր կուսակից ու գործընկեր էնվեր փաշան դրան բռնորովին այլ կերպ է նայել: Մոսկվայում նա ժամանակավոր ապաստան էր գտել բռլեկիների մոտ, և ասում են, որ ինչ-որ ժամանակ նա Հոչակել է Թուրքմենստանի սուլթանություն: Ո՛չ, իմ խոսքը Ստալինի մասին է, — վերադառնում է Մելիքյանը խոսակցության ելակետին: — Ստալինը, սկսած 1922 թվականից, հաջորդեց Լենինին: «Պողպատև մարդը» նախ պայմանագիր կնքեց Գերմանիայի ու յիսկանցլեր Հիտլերի հետ, սակայն հետո Խորհրդային Միությունը ստիպված եղավ Գերմանիայից կաշին փրկել:

— Ուրեմն մեծ տերությունները կրկի՞ն պատերազմնեցին իրար դեմ, — ուզում է հավաստիանալ Թուրքիայի ներքին գործոց նախակին նախարարը:

Երիտասարդ պատմաբանը զլսով հաստատում է:

— Գերմանիան, իտալիան ու Ճապոնիան մնացած աշխարհի դեմ: 50 միլիոն կյանք արժեցավ այս երկրորդ աշխարհամարտը:

— Իսկ ի՞նչ էր անում այդ Զեր Ստալինը, — կոպիտ ընդմիջում է Թալեաթ փաշան:

— Ստալինը, անկախ այդ պատերազմից, միլիոնավոր հայրենակիցների ձերբակալց ու սպանել տվեց:

Միջինավո՞ր:

Թալեաթի դեմքի թերահավատությունը տևղի է տալիս որոշ լարվածության: Ակնհայտորեն նրան հետաքրքրում է Ստալինի՝ սեփական երկրում զանգվածային սպանությունների շարժառիթը:

— Ռուսներն իրենք խոսում են ավելի քան մեկ միլիոն զոհերի մասին, — հաստատում է Մելիքյանը:

— Կոտորել սեփական ժողովրդին՝ դա հիվանդագին երևույթ է, պարուն:

Սոլոմոն Մելիքյանը մի պահ պապանձվում է՝ տևանելով խոսակցի բացահայտ վրդովմունքը: Ապա արագ ու կտրուկ վրա է բերում.

— Հիվանդագի՞ն: Այդ Դո՞ւք եք ասում: Հենց Դո՞ւք, Թալեաթ փաշա:

— Այո՛, և ինչո՞ւ չէ:

Սոլոմոն Մելիքյանի լեզուն մի քանի անգամ արագ-արագ անցնում է չորացած շրթունքների վրայով:

— Եղեռնի ենթարկված հայերը նույնպես Զեր հայրենակիցներն էին:

— Ինչ-որ չափով դա ճիշտ է..., — զիջում է Թալեաթ փաշան: Մելիքյանը համառորեն շարունակում է համեմատել:

— Ես քիչ առաջ այստեղ հիշատակեցի Գերմանիայի ույլսկանցլեր Աղոփ Հիտլերին, որովհետև նա Ձեզնից էր սովորել, թե ինչպես կարուի է Եվրոպայում ծրագրված կերպով բնաջնջել լեհերին ու հրեաներին:

— Ինձնից, պարո՞ն, — վրդովված հարցնում է բեղերով մարդը, — սակայն այժմ Դուք կրկին չափն անցնում եք: Ուրեմն ըստ Ձեզ՝ Գերմանիայի ինչ-որ ույլսկանցլեր ինձնից է դաս առել, թե ինչպես են բնաջնջում օտար ժողովուրդներին: Ե՞րբ և որտե՞ղ է դա Ձեր կարծիքով տեղի ունեցել:

— Ձեմ ասում, որ Աղոփ Հիտլերը Թալեաթ փաշա անունն է տվել, — չափավորում է ասածը Մելիքյանը:

Թալեաթ փաշայի հետաքրքրությունն արթնացած է: Ինքն իր քաղաքական համոզմունքներով Գերմանիայի կառավարության ղեկավարի համար օրինա՞կ: Անհավատալի բան: Մանրամարմին մարդը մեծամտորեն ողորում է բեղերի ծայրը:

— Պատմե՞ք, պարո՞ն:

Այժմ Մելիքյանը տևանում է, որ բախտաթուղթն իր ձեռքում է: Թալեաթ փաշան՝ այդ նախկին քաղաքագետն ու դահճը, հավաստի աղբյուրից է լսելու իր անվան հետ կապված ոճրագործությունների մասին:

— Մինչ ևս Հիտլերի մասին կպատմնմ, պարոն Անտոնյանը կկարդա Զեր ստորագրած հրամանները, համաձայն եք:

— Ավելի ո՞ւշ, — մերժում է կտրուկ Թալեաթ փաշան խոսակցի առաջարկը: Ապա հարցնում է հետաքրքրված, — ի վերջո ի՞նչ է ասել այդ Հիտլերն իմ մասին և ի՞նչ է արել ինձնից հետո, պարո՞ն: Նրան է՞լ ևս մաշվան դատապարտել:

— Մահվա՞ն դատապարտել, — զարմանում է Մելիքյանը: — Ինչպես զլսի ընկաք:

Թալեաթ փաշան չի դժվարանում պատասխան տալ: Ներքին գործոց նախկին նախարարը սառնասրտորեն պարզաբանում է իր հարցի խոր իմաստը:

– Մտածում եմ, որ եթե ույիսսկանցլեր պարոն Հիտլերը մահվան դատապարտված չլիներ, նա Ձեզ նմաններին կենդանի չէր թողնի:

Թալեաթ փաշայի անպատկառությունը երիտասարդին մի պահ զրկում է խոսելու ունակությունից: Բավական ժամանակ է անցնում, մինչև պարզ է զառնում, որ չարժե բանավեճի մեջ մտնել թալեաթ փաշայի հետ հենց նոր լսածի համար: Իրեն զսպելով՝ նա փրկվում է՝ Աղոփ Հիտլերից մի մեջերում անկով. «Հրաման եմ արձակել, որ պատերազմի նպատակը որոշակի սահմանագծերի հասնելը չէ, այլ հակառակորդի ֆիզիկական ոչնչացումը: Դրա համար վարժեցրել եմ «Մեոյալների գանգ» անունով ջոկատները՝ լեհական ծագում ունեցող և լեհերեն խոսող տղամարդկանց, կանանց ու երեխաներին անողոքաբար և անզթորեն մահվան գիրկն ուղարկելու հրամանով: Միայն այդպես կնվաճնենք կենսատարածքը, որի կարիքն ունենք: Ի վերջո, ո՞վ է այսօր ղեկաս խոսում հայերի բնաշնչման մասին»:

Թողնելով, որ որոշ ժամանակ անցնի, ապշած թալեաթ փաշան հարցնում է.

– Բացառիկ մեծ գերմանացի մի քաղաքագե՞տ է դա ասել:

– Եթե այդ երկու ածականները բառացի եք օգտագործում ... Սակայն Դուք, միենույն է, զա չեք կարող իմանալ, թալեաթ փաշա: Այդ պարոն Հիտլերը ցածրահասակ էր ու վտիտ: Ճիշտ և ճիշտ ծաղրանկարը այն արիացիների, որոնց անունով նա երդվում ու որոնց աստվածացնում էր: Այսպիսով, ֆիզիկապես Ձեր կատարյալ հակապատկերը, թալեաթ փաշա: Զէ՞ որ Դուք Ձեր լայն ուսերով, ակնառու զլիսով, ակնածանք ներշնչող բեղերով, այնուամենայնիվ, վայելչատես մարդ եք: – Հակառակ իր կամքին՝ Սողոմոն Մելիքյանը ստիպված է իր զովարանության վրա ժպտալ:

– Դև իշարկե, – թալեաթ փաշան արազաղի պես փրկում է, կարծես հայելու առաջ կանգնած լինի: – Հասարակության մեջ կինս իմ պատճառով ամաչելու որևէ պատճառ չի ունեցել: Իմ պաշտոնավարման ժամանակ երբե՞ք ո՛չ տանը, ո՛չ ֆրանսիայի մայրաքաղաքում, ո՛չ էլ այստեղ՝ թնդինում:

Աննկատ թողնելով սին խոսակցությունը՝ Մելիքյանը շարունակում է.

– Մյուս կողմից՝ այդ Աղոփ Հիտլերը, այլ անունով՝ Նիքլաուլեր, գերմանացի չեր, այլ բնիկ ավստրիացի, այն էլ ներկարարի ոչ այնքան երևելի մասնագիտությամբ:

– Դա ինձ ամեն ինչ բացատրում է, – հնչում է պատասխանը:

– Ի՞նչ նկատի ունեք:

Թալեաթ փաշան աջ ձեռքով բազմիմաստ մի շրջան է գծում:

– Պատկերացրե՞ք միայն, եթե այդ ավստրիացի Հիտլերի նման աննշան մի ներկարար կարողացել է առաջնորդել գերմանացու պես ուժեղ աղջի. ուրեմն ինչպիսի հատկություններ պետք է այդ մարդն իր մեջ ունեցած լինի: Սակայն խնդրում եմ ճշգրտորեն ասացե՞ք, Կ՞որ է պարոն Հիտլերն այդ բանը հայերի մասին ասել:

Մելիքյանի պատասխանը չի ուշանում.

– Բանակի զորահրամանատարների առաջ ունեցած ելույթում, երբ նա փորձում էր ցրել նրանց տարակուսանքը «ալավոն ստորին ցեղի» բնախճման ծրագրի վերաբերյալ:

– «... Սլավոնական ստորին ցեղի», – արձագանքում է թալեաթ փաշան, – շատ գեղեցիկ է հնչում: Բայց Ե՞րբ, պարո՞ն ...

Այստեղ ևս պատմարանը պատրաստի պատասխան ունի:

– Դա տեղի է ունեցել 1939 թ. օգոստոսի 22-ին՝ Լեհաստանի վրա Գերմանիայի հարձակումից քիչ առաջ:

– Լեհաստանի՝ վրա: Ուրեմն արշավանքը ղեպի Արևելք էր ուղղված, այնպես չէ՞: Հուսամ նաև այդ անիջալ բոլշևիկների ղեմ՝ իրենց Լենինով հանդերձ:

– Ստալին, – ուղղում է Մելիքյանը սառնորեն:

Ներքին գործոց նախակին նախարարը զլիսով է անում:

– Եթե այն ժամանակ ևս կարողանայի անել այն, ինչ որ իսկապես ուզում էի ...

– Պետք է նախանձեք Քեմալ Աթաթուրքին, որ Հայաստանի ութիններորդը միացրեց Թուրքիային: Այդ թվում և Արարատը՝ հայերի սուրբ լիոր:

– Ընդ որում, Սերի այդ ամոթալի պայմանագրով ղեռ մեկ տարի առաջ մեզ համար հեռանկարն այնքան էլ լավ չէր ...

– Ամոթալի պայմանագի՞ր: Այն պայմանագիրը, որով Թուրքիան պետք է ճանաչեր Հայաստանի Հանրապետության անկախությո՞ւնը. որով Թուրքիայում վերադարձվելու էին հայերի իրավունքներն ու ունեցվածքը. որով պետք է պատճվեին պատերազմի հանցագործներն ու ջարդերի մեղավորներ:

Մելիքյանը բազմանշանակ լուս է: Սակայն թալեաթ փաշան ոչ մի արձագանք չի տալիս: Երիտասարդը շարունակում է.

– Եթե զաշնակից պետությունները կենսագործեն Սերի պայմանագիրը, զա օրհնություն կիխեր կեղերփած հայ ժողովրդի համար: Սակայն մեծ տերություններն այլ շահեր ունեին: Այդպիսով, 1920 թ. սեպտեմբերին Աթաթուրքը կարողացավ անպատիծ կերպով գրավել

Հայաստանի Հանրապետությունը: Դաշնակիցներն, իհարկե, հանուն իրենց խղճի հանգստության չափազանց մեծ ցավ հայտնեցին նղած հանցագործության համար:

— Իսկ ի՞նչ կամեք 40 հազար թուրք խաղաղ բնակիչների մասին, որոնք ուստական բանակում ծառայող հայ զինվորների կողմից 1917 թ. դեկտեմբերի զինադադարից հետո տունդարձի ճանապարհին սպանվեցին: Ես ամեն ինչում չեմ, որ համաձայն էի Մուստաֆա Քեմալի հետ, բայց այստեղ նա շատ լավ փաստեր ուներ հայերի դեմ:

Թալեաթ փաշան գոհունակությամբ շոյում է բեղերը, կարծես ասել ուզելով, որ ինքը շատ ավելի լավ չէր կարողանա հարցերը լուծել, քան Քեմալ փաշան:

— Սակայն 1920 թ. դեկտեմբերին հայերն իրենք անվավեր ճանաչեցին Սերի պայմանագիրը, և դա դուրս եկավ հույների դեմ...

— Ճիշտ է, — Հաստատում է Սողոմոն Մելիքյանը, — Ձեր հետորդները, Թալեաթ փաշա, Ձեզ նման էին մտածում: Հետո, երբ Լողանի ժողովը ցրվեց, նոր պայմանագրերում Հայաստան բառն այլևս չկար:

— Ուժեղ ազգ ենք մենք՝ թուրքերս, պարոն: Մի ազգ, որ ունի քաղաքական մեծ հեռատեսություն ...

— Պիտի զարմանայիք, եթե...՝ մենք է ընկնում Մելիքյանը: Սակայն իր տարակուսանքները, ենելով այսօրվա տվյալներից, իրեն է պահում:

— Ավսու միայն, որ ես այլես...

Եվ հանկարծ ցնցվելով՝ հսկա մարդը դեմքն առնում է ձեռքերի մեջ:

— Ինչպես արդեն ասացի, — Սողոմոն Մելիքյանն ուշադրությունը ըստում է խոսակցության նախկին թեմային, — այս երկրորդ աշխարհամարտն արժեցավ 50 միլիոն մարդկային կյանք: Ասում են, որ միայն հաղթող կողմերից մեկը՝ Խորհրդային Միությունը, տվյաց 20 միլիոն գուշ, — և կարծես միայն ինքն իր համար ավելացնում է, — և ինչպես նոր ժամանակներում պարզվեց՝ պյուրոսյան հաղթանակ էր:

— Պյուրոսյան հաղթանակ: Գերմանիայի դեմ:

— Այո՛: Բայց դուք դա չեք հասկանա, Թալեաթ փաշա, — Մելիքյանը կանխում է որևէ հետագա բացատրություն:

— Հիսուն միլիոն, ուրեմն, ասացիք, պարոն: — Զայրութից խոսակցի դեմքի կարմրությունն անհնար է չնկատել: — Իսկ այստեղ՝ դատարանում, ժամանակ են կորցնում մեկ միլիոն հայերի սպանության համար: Փոխանակ քնննեն Թալեաթ փաշայի նենք սպանության գործը, որպեսզի վախսու մարդասպանն իր պատիժն ստանա:

— Պատիժնը, դեմ չեմ, — ասում է Սողոմոն Մելիքյանն ու արագ ավելացնում, — Եթե միայն երկրային արդարադատությունը քրևական օրենսգրքում գտնի իր համարժեքը, խնդրեմ: Թույլ տվեք Ձեր երկրորդ նախադասությունը դիտել որպես խոստովանություն՝ ջարդերին ձեր մասնակցության առումով:

— Ես ոչինչ չեմ խոստովանում, — Փշացանում է Թալեաթ փաշան:

— Իսկ այժմ եկե՛ք լսենք պարոն Անտոնյանին, — ասում է Մելիքյանը՝ առանց ուշադրություն դարձնելու նրա խոսքին, — Եթե, իհարկե, նա մեզ համար կարդա թուրքիայի ներքին գործոց նախարար Թալեաթ փաշայի հաջորդ հրաման-հեռագրերը:

— Վերջապես ինձ հանգի՞ստ թողեք Ձեր ստերով, — գոռում է Թալեաթ փաշան՝ հակառակ իրենց երկկողմյա համաձայնության:

Առանց զայրացած մարդուն գեթ մի ավելորդ հայացքի արժանացնելու՝ Մելիքյանը ներողամտություն հայցող տոնով դիմում է պարոն Անտոնյանին.

— Երբ եպիկոպոս Բալաքյանը ներսում վերջացնի իր ցուցմունքը, եթե խոդրեմ՝ ինձ համար կկարդա՞մ մյուս հեռագրերը:

Սողոմոն Մելիքյանը շրջվում է դեպի դահլիճի դուռը, որտեղ վաղ առավոտից տեղի է ունենում երդյալների ատյանի դատական նիստն իր հայ պատի դեմ, որը արձանագրություններում կոչվում է Սալոմոն Թելլիդյան:

16

Այնուհետև հարցաքննում են հայ առաջնորդական տեղապահ եպիսկոպոս Գրիգորիս Բալաքյանին, որ Մանչեստրից Բեռլին է եկել դատավարության համար: Վկան 42 տարեկան է և պատկանում է հայ ազգային եկեղեցուն: Խոսուն է կոտրտված գերմաներենով, սակայն քարզանչի կարիք չի զգացվում:

Վկան. — Բուն դեպքի մասին չեմ կարող ցուցմունք տալ, ինչպես և ամբաստանյալի անձի մասին, ես երան երեք չեմ ճանաչել: 1914 թ., երբ սկսվեց աշխարհամարտը, Բեռլինում էի և բողեցի Բեռլինը 1914-ի սեպտեմբերի կեսերին՝ ուղիղ Կոստանդնուպոլիս վերադառնալու համար: Այնտեղ 1915 թ. ապրիլի 21-ին 280 այլ հայ մտավորականների հետ ոստիկանների կողմից ձերբակալվեցի ու աքսորվեցի: Մեզ 36 ժամ երկարուղով տեղափոխվեցին Ենկյուրի մոտերը: Այնտեղ մեր քարավանից մոտ 90 հոգու աքսորվեցին Այսա: Մնացած մոտ 190 հոգու Չանորը: Այս մարդկանց հետո կրկին Ենկյուրի տեղափոխվեցին ու այնտեղ էլ սպա-

Աեցին: 190 հոգուց մնացին միայն 16-ը, որոնց ձեռք չտվեցին: Չանդրոս կար 40 հայկական տուն, որտեղ բնակվում էր 250 մարդ: Ահա այս մոտավորապես 250 հայերի հետ Կոստանդնուպոլիսի 16 արտօրականները պետք է քշվեին Դեր Զոր, բայ որում ներքին գործոց նախարարի հրաման-հեռագրով: Սակայն Քաստենունու նահանգապետ Ռեշաղ փաշան չինազանդվեց ներքին գործոց նախարարի հրամանին, որի համար նրան անմիջապես պաշտոնանկ արեցին: Նրան փոխարինողը ուզում էր Ենթարկվել հրամանին ու մեզ աքսորել: Մենք նրան դրամ տվեցինք՝ մոտ 800 բուրքական ոսկի: Մեզ այլևս չարտաքսեցին, և մինչև 1916 թ. փետրվարը մնացինք տեղում: Սակայն հետո Քաստենունի ուղարկեցին Էնկուրիի նահանգապետին, որը մեր լսածի համաձայն Էնկուրիի նահանգում սպանել էր 82000 հայ՝ կին, երեխա ու տղամարդ: Այս նոր նահանգապետն իհարկե կատարեց ներքին գործոց նախարար Թալեաք փաշայի հրամանը և մեզ էլ քշեց Դեր Զոր: Միայն Յոզդարի ու Բողազլյանի միջև կոտորել էին մոտ 43000 հայ՝ կանանց ու երեխաների հետ միասին: Մենք նույնպես վախենում էինք, որ մեզ էլ կսպանեն, քանի որ պաշտոնական բառը «տեղահանուրյուն» էր, իսկ իրականում դա բնաջնջման կազմակերպված քաղաքականուրյուն էր: Եթե ես այստեղ կենդանի կանգնած եմ, ապա դա «քախչիշի» շնորհիվ է: Իհարկե մեզ հետ շատ վատ վարդ վարդեցին: Այնուամենայնիվ գոհ էինք ու մտածում էինք, որ եթե մեզ չսպանեն, ապա դա արդեն բախտավորություն է: Եթե հասանք Յոզդար, որն ամենաարյունալի տեղն էր, մոտակայքում չորս ժամվա հեռավորությամբ մի հովտում, տեսանք երկար մազերով մի քանի հարյուր գլուխ, այսինքն՝ կանանց ու աղջիկների գլուխներ: Մեզ հետ էր Ծուրքի անունով ոստիկանության մի հարյուրապետ: Հարյուրապետին ասացի: «Լսել էի, որ հայ տղամարդկանց սպանում են, բայց կանանց ու աղջիկներին ոչ: «Այո»,՝ պատասխանեց նա,՝ «Եթե միայն տղամարդկանց սպանենք, իսկ կանանց ու աղջիկներին ոչ, ապա 50 տարի անց դարձյալ մի քանի միլիոն հայ կլինի: Ուրեմն պարտավոր ենք սպանել նաև կանանց ու երեխաներին, որպեսզի ընդմիշտ վերանան ներքին ու արտաքին խռովությունները»: Այսպիսով՝ ո՞չ ոք չպետք է մնար, որպեսզի դատարանում վկայություն տվող չիներ: Բայց, փառ Աստծո, մի քանիսը դեռ կան:

Պաշտպան ֆոն Գորդոն.— Ո՞ւմ միջոցով եք ազատվել:

Վկա.— Չատ տխուր պատմություն է, բայց ես կարող եմ այն ամենի մասին, ինչ զիսիս է եկել իհնգ տարիների ընթացքում, պատմել շարաբներով, ամիսներով:

Պաշտպան ֆոն Գորդոն.— Պիտի խնդրենք՝ այստեղ խոսեք կարծութեանալի լեզվով:

Վկա.— Ես փախս: Հասա Ամանոսի լեռները, որտեղ գերմանացի ճարտարագետները քունելներ էին կառուցում: Ամանոսի լեռներում աշխատանքի էր ընդունված մոտ 8000 հայ, որոնց գերմանացիները հովանավորում էին: Սակայն երբ հրաման եկավ, որ այդ հայերն էլ պետք է տեղահանվեն, փախս Տավրոսի լեռները, որտեղ դարձյալ գերմանացի ճարտարագետները լեռներում քունել էին կառուցում: Երբ բուրք պաշտոնյաներն իմացան, որ ես հայ հոգևորական եմ, ստիպված եղանորից փախչել և հասա Ալանա: Այնտեղ կրկին գերմանացի ճարտարագետների մոտ մնացի: Սրտագին շնորհակալությամբ պետք է իհշատակեմ այն օգնությունը, որ իմ քշվառության մեջ ստացած գերմանացի ճարտարագետներից: Եթե Անտանտի զինվորները Դամասկոսը գրավելուց հետո շարժվում էին դեպի Հալեպ, բուրքերն Աղանայում հայերին ասում էին. «Մենք ձեզ կենդանի չենք բողնենու, որպեսզի դուք չկարողանաք մեր քշնամիների՝ դաշնակիցների հետ ծիծաղել մեզ վրա և մեզ վնաս պատճառեն»: Ինձ պատահեց գերմանացի մի սպա, որ ինձ զինվորական համազգեստ տվեց, և գերմանացի զինվորի համազգեստով գերմանացի ենթասպաների ու զինվորների հետ երկարությունով գնացի Կոստանդնուպոլիս: Թաքնվեցի ծանրքների մոտ՝ տարբեր տներում, մինչև 1918 թ. հոկտեմբերի համաներումը: 1918–19 նոյեմբերին քողեցի Թուրքիան ու հայերի նկատմամբ գործադրած ոճրագործությունների մասին գեկույցներով մեկնեցի Փարիզ՝ այնտեղ ճշմարտությունը լույս աշխարհ հանելու նպատակով:

Պաշտպան ֆոն Գորդոն.— Նորին գերազանցություն կիման ֆոն Զանդերսը մեր՝ պաշտպաններիս խոճի մեջ երկպառակություն մտցրեց: Նա այստեղ հայտարարեց, որ ո՞չ թե Թալեաք փաշան է եղենագործությունների պատասխանատուն, այլ ստորադաս մարմինները:

Վկա.— Ես, իհարկե, Թալեաքին էլ եմ ճանաչել անճնապես: Ղեկը նրա ճեռքին էր: Նա ամեն ինչ անում էր խոր զիտակցությամբ: Նա այնպես էր անում, որ ամեն ինչի պատասխանատուն ինքը լինի և որևէ նեկին հաշիվ տալու կարիք չունենա:

Պաշտպան Նիմայեր.— Ձեզ հայտնի՞ է, պարո՞ն վկա, որ հայերի շրջանում տարածված է Թալեաքի ենտևայլ խոսքը. «Ես մեկ օրում ավելի շատ բան արեցի Հայկական հարցի լուծման համար, քան անցյալում Աբրու Համբիլ 30 տարում:

Վկա.— Ո՞չ միայն 30 տարում, այլ Թալեաքն արեց այն, ինչ 500 տարիա ընթացքում էլ չի եղել: Սակայն այն խոսքը, որի մասին ինձ հարց տվեցիք, ես անձամբ Թալեաքի իերանից չեմ լսել:

Դատախազ Գոլճիք.—Պարոն նախագահն արդեն բույլ տվեց շատ հեռու գնացող հարցադրում, թե մեղավո՞ր է Թալեարք հայկական ոճ-րազործությունների համար: Այս հարցը, սակայն, բոլորովին էական չէ, քանի որ, ըստ իս, ամենին չի կարելի տարակուսել որ ամբաստանյալը հանձին Թալեարքի իր առջև տեսնում էր այդ եղենագործությունների հանցավորին: Դրանով շարժառիթը լիովին պարզ է դառնում: Ես նաև այն կարծիքին եմ, որ այստեղ՝ դատական այս ատյանում, ամբողջապես բացառվում է Թալեարքի հանցավոր լինելու կամ չլինելու հարցի պարզաբնումը: Այդ դեպքում անհրաժեշտ պիտի լիներ պատմական մի վճիռ կայացնել, որի համար կարիք կզգացվեր բոլորովին այլ փաստական նյութի, քան այն, ինչ այստեղ առկա է:

Նախագահ.—Ուզում եմ մեկ անգամ ևս հարցնել, թե արդյոք դադարեցվելո՞ւ է մնացած վկաների հարցաքննությունը (հմտ. հավելված, էջ 129 և հաջորդներ):

Պաշտպան Վերքառութեառ.—Կիսնորեի այսօր իսկ լսել փորձագետ քժիշկների եզրակացությունը:

Նախագահ.—Այդ դեպքում պետք է ամբաստանյալին հարցնեմ՝ ցանկանո՞ւմ է որիշ վկաների հարցաքննությունը:

Ամբաստանյալ.—Պիտի ցանկանայի հարցաքննվեր գրող Արամ Անտոնյանը (հմտ. հավելված, էջ 132):

Նախագահ.—Երդվյալները Ձեզ հավատում են, որ Դուք դեպքի պահին համոզված եք եղել, որ Թալեարք փաշան է եղել այն մարդը, որը պատասխանատու է ջարդերի համար:

Ամբաստանյալը հայտարարում է, որ ինքը համաձայն է, որ զանց առնվի այլ վկաների հարցաքննությունը (հմտ. հավելված, էջ 125–133): Հաջորդում է միայն քժկական փորձագետների հարցաքննությունը:

17

Մելիքյանը մեծ դժվարությամբ է հստեսում վրդովված դեպի ելքը շտապող Արամ Անտոնյանին:

—Պարոն Անտոնյան, քանի որ դատարանը չի ցանկանում Ձեզ լսել ...

Երիտասարդի թուքը կպչում է շնչափողին, և նա դժվարությամբ է զսպում Հազի նոպան: Պարոն Անտոնյանը կարեկցանքով թմփացնում է Մելիքյանի մնջքին: Բացված ձևոնաթաթով նրա թեթև Հարվածները կարծես հրաշք ևն գործում:

— Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ,—մաքրելով աչքերից հոսող արցունքները՝ շարունակում է Սողոմոն Մելիքյանը:

— Ինչպես պայմանավորվեցինք, սիրելի՝ պարոն Անտոնյան, ինձ համար կկարդա՞ք Հավելի նահանգապետարան ուղարկած հրաման-Հեռագրերից մի քանիսը:

— Որո՞նք,— պատրաստակամությամբ փարիզցի վկան բաց է անում պայուսակը, որի մեջ երևում են իրար ամրացված պատճենները:

— Հնարավորին չափ ավելի կարծ տեքստերից, —սահմանափակում է Մելիքյանը, —չէի ցանկանա բժշկական փորձագետների կլույշներից շատ բան բաց թողնել:

«Բժշկական փորձագետների» հշատակումը կրկին թևացնում է Արամ Անտոնյանի զայրույթը: Կարմրատակած գևմքով նա գոռում է:

— Ես իսկապես չեմ հասկանում, պարոն, թե զատարանը ինչու զանց առավ իմ հարցաքննությունը:

Մելիքյանը խոսակցին հանդարտուցնելու միտումով բարձրացնում է երկու ձեռքերը: Գլխի բազմանշանակ շարժումը ցույց է տալիս կաղնեւ երկինքի գուռը, որի հստեսում ընթանում էր զատական նիստը:

Պարոն Անտոնյանը կրկին հավաքում է իրեն: Թեթևորեն կոկորդը մաքրելուց հետո զուսպ ձայնով կարդում է թղթերից մնկը. «Հեռագիր. 1915 թ. սեպտեմբերի 15: Արդեն տեղեկացված է, որ կառավարությունը կոմիտեի հրամանով որոշել է ամբողջապես բնաշնչել Թուրքիայում բնակող բոլոր հայերին: Բոլոր նրանք, որոնք կընդիմանան այս հրամանին և այս որոշմանը, կկորցնեն իրենց քաղաքացիությունը: Առանց խնայելու կանանց, երեխաներին ու հիվանդներին, որքան էլ որ աղետալի լինեն բնաջնջման միջոցները, առանց խղճի ձայնին լսելու՝ վերջ տալ նրանց գոյությանը: Ներքին գործոց նախարար Թալեարք»:

Մի արագ հայացքով Անտոնյանը համոզվում է, որ խոսակիցը համակ ուշադրություն է: Ապա նոր միայն շարունակում է:

— Ահա՝ թալեամիթի պատասխանը իշխանությունների մի հարցին. «Նման որքանոցի կարիքը չկա: Հիմա ժամանակը չէ, որ, տեղի տալով զգացմունքներին, ժամանակ վատնենք նրանց (որքերին) կերակրելու ու նրանց կյանքը երկարացնելու վրա: Արտաքսե՛ք նրանց ու այդ մասին մեզ տեղեկացրե՛ք: Սեպտեմբերի 21, 1915 թ., ներքին գործոց նախարար Թալեարք»:

Սողոմոն Մելիքյանը այլևս չի կարողանում լուել: Նա ընդմիջում է խոսակցին:

— Թալեամիթ փաշան նաև արգելել էր ամուսնությունը Հայ կանանց հետ, այնպես չէ՞»:

Պարոն Անտոնյանը զլիսի շարժումով հաստատում է այդ.

— Իսկ արդեն տեղի ունեցած ամուսնությունների ղեպքում թալևաթր հրամայել է բաժանվել կնոջից ու նրան անապատ քչել: Եվ դարակի բռն իմաստով:

Ստեղծվում է փոքր, բայց իմաստալից դադար:

— Գուցե վերծանված մի հեռագիր է՞լ, պարոն Անտոնյան, — խընդրում է ամերիկացի պատմաբանը:

Անտոնյանը թերթում է իր հավաքածուն, ապա կարդում. «Չնայած հիշյալ անձերի ոչնչացման համար ջանք չննայելու որոշմանը՝ տեղեկանում ենք, որ այդ անձերը ուղարկվել են կասկածելի վայրեր, ինչպիսին են՝ Սիրիան ու Երուսաղեմը: Նման հանդուրժողականությունը աններելի լիսալ է: Այդ կարգի խռովարաբների աքսորավայրը պետք է լինի անգոյությունը: Հանձնարարում եմ ըստ այդմ վարվել: Դեկտեմբերի 1, 1915 թ., ներքին գործոց նախարար Թալեաք»:

Մելիքյանին հուղում է մի այլ կարեսոր Հարց.

— Թալեաթ փաշան երեսէ որոշակիորեն արտահայտվե՞լ է երկրում բնակվող օտարերկրացիների, ինչպես, օրինակ, Զեր գրչակից Արմին Թ. Վեզների մասին, որն այն ժամանակ ապրում էր այնտեղ:

Մարզը լեզվի արագ շարժումով աջ ըթամատը թրջելուց հետո կրկին թերթում է փաստաթուղթը:

— Ահա՝ ասում է Արամ Անտոնյանը, — թիվ 745: «Տեղեկանում ենք, որ հայկական թերթերի մի քանի թղթակիցներ, որոնք մնում են Զեր զավառում, ծեռք են բերել ողբերգական միջադեպներ ներկայացնող լուսանկարներ ու փաստաբորբեր և դրանք հանձնել Զեր շրջանի ամերիկյան հյուպատոսին: Կարգադրում են, որ այդ կարգի վտանգավոր անձինք ճերքակալվեն ու մեջտեղից վերացվեն: Դեկտեմբերի 11, 1915 թ., ներքին գործոց նախարար Թալեաք»:

Մելիքյանը երկու ձեռքով բռնում է խոսակցին ուսերից.

— Ծնորհակալ եմ, պարոն Անտոնյան, ցանկանում եմ Ձեզ բարի վերադարձ Փարիզ: Յօն voyage:

Մինչ Արամ Անտոնյանը, Բարձր դռան ներքին գործոց նախարարի հանցավորության մասին ապացույցներով լի պայուսակը իրեն սեղմած շտապ ուղղվում է ղեպի ելքը, Մելիքյանի հետեւում լսվում է բարձր մի ձայն:

— Հայերի նկատմամբ երեսէ վստահություն չեմ ունեցել: Ինչ էլ մի գրող է: Ամեն ինչ զեղծարարություն է, պարոն:

— Դա առաջ էլ է եղել, Թալեաթ փաշա, — ամերիկացին արդեն բացահայտորեն հեղնում է, — որ երեսուցների իսկականին նմաննեցված իրերի մասին ասում էին՝ «թուրքացված»:

— Կեղծիք, ամեն ինչ կեղծիք է, պարոն, — կրկնում էր Բարձր դռան նախարարը:

Սողոմոն Մելիքյանը ձեռքով օդի մեջ մեծ շրջան է գծում, կարծես ուզում է այդ շարժումով երկրագունդը ցուց տալ:

— Հիմա էլ ինչից եք փախսնում, թալեաթ փաշա: Համաշխարհային պատմությունը Ձեր գործը վաղուց արխսիվ է հանձնել: Այդ տեսակի գործեր զարմանալիորեն շատ կան: Քիչ առաջ նշված մարդկանցից՝ Ստալինից ու Հիտլերից 60 տարի անց լինելու է մեկը, որ կոչվում է Փոլ Փոթ: Երբ նա 1975 թ. որպես Կամբոջայի կարմիր խմբերի առաջնորդ իշխանության եկավ, ինքն էլ իր հայրենակիցներից ավելի քան մենք միլիոն կոտորեց: 1979 թ. գահավիժեց, սակայն մինչ օրս նրան ոչինչ չի պատահել:

— Այսևս թույլ չեմ տա, որ ինձ մոլորեցնեք, պարոն: Ովքե՞ր էին այդ սեփական հայրենակիցները, որոնց այդ Փոլ Փոթը սպանել տվեց: Իր ժողովրդի հաշվին ապրող ինչ-որ պորտարույժ փոքրամասնություններ:

— Ոչ, Ձեր հասկացությամբ փոքրամասնություններ, թալեաթ փաշա, ոչ: Այդ դահճի կարծիքով տվյալ մարդիկ մի քիչ չափից շատ ընդունակությանների ու հմտությունների տեր էին: Նաև չափից շատ կրթության տեր:

Մելիքյանը, խոսակցի անսովոր լուսվունից զարմացած, վեր նայելով, հարցնում է:

— Ինչո՞ւ եք լուսում, Թալեաթ փաշա:

Երիտասարդը ապշած է մնում, նկատելով որ Թալեաթ փաշան շրջկել-գնացել է ու արդեն մուտք է գործում դատարանի դահլիճ:

18

Փորձագետ, բժշկական գաղտնի խորհրդական, դատական բժիշկ, Ռուբերթ Շմթուրմեր, 57 տարեկան, ավետարանական, Բենգին (կրկնելով փորձագետների հատուկ երդումք):

Փորձագետ Շռեբրմեր.— Ես համոզված եմ, որ ամբաստանյալն ընկնավոր է, և որ այդ համգանանքը բնականաբար մեծ դեր է խաղացել նրա արարքի մեջ: 1917 թ. նա վերադարձել է Երզնկա, քաղաքը տեսել քարուքանդ արված, իսկ հայրենի տունը՝ ավերակի վերածված: Այդ տպավորության տակ նա ունեցել է առաջին և ուժեղ ընկնավորության նոպան: Այդ նոպան ես նկարագրել եմ տվել բոլոր մանրամասնություններով: Ունեցել է հանկարծակի հոգնածության զգացողություն:

ուժասպառություն, գիտակցության կորուստ, սրափվել է անօգնական ու շվարած, և երբ ուշքի է եկել ունեցել է անհազ ծարավի զգացողություն ու քննության պահանջ: Փաստորեն յուրաքանչյուր նոպա նույն ձևով է ընթացել, որոշ չափով ըստ F սխեմայի: Մանրամասն հարցություն եմ արել ամբաստանյալին, թե ինչ հաճախականությամբ են կրկնվել նոպաները: Նա ասել է, որ նոպաները շատ անկանոն են, երբեմն բացակայում են ամիսներով, երբեմն էլ վերսկսկում են շաբաթներ հետո: Սույն մանրամասնությունները ես այստեղ պարտավոր էի ներկայացնել, քանի որ սրանց վրա է կառուցված իմ ախտորոշումը, որն է՝ ընկնափորությունը: Ամբաստանյալն ունի բավական աշխույժ ռեֆլեքսներ: Դրա փոխարեն բացակայում են աշքերը շաղկապող հյուսվածքների ռեֆլեքսները: Մեզի վերլուծությունը ցույց է տվել նշանակալի չափերով սպիտակուցի առկայություն: Այս բոլորը բաներ են, որոնք կամքի վրա որևէ ազդեցություն չունեն: Սակայն դրանք հիմք են տալիս եղրակացնելու, որ ամբաստանյալը ֆիզիկապես հիվանդ մարդ է: Այսպիսով, իմ խորին համոզմանք ամբաստանյալը տառապում է ընկնափորությամբ, մի քանի, որ անդրադարձել է նաև նրա հոգեկանի վրա: Ընկնափորի հոգեկան առանձնահատկությունների բվին է պատկանում կամքի ու համառության հազվագյուտ հաստատունությունը: Ծրագրի մտահղացումը, դրա մասին տենդրությունը խորհրդադությունն ու որոշումը, դրա մատովի մանրակրկիտ մշակումը մինչև այդ ծրագրի իրականացումը, հիվանդության մասն են կազմում: Այս հիվանդության տեր մարդիկ, ինչպիսի դժվարին պայմաններում էլ լինեն, իրագործում են իրենց մտադրությունը: Սրանով է բացատրվում, որ ամբաստանյալը չի խորշել միջնության և ուղիներից՝ գտնելու ատելի քշնամուն և խորինելու, թե որն է իր ծրագիրը կենսագործելու լավագույն ձևը: Պետք է նշել, որ արարքի իրականացման մեջ դեռ է խաղացել հետևյալ երևույթը: Ամբաստանյալն ասում է, որ երազում մայրն է իրեն կրկին երևացել և իր երազները միշտ նման բաների շորջ էին պտտվում: Սի անզամ մոր կերպարանը արձանի նման կանգնել է նրա առաջ ու ասել. «Ի՞նչ, և դու քեզ դեռ իս որդի՞ն ես համարում, իսկ Թալեար փաշան Բեղինում է, և դու ոչինչ չե՞ս անում երան սպանելու և իմ վրեժը լուծելու համար»: Մենք, այսպիսով, պարզություններում իմաստանյալի վրա: Եթե, սակայն, ասենք, որ ազատ կամքի դրսերումը բացառավոր է, ապա պետք է անմիջական կապ փնտրենք արարքի ու իմաստանության միջև, որը, սակայն, ես չեմ գտնում: Եթե անտեսում նաև, որ ամբաստանյալը դեպքի օրը հոգեկան շատ խանգարված է եղել, ներքուստ շատ խարխուր վիճակում և կոնյակ է խմել բացություն ձեռք բերելու համար:

Նա ինձ մանրամասն նկարագրել է, որ նախ իրեն հաստատ համոզել, որ այդ մարդը Թալեար փաշան է և որ նրա վրա հետևից է կրակել, որովհետև նրեն նա Թալեար փաշայի առջևից դուրս գար, վերջինս նրան կնկատեր, ատրճանակը կտեսներ, և մահափորձը կճախողվեր: «Այդ է պատճառը, որ ես շրջանցեցի նրան»— ասաց նա ինձ: Ամբաստանյալն ուշադիր զննելով զիսարկի ու հազուստի միջև եղած տարածությունը կրակել է զիսարկի ու վերարկուի միջև: Այդ արարքի մեջ ես տեսա վաղուց կանխամտածված որոշման իրագործում և այդ իսկ պատճառով եղրակացնում եմ, որ իիվանդության ազդեցությունն այնքան մեծ չէր, որ խափաներ ամբաստանյալի ազատ կամքի դրսերումը:

Նախագահ.— Ամբաստանյալը հավաստո՞ւմ է, որ իրեն երևացող պատկերները շատ կենդանի տեսիլներ են ենել:

Ամբաստանյալ.— Ինձ այնպես էր քվում, որ կարծես դիակներն աշխիս ներկայանում էին իսկապես կենդանի կերպարանքներ:

Նախագահ.— Ուզում եք հայտարարել, որ սպանությունը կատարելու պահին զիտակցաբար չե՞ք գործել:

Ամբաստանյալ.— Երբ տեսա Թալեար փաշայի տնից դուրս գալը, իիշեցի նորս խոսքերը:

Օգնական դատավոր դ-ր Լաքս.— Արդյո՞ք ընկնափորները նոպայից դուրս եղած ժամանակ հոգեկան կաշկանդվածության մեջ չեն լինում:

Փորձագետ Շրենքմեր.— Չատ հազվադեպ: Առավելագույնը մեկ հինգերորդի մեջ է, որ նոպաները մտավոր, հոգեկան խանգարումներ են առաջացնում:

Օգնական դատավոր դ-ր Լաքս.— Բայց չե՞ որ հենց Դուք ասացիք, որ հոգեկան որոշակի ցնցումներ այստեղ առկա են, ինչպես նաև ասացիք, որ հոգեկանը նույնպես տուժում է հիվանդությունից:

Նախագահ.— Պարոն փորձագետը դա ասաց, սակայն նա դրանից հետևություններ չի անում 1921 թ. մարտի 15-ի դեպքի կապակցությամբ:

Պաշտպան Վերքառություն.— Մեզ համար վճռականը ընկնափորության հոգեկան կողմից առկայությունն է:

Պաշտպան Նիմայեր.— Թե ինչպիսին է եղել դեպքի պահին ամբաստանյալի ֆիզիկական վիճակը, այդ մասին պարոն փորձագետը չի կարող ասել:

Փորձագետ, բժշկական գաղտնի խորհրդական, դ-ր Հովոն Լիփման, համալսարանի կանոնավոր պրոֆեսոր, 57 տարեկան, բնակվայրը՝ Բեռլին (փորձագետի երդումն ընդունելուց հետո):

Փորձագետ Լիփման.— Ուզում եմ միանգամից ասել, որ ամբաստանյալը հազվագյուտ անկեղծության տեր անձնավորություն է, չի ձևանում

և կեցվածք չի ընդունում: Նա նույնիսկ չափազանց վերապահ է: Նրան հատուկ է որոշակի հարմարվողականություն, և նա մեզ հասկացրել է, թող լին՝ ինչ լինելու է, ինքն այլևս հետաքրքրություն չունի կյանքի նկատմամբ: Ավելիայտ է, որ այստեղ չի կարելի պարզապես խոսել խելագարի արարքի կամ ընկնավորի մտքի մթագնած վիճակում կատարված արարքի մասին: Դա բացառվում է: Ավելի շուտ պետք է տեղափոխվել քերին հայտնի մի ոլորտ, որը ընդհանուր հոգեախտաբանական ոլորտն է: Ելնելով դրանից՝ պետք է ասեմ, որ ես իրադրությունը մի փոքր այլ կերպ եմ ընկալում, քան իմ պաշտոնակից պարոն Ծքոերմերը: Խոսքն այստեղ հատկապես հիվանդության հակամետ մարդկանց մեջ, հոգեկան ծանր ցնցումների հետևանքների, ինչպես նաև «գերարծեր զաղափարի» տեսության մասին է: Այժմ մանրամասնորեն ցոյց կտամ, որ Թեյլիրյանը եղել է նման զերարժեր զաղափարի ազդեցության տակ: Հաշվի առեք, որ մարդը 17 տարեկան հասակում լրիվ դուրս է նետվել իր հունից: Հետագա վեց տարիներին՝ 1915–1921 թթ., վարել է անհանգիստ, արմատներ չունեցող բափառաշրջիկի կյանքը: Կարելի է ենթադրել, որ դա, այսպես կոչված, հոգեբեկ մի վիճակ է եղել, որն ազդել է նրա զգայական, ինչպես նաև մտավոր կյանքի վրա: Ո՞րն է, ուրեմն, հոգեկան այդ ցնցումների հետագա ներգործությունը ամբաստանյալի վրա: Արդյունքը նոպաներն են: Այդ նոպաները չեն կարող ճշգրտորեն որպես որպես «ընկնավորություն», այդ կարող են անել միայն մոտավոր իմաստով: Ընկնավորի բուն նշաններից ամբաստանյալի նոպաների ժամանակ պակասում են լեզվի ու շրունքների խածվածքները: Բացի դրանից նա նաև չի միզել: Ընկնելիս մեծ մասամբ չի արյունոտվել ինչպես դա սովորաբար պատահում է ընկնավորության դեպքում: Իմ կարծիքով դրանք ոչ թե ընկնավորության, այլ հոգեբեկության նոպաներ են: Այդ նոպաներն առաջանում են ուղեղում ոչ թե նարմնական գրգիռներից, այլ հոգեկան ցնցումներից: Այս բոլորից հետո պետք է ասեմ. հոգեկան հիվանդը գործել է հոգեկան որոշակի ճնշման ազդեցության ներքո: Նրա մեջ եղել են հիվանդագին պահեր, որոնք ճնշել են նրան և զգայիրեն սահմանափակել նրա կամքի ազատությունը: Չնուռամ նշել այն հիմնական պատճառը, թե ինչու են այդպիսի վճռականությամբ ընդունում միայն, այսպես կոչված, «հույզի ընկնավորությունը», որը, եթե խստությամբ նայենք, ընկնավորություն չէ, այլ հոգեբեկության նոպաների առկայություն: Սրա օգտին է խոսում այն հանգամանքը, որ առաջին նոպան հետևել է հոգեկան ուժեղ ցնցումին, որն առաջին նոպան հետևել է հոգեկան պետք է տալիս հոգեբեկության վիճակ:

Ի տեսարանները, մի խոսքով՝ հոգեկան ծանր ապրումները: Այնուհետև, ինչպես ինքն է պատմում, յուրաքանչյուր նոպան նրա մեջ սկսվել է ջարդերի տեսարաններով ու դիակների հոտով, այսինքն՝ հուզումնալից ապրումների ակնհայտ հիշողություններով:

Փորձագետ պրոֆ. Ռիխարդ Կասիբեր, 43 տարեկան, հուդայական (երդման արարողությունից հետո):

Փորձագետ Կասիբեր.— Ամբաստանյալն առաջին անգամ իմ թժքկական ընդունարանն է եկել փետրվարի 5-ին, իսկ երկրորդ անգամ փետրվարի 18-ին: Նա սերում է առողջ ծննդներից, ընտանիքում ընկնավորներ չեն եղել: Ախտորոշումը, որպես իսկական ընկնավորությունն, որ տվել եմ հիվանդի այցելությունների ժամանակ իմ հետազոտությունների հիման վրա, այն բոլորից հետո, ինչ լսեցի այստեղ դատավարության ընթացքում, այլևս չեմ կարող ուժի մեջ պահել: Այժմ հիմնականում հակած եմ այն տեսակետին, որ այստեղ գործ ունենք նոպաների հետ, որոնք շատ անհատապես կապված են հիվանդի հոգեկան կյանքի հետ: Մենք ավելի մոտիկից ճանաչեցինք նոպաների բնույթը, հատկապես պատերազմի փորձի հիման վրա տեսանք, թե ինչպես հոգեկան ուժին գրգիռներն ու ցնցումները, հատկապես ջղային հակուններ ունեցող մարդկանց մեջ, առաջացնում են այնպիսի նոպաներ, որոնք բնուրագրեցինք որպես հոգեբեկության կամ հույզի ընկնավորության նոպաներ: Նոյն պատճառներով, ինչ պարոն գաղտնի խորհրդական նոպաներ: Լիկիմանք, գալիս եմ այն եղրակացության, որ ամբաստանյալը շատ բնորոշ մի հայտարարություն արեց, եթե նա մասնավորապես ասաց. «Երբ ինձ վատ եմ զգում, հայտնվում է մորս պատկերը»: Սա նշանակում է, որ եթե նա հոգնած է, վատ է զգում, եթե ուժասպառ է կամ համակված մտածունքներով ու հիշողություններով, այդ ժամանակ հայտնվում է մոր պատկերը: Մոր հայտնվելու երևույթը հստակորեն ցոյց է տալիս հոգեբեկության վիճակ:

Պաշտպան Վերքառական.— Կա՞ն արդյոք հիմնավոր տարակուսանքներ այն մասին, որ ամբաստանյալը գործել է ազատ ու գիտակից կամքի դրսուրմամբ:

Փորձագետ Կասիբեր.— Կասկած չունեմ, որ ազատ կամքի դրսուրումը լիովին չի բացառվել:

Փորձագետ, թժկագիտության դ-ր, պրոֆ. Էդուարդ Ֆորսթեր, Բեռլինի համալսարանի նյարդաբանական կիմիկայի ավագ թժիշկ, գլխավոր թժշկի դ-ր, պրոֆ. Բոնիյոֆերի ներկայացուցիչ, 42 տարեկան, ավետարանական (փորձագետների երդման արարողությունից հետո):

Փորձագետ Փորսթեր. – Հիմնականում համակարծիք եմ պարոններ գաղտնի խորհրդական դ-ր, պրոֆ. Լիփմանի և դ-ր, պրոֆ. Կասիրերի հետ, որոնք հեղինակություն են այդ ասպարեզում: Լսելով այն ամենը, ինչ վերապել է ամբաստանյալը, ակամա այն զգացողությունն ես ունենում, որ նա բնականարար պետք է սպաներ Թալեարին, որին համարում էր մարդասպան: Այստեղից բխում է առաջին հարցը. բնականոն մեկն էլ այդպես վարկած կլիներ: Անշուշտ ոչ: Մյուս հայերը, որոնք ապրեցին նույն սարսափները, փաստորեն չեն գնացել այդ հանցանքին: Երկրորդ հարցն այն է, թե արդյո՞ք նման սարսափներ ապրած ամեն ոք դրանով իսկ պարտադիր կարգով հոգեկան հիվանդ պետք է դառնա: Դա նույնպես այդպես չէ: Թեև սա կարող է ոչ նաևնազետին անհավատալի բվալ, սակայն անաշառ վիճակագրությունը ցույց է տվել, որ պատերազմի հետևանքով հոգեկան հիվանդների թիվը չի ավելացել՝ բացառությամբ հոգեկան հիվանդության հակում ունեցող մարդիկ: Ինչպես նախորդ փորձագետները, ես ևս այն կարծիքին եմ, որ հանձին ամբաստանյալի մենք անկասկած գործ ունենք հոգեկան հիվանդ անձնավորության հետ: Ինչպես պրոֆեսորներ Լիփմանն ու Կասիրերը, ես ևս հավատում եմ, որ այստեղ առկա է ոչ թե իսկական, այլ հոլովական ընկնավորություն: Այն հարցին, թե ամբաստանյալի մեջ այստարանական փոփոխություններն այնքան ուժեղ էին, որ 51-րդ հոդվածի սահմանումները կիրառելի են դառնում, «այո»-ով կամ «ոչ»-ով պատասխանելը շատ դժվար է: Ես ընդհանրապես հակված եմ ավելի նեղացնելու 51-րդ հոդվածի սահմանները, քանի որ օրենքում բառացիորեն պահանջվում է ազատ կամքի դրսարնան լիկ բացասում: Տվյալ դեպքում ունենք ամբաստանյալի վրա գերածեք գաղափարի հիվանդագին ազդեցության այնքան ծանրակշիռ նշաններ, որ պետք է գոնե ասել, որ 51-րդ հոդվածի պահանջները սերորեն առնչված են դեպքին, իսկ ես նոյնիսկ հակված եմ ասելու, որ ազատ կամքի դրսարումը բացարար է եղել:

Պաշտպան Ֆան Գորդոն. – Մի հարց. արդյոք հնարավո՞ր եք համարում, որ այն բանից հետո, երբ ամբաստանյալի այս պոռթկումն արդեն տեղի է ունեցել, այս ընկնավորությունը, այս հույզի ընկնավորությունն այլևս կանհետանա, որ նոպաններն այլևս չեն կրկնվի, և որ դրանով իսկ մի տեսակ եզրափակում տեղի կունենա:

Փորձագետ Ֆորսթեր. – Չեմ կարծում: Գոնե նախապես շատ դժվար է այդ մասին վստահորեն խոսել: Եթե, ասենք, մեկը Բեռլինում որևէ նման արարք է կատարել և հետո մեկնել է, օրինակ, Հարավային Աֆրիկա ու այստեղ գուցե զյուղատնտեսությամբ է զբաղվել, կարող է աս-

տիճանաբար մոռանալ պատահածը: Սակայն իենց որ մի իին ծանոթ հայտնվի, և անցած իրադարձությունները բորբոքվեն, իին վիճակը կվերադառնա:

Փորձագետ Այարդարան, բժշկական գիտությունների դ-ր Քրուն Հաարե, Ըյոններեր (երդման արարողությունից հետո):

Փորձագետ Հաարե. – Այստեղ ներկայացված մանրամասն եզրակացություններից հետո կարող եմ շատ համառոտ խոսել: Սակայն այսօր ես նոյնպես այն կարծիքին եմ, որ խոսքը հոգեկան ցնցումների ազդեցությամբ ընթացող հույզի ընկնավորության մասին է: Այդ իսկ պատճառով կցանկանայի նախորդ ելույթ ունեցող պարունից մի փոքր առաջ անցնել և այն հարցին, թե արդյոք լրիվ բացառված է եղել ազատ կամքի դրսարումը, դրական պատասխան տալ:

Նախագահ. – Գուցե կարելի՞ է ընդհանուր հայտարարություն անել, որ դատարանը հրաժարվում է լրացուցիչ վկայություններ անելու դիմումներից:

Պաշտպան Վերքառաւեր. – Պետական աւյանի՝ նեզ իրավասու քրեական գործերի երկրորդ բաժնի դրույթների համաձայն եթե մի անգամ հայտարարվում է ընդհանուր հրաժարում, ապա վերանում են նաև նախկին բոլոր դիմումները, այդ բվում և մերժվածները: Այդ պատճառով ես երբեք ընդհանուր հրաժարման կողմնակից չեմ, այլ հրաժարվում եմ միայն դեպքից դեպք՝ ըստ այս կամ այն վկայության բնույթի:

Պաշտպան Ֆոն Գորդոն. – Ես էլ եմ միանում դրան:

Ամբաստանյալ. – Համաձայն եմ:

Այնուհետև դատավարությունը հետաձգվում է մինչև հինգամբի առավոտյան ժամը 9-ը:

19

Թալեական կատաղությունից փրփրում է: Նա այլևս չի կարողանում իրեն զսպել:

– Հենց սա էլ գուշակում էի: Զոհը ո՞չ թե ևս ևմ՝ սպանված, այլ հանցագործն է: Նույնիսկ եթե բոլոր փաստերը դեմ են խոսում: Այդպես է լինում, երբ օգտվում ես թանկ վճարվող քրեական գործով պաշտպանների ծառայությունից, որոնք ամենն ինչ անում են ամբաստանյալին անմեղունակ հայտարարելու համար: Ամրողը նախապես համաձայնեցված խաղ է:

«Ի՞նչ լավ է, – մտածում է այդ պահին Սողոմոն Մելիքյանը սարսպալով, – որ ինձանից բացի ոչ ոք չի կարող տեսնել ու լսել իրեն

իսկ՝ Թուրքիայի ներքին գործոց նախակին նախարարին»: «Ինչո՞ւ»-ն և «ինչպե՞ս»-ը վաղուց է, որ ամերիկացուն այլևս չեն զրազեցնում: Սակայն քանի՛ անզամ է Մելիքյանն իր կյանքում հեռուստատեսությամբ դրվագներ տեսել, որտեղ բացահայտորեն ու գրեթե հավատի կերպով խոսվեր անցյալն ու ներկան միացնող ժամանակի թունելի մասին: ԱՀա նա, սպասածին հակառակ, կանգնած է նման թունելի առաջ, մի բան, որ երիտասարդը շատ հետաքրքրաշարժ է համարում: Նա ոչինչ այնպիսի անձկությամբ չի ցանկացել, որքան պապին կենդանության օրոք տեսնելը: Այժմ անրացատրելի ու տարօրինակ ձեռվ տեսնում է նրան, երբ նա եվրոպայում դեռ ուսանող էր և որպես ոճարագործ՝ Թալեաթ փաշայի մարդասպան, կանգնած է բնոլինյան դատարանի առաջ:

— Դուք կանխում եք երդվյալների վճիռը, Թալեաթ փաշա, — սառնորեն ասում է Մելիքյանը, — պարոն նախագահող դատավոր Լևմերգը հենց նոր դատոր հետաձեզ մինչև վազր առավոտյան ժամը 9-ը:

Թալեաթ փաշան, սակայն, չի կարողանում կամ չի կամննում հանդարտվել: Նրա համար արդեն ամեն ինչ պարզ է:

— Ցավում եմ, բայց պետք է ասեմ, որ գերմանացիները այս դիակն օգտագործում են, որպեսզի խուսափեն աշխարհամարտի արյունուտ իրադարձությունների իրենց պատասխանատվությունից: Նրանք ուղղում են իմ անունը կապել այն ժամանակվա զեպքերին: Եթե ոչ Թալեաթ փաշան, ապա մեկ ուրիշը պիտի կարգադրեր այն միջոցառումները, որոնք ուղղված էին մեր ներքին թշնամու տեղահանմանը: Եվ այդ ամենը, ինչպես հայտնի է, կատարվել է Գերմանիայի բարձրաստիճան պետական մարմինների իմացությամբ: Դափաղրաբար սպանված մեկը մեղադրական աթոռին՝ անշուշտ անօրինակ դեպք է Գերմանիայի արդարադատության պատմության մեջ, պարոնս: Ես ևս որպես ժողովրդի մարդ, զործել եմ միմիայն իմ ժողովրդի հանձնարարությամբ և հանուն իմ ժողովրդի բարօրության ...

Որքան էլ անսպասելի, Մելիքյանը զլիսով հավանություն է տալիս, ապա պատասխանում է.

— Այնպես, ինչպես դուք էիք հասարակ հեռագրական ծառայող, այնպես էլ ոմն Աղոլֆ Այսմանն էր լոկ առեստրական մի ներկայացուցիչ, մինչև 1931 թ. զերմանական նացիոնալ-սոցիալիստական կուսակցության շարքերն անցնելը: Ինչպես Դուք Զերն արեցիք Թուրքիայի հայերի նկատմամբ, այնպես էլ Այսմանը փաստորեն փորձեց իրագործել հրեաների հարցի վերջնական լուծումը՝ եվրոպայի հրեաների բնաջնջումը: Այսմանը ևս երկրորդ աշխարհամար-

տի ավարտին փախուստի դիմելով՝ պատասխանատվությունից խուսափեց:

Թալեաթ փաշան բարձրացնում է մատանիներով զարդարված ձեռքերը:

— Անկախ այն բանից, որ չեմ կարող որոշել ինձ անձանոթ պարոն Այսմանի (դատելով անունից՝ հավանարար գերմանացի է) մեղքի չափը, քանի որ պատմողը զուք եք, պարոն, պետք է ննջաղրեմ, որ ինչպես ինձ էր վիճակված, պարոն Այսմանի համար ևս գտնվել է մի վարձու հրեա մարդասպան:

Սողոմոն Մելիքյանը մտածկու շարժում է կարճ կտրած մազերով գլուխը: Փոքր-ինչ խորհելուց հետո ասում է.

— 1960 թ. Աղոլֆ Այսմանը, որպես շուրջ վեց միլիոն հրեաների կոտորածի զլիսափոր պատասխանատու, Բուևնոս Այրեսից առևանգվել է Խարայլ և երուսաղեմի օրինական դատարանի կողմից մահվան դատապարտվել, ինչպես Դուք՝ Կոստանդնուպոլսում:

— Խարայլ, զա քաղա՞ք է:

— Խարայլը հիմնադրվել է որպես սուրբ Երկիր աշխարհի բոլոր հրեաների համար: Մայրաքաղաքն է երուսաղեմը: Եթե զա ձեզ որևէ բան ասում է ...

— Իսկ ինչո՞ւ եք ինձ պատմում այդ ամենը, — կտրուկ արձագանքում է Թալեաթ փաշան ապագայից քաղված, իր համար անհասկանալի մեջքերումներին:

— Որովհետեւ իմ պապը զեպքի պահին ձեռնոցով չէր:

— Ձեռնո՞ց, — հարցնում է Թալեաթ փաշան շփոթահար:

— Եւհաստանում ծնված հրեա Փեթեր թ. Մալքինը, այսպես էր կոչվում իսրայելական MOSSAD (Մոասաթա) զաղտնի գործակալության հետախոսողը, զրեթե իր բոլոր մերձավորներին կորցել էր համակենտրոնացման ճամբարներում: Հոգևոր հեղինակն Աղոլֆ Այսմանն էր: Փեթեր թ. Մալքինը մի զրում գրում է, թե ինչպես 1960 թ. Բուևնոս Այրեսում, երբ նա առևանգում էր միլիոնավոր մարդկանց իր զրանցանից դեպքի մասն ուղարկող Այսմանին, նոյն ինքը Ռիկարդո Քլեմենտին կալանավորման ժամանակ նրան մերկ ձեռքերով բռնելու գաղափարից խորչել է: Ուստի նա գնել է ձեռնոց: Հետազայտման պահին զա ձուլել է տվել բրոնզից:

Մելիքյանը լուռ է, նա նայում է շուրջը, սակայն Թալեաթ փաշային չի տեսնում: Կարծես նա անհացել է օգում: Այդ պահին նրա ուշադրությունը զրագում է բարձրահասակ մի մարդ, որ կանգնած է աշխատությունը զրագում մի խմբի մեջ: Երիտասարդ ամերիկացին շատ է խուժորեն զրուցող մի խմբի մեջ:

ափսոսում, որ այդ պահին թալկաթ փաշան ներկա չէ: Այսամասին հիշատակելուց հետո կարծես հրաշք կատարվեց: Մելիքյանից մի քանի մետր հետո կանգնած է Ռոբերթ Քեմֆիները: Նա 21 տարեկան է, ներկայումս իրավարանական բամբի ուսանող: Հետազայում փաստաբան Քեմֆիները ճիշտ ժամանակին՝ 1933 թ., փախուստի է դիմելու՝ խուսափելով նացիստների ձերբակալումից, իսկ երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո, 1946–49 թթ., նյուրնբերգյան դատավարության ժամանակ զրադացնելու է ԱՄՆ-ի զիլսավոր դատախազի տեղակալի պաշտոնը: Դեռ ավելին, 1961 թ. Խորայելի պետությունը հրավիրելու է մինչ այդ արդեն աշխարհահռչակ դարձած միջազգային իրավաբանության մասնագետ Ռոբերթ Մ. Բ. Քեմֆիներին՝ ներկա գտնվելու Ադոլֆ Այսմանի դատավարությանը ...

Նահանգային երրորդ դատարան, 6-րդ պատժախուց

Դատավարության երկրորդ օրը

Բևոլին, Շառլոթենբուրգ, Հունիսի 2, 1921 թ., 9 անց 15:
 «Դի ԴՅՈԶԵ ԹԱԳԵՍՑԱՅԹՈՒԻՆԳ; Դի ԴՅՈԶԵ ԹԱԳԵՍՑԱՅԹՈՒԻՆԳ»: Զալցբուրգի բնակչության ավելի քան 99 տոկոսը կողմէ է Գերմանիայի հետ միավորման: Դի ԴՅՈԶԵ ԹԱԳԵՍՑԱՅԹՈՒԻՆԳ: Սկսվել է թալեաթ փաշայի սպանության դատավարությունը: Մանրամասնություններ նրան սպանող հայազգի Սալոմոն Թեյլիրյանի մասին: Դի ԴՅՈԶԵ ԹԱԳԵՍՑԱՅԹՈՒԻՆԳ: Գերմանիան պետք է վճարի օրական 110 միլիոն մարկ պատերազմական տուգանք վերանորոգումների համար: Դի ԴՅՈԶԵ ԹԱԳԵՍՑԱՅԹՈՒԻՆԳ (Գերմանական օրաթերթ):

20

Նախագահ.— Վերադառնում ենք դատավարությանը: Վճիռ կայացնելու համար անհրաժեշտ բոլոր անձինք ներկա են: Փաստաբերումը, որքանով որ անհրաժեշտ էր ենթով ամբաստանազրի տվյալներից, սպառված է, ինչպես նաև կատեցված դատավարության մասնակիցների համապատասխան որոշման հիման վրա: Այսպիսով քանի որ ավարտված են փաստարկումները, ժամանակն է հրապարակելու իմ նախապատրաստած հարցերը.

1. Հանցավի՞ր է ամբաստանյալ Սալոմոն Թեյլիրյանը 1921 թ. մարտի 15-ին Շառլոթենբուրգում մի մարդու՝ թալեաթ փաշայի միտումնավոր սպանության համար: Սա չկանխամտածված սպանության հարցն է: Իսկ կանխամտածված սպանության հարցին, որ ձևակերպված է երկրորդ կետում, պետք է պատասխանել միայն, եթե առաջին հարցին տրվել է դրական պատասխան, հետևյալն է.

2. Արդյո՞ք ամբաստանյալը սպանությունը կատարել է կանխամտածված ձևով: Իսկ այժմ գալիս է երրորդ հարցը, որին պետք է պատասխանել միայն, եթե առաջին հարցին (չկանխամտածված սպանության) տրվել է դրական պատասխան, իսկ երկրորդին (կանխամտածված սպանության) բացասական:

3. Կա՞ն մեղմացուցիչ հանգամանքներ: Այս հարցադրման համար լրացումներ պահանջվելո՞ւ են: Եթե չեն պահանջվելու, ապա մեղադրական ճառի համար խոսքը տալիս եմ պարոն ավագ դատախազին:

Դատախազ ԳոլՅիք.— Պարոնայք երդվալներ, տվյալ քրեական գործի իրավաբանական կողմը չէ, որ դրան տալիս է առանձին նշանակություն և բացատրում է այն հսկայական հետաքրքրությունը, որ դատարանի այս դահլիճի վրա է քենուում ինչպես մեր երկրի, այնպես էլ արտասահմանի ուշադրությունը: Դեպքն իր հոգեբանական դրադապտաներով մեզ ետ է տանում մինչև աշարհամարտի ժամանակները: Բացի դրանից, զոհ հանդիսացողի անձնավորությունն է, որ ավելի նշանակալից է դարձնում դեպքը, անանունների, անհայտների բազմությունից մի ձեռք է բարձրացել ու գետին տապալել մի մարդու, որ կերտել է իր երկրի ճակատագիրը և որպես գերմանացի ժողովրդի հավատարիմ դաշնակից քայլել է պատմության բարձունքներուն: Սակայն, պարոնայք երդվալներ, այս տպավորություններն ու վերհարուղ ապրումները չպետք է մեզ՝ մեղադրող կողմին ու դատավորին, ստիպնեն, որ լրենք դեպքի ու գործող անձի գուտ քրեաիրավական օրենքով ամբազրված նկատառումների նեղ ուղին: Չե՞ որ իրավաբանական տեսակետից գործն այնքան էլ բարդ չէ: Կրակոցի նշանը լավ էր առնված, նաեւ վայրկենական էր, և կասկած չկա, որ ամբաստանյալը ցանկացել է նրա մահը: Նա գործել է կանխամտածված, չէ՞ որ ինքն էլ հայտարարեց, մինչև այսօր էլ գործի իր գործի հաջողության համար: Պարոնայք, ձերբակալված պահին ամբաստանյալի արած՝ շատ տեսակետից հետաքրքրական արտահայտությունը. «Գերմանիային վճառ չկա, ես հայ եմ, նա՝ թուրք» քրեական օրենսգրքի լեզվով չի կարող բարգնանվել: Այն հանգամանքը, որ և սպանվածը, և ամբաստանյալը, երկուսն էլ օտարերկրացի են, քրեաիրավական տեսակետից

բացարձակապես միևնույն է: Տարակույս չկա, որ այս արարքը քաղաքական բնույթ ունի: Ամբաստանյալի շարժադիրը քաղաքական աւտելիքունն է ու քաղաքական վրեմինդրությունը: Կասկածից վեր է, որ տեղի են ունեցել սարսափելի դեպքեր, և որ հայ ժողովրդի նկատմամբ սարսափելի ոճիր է գործվել, ինչպես որ կասկածից վեր է, որ ամբաստանյալի ընտանիքի հետ զարդութելի բաներ են կատարվել: Նաև կասկածից վեր է, որ ամբաստանյալը, հենց հանձին Թալեաթ փաշայի, տեսել է այդ ճակատազրի հեղինակին, բայ որում, նա նրա մեջ տեսել է ոչ միայն ներքին գործոց նախարարին, որը պաշտոնապես կրում է քաղաքական պատասխանատվություն այն բռնորդի համար, ինչ կատարվում էր իր գերատեսչության մեջ, այլ մեկին, որ այդ ոճիրների անձնական ու բարոյական հեղինակն է: Պարոնայք, կասկածից դրւու է և վկաների ցուցնունքներով հաստատված, որ հայերն ու նրանց բարեկամները համոզված են, որ Թալեաթ փաշան է այդ արհավիրքների հեղինակը: Սակայն, պարոնայք, սա հայերի ու նրանց բարեկամների կողմնակալ տեսակետն է, և շատ դյուրին կիխներ Ձեր առաջ այստեղ բերել վկաների մի ամբողջ շարք, որոնք կատարված իրադարձությունների մասին բռնորովին այլ կարծիք կարտահայտեին: Խոսել եմ գերմանացի շատ պարոնների հետ, որոնք շատ մոտ են կանգնած եղել Թուրքիայում կատարված դեպքերին, և նրանք բռնորովին այլ կարծիք են հայտնել:

Նախագահ (ընդհատելով).— Խնդրում եմ երկար կանգ շառնել մի քանի վրա, որը վկաների հարցաքննության առարկա չի եղել: Ուրիշների բերած փաստարկումների մեջբերումն այս գործին չի վերաբերում:

Գատախազ Գոլնիք (շարունակելով).— Այնուամենայնիվ ես դա կարող եմ օգտագործել, քանի որ այդ տարակարձությունները արտահայտվել են փորձագետ երկու պարոնների կարծիքներում: Թույլ տվեք մատնանշել, որ պարոն՝ պրոֆեսոր, դ-ր Լեփսիուսի տեղեկությունները, ըստ իս ունեին այն բերությունը, որ իրադարձություններին վերագրեցին չափազանց մեծ ծրագրավորվածություն ու համակարգություն: Դժվար չէ նկատել, որ նրա եղրահանգումներն արված են ո՛չ թե տեղնուտեղը՝ իրադարձությունների ժամանակ ձեռք բերված անձնական փորձից, այլ ավելի ուշ ստացված տեղեկություններից: Այդ իսկ պատճառով կարծում եմ, որ իրավացի կիխնեմ, եթե ավելի արժելորեն երկրորդ փորձագետի՝ Լիման ֆոն Զանդերսի հիմնավորումները: Նա այստեղ հստակորեն զատորոշեց, որ նախ Կոստանդնուպոլիսի կառավարությունը, պետական ու ռազմական անվտանգությունից ելելով, անհրաժեշտ համարեց տեղահանություն կազմակերպել, և երկրորդ՝ որ հարկ է դրանից

առանձնացնել իրագործման եղանակը: Այդ հարցում ինձ չեն կարող մոլորեցնել փաստարդերը, որոնք իբրև թե նախապես գոյուրյուն են ունեցել: Ես՝ որպես դատախազ, գիտեմ, օրինակ, թե ինչպես մեզանում հեղափոխական իրարացման մեջ լույս աշխարհ եկան ճիշտ այդ կարգի գրությունները ու փաստարդեր՝ հայտնի մարդկանց ստորագրություններով, որոնց մասին հետազայում հայտարարվեց, որ կենծված են (հմնտ. հավելված, էջ 133 և հաջորդներ): Ինձ չի կարող մոլորեցնել նաև Կոստանդնուպոլսում Թալեաթ փաշայի դեմ կայացված դատավճիռը: Զգիտեմ, թե այնտեղ արդյոք բացահայտվել է օրյեկտիվ ճշմարտությունը: Հնարավոր է, որ բացահայտվել է: Մյուս կողմից, սակայն, չպետք է մոռանանք կյանքի փորձը, եթե քաղաքական իին կարգի փլուզումից հետո իին հերոսները նորի հանցագործներն են դառնում: Բնրված վկայությունները չտվեցին նվազագույն ապացույցն այն մասին, որ Թալեաթ փաշան եղել է այդ ոճրագործությունների բարոյական հեղինակը ...

21

— Այս տրամաբանությունը Ձեզ դուր է գալիս, այնպես չէ՞ Թալեաթ փաշա:

Մելիքյանին ակնհայտ է խոսակցի Հոգեվիճակը: Բարձր դռան ներքին գործոց նախակին նախարարի դեմքն ամբողջապես ճառագայթում է:

— Փորձը սովորեցնում է, — թիկնեղ մարդը միտքն ավելի կենտրոնացնելու նպատակով փակում է աչքերն ու կրկնում դատախազ պարոն Գոլնիքի վերջին խոսքերը, — քաղաքական հին կարգի փլուզումից հետո հնի Հերոսները նորի հանցագործներն են դառնում: Ուստի, միանգամայն Համաձայն ևմ պարոն դատախազ Գոլնիքի Հետ, որ բնրված վկայությունները չեն տվել նվազագույն ապացույցը, որ Թալեաթ փաշան եղել է այդ ոճրագործությունների բարոյական հինակը ...

— Սա բառ առ բառ Գոլնիքի ասածն էր: Զարմանալի հիշողություն ունեք, Թալեաթ փաշա, — ասում է երիտասարդ գիտնականը՝ չթաքցնելով ապշանքը:

Թալեաթ փաշան չոյփած չփում է կղակը:

— Ափսոս, որ միայն հիմա ևմ խում այսպիսի խոսքեր: Հիմա, որ արդեն ուշ է:

— Հիշո՞ւմ եք, թե ինչ ասաց գրող Արամ Անտոնյանը: Հիշո՞ւմ եք Հեռագրերի բնօրինակները՝ ձեր կողմից ստորագրված:

— Ամբողջը կեղծիք է, — բացականչում է Թալեաթ փաշան գրգըռված, — նույնիսկ պարոն առաջին կարգի դատախազը Հնաց նոր դահաստատեց: Բայց սա հատուկ է Ձեր նմաններին, պարոն, որոնք որպես սկզբունք չեն լսում, երբ իմ օգտին խոսող փաստեր են բերվում:

— Ձեր ստորագրությունները, չինի թե՝ դրանք էլ են կեղծված: Կցանկանայի՞ք Երդվալ փորձագետի միջոցով կատարել ձեռագրի համեմատություն, Թալեաթ փաշա: Դուք, որ այդքան շատ վստահում եք գերմանացի պաշտոնյաների ունակություններին:

Ձեռքի տիրական շարժումով Թալեաթ փաշան ընդհատում է երիտասարդի խոսքը:

— Վերջապես լուե՛ք, պարոն: Ես ուզում եմ գնալ ու հետևել դատախազի չափազանց խելացի դատողություններին:

Մելիքյանը բերանը բացում է պատախանելու համար.

— Լուե՛ք վերջապես, պարոն: Ինչ ասես կտայի, որ ականջներս ազատեի Ձեր անվերջ մեղադրանքներից:

22

Դատախազ Գլուխը. — Այժմ վերադառնանք բուն դեպքին: Զեզ համար պարզաբանել էի, որ ամբաստանյալին սպանության մոդ շարժափը վրեժինարությունն էր: Պարոնայք, դա անշուշտ անազմիվ շարժափը չէ: Դա մի շարժափը է, որ մարդկայնորեն հասկանալի է և պիտի հասկացվի, քանի դեռ կան մարդիկ, որոնք ի վիճակի են ատել և սիրել: Եթե իմաց շարունակեմ այն հարցով, թե ամբաստանյալը միտումնավո՞ր է գործել, ապա հենց բուն այդ շարժափից կիետել, որ դա այդպես էլ եղել է: Պարոնայք, այս բոլոր հանգամանքները մեզ պարտադիր կարգով տանում են այն քանին, որ կարող ենք ասել՝ արարը կատարվել է միանգամայն սառնասրտորեն, մտածված ու սրափ վիճակում: Ուստի, կարծում եմ, որ պետք է միանանք այն պարոնայք փորձագետներին, որոնք մերժեցին 51-րդ հոդվածի կիրառելիությունը: Եվ վերջապես, պարոնայք, ըստ մինչ այժմ գործող օրենքի՝ այն հանգամանքները, որոնք այստեղ մեծապես ամբաստանյալի օգտին են խոսում, վստահորեն ամբողջովին հաշվի կառնվեն ներման ատյանում: Ուստի, պարոնայք երդվալներ, առաջարկում եմ Զեզ ուղղված հարցերին պատախանել կանխամտածված սպանության համար մեղադրական դատավճիռ կայացնելու իմաստով:

Նախազան. — Թույլ տվեք պարոն թարգմանչին խնդրել, որ ամբաստանյալին հաղորդի պարոն դատախազի՝ երդվալներին արած առաջարկը, այն է՝ նրան հանցավոր ճանաչել կանխամտածված սպանություն կատարելու համար (այդպես էլ արվում է):

Պաշտպան Ֆռն Գորդոն. — Պարոնայք երդվալներ, պարոն դատախազը Զեզ հայտնեց, որ եքն նույնիսկ Դուք այստեղ ամբաստանյալ Թեյլիրյանին սպանության համար հանցավոր ճանաչեք և դրանով իսկ նրան մահկան դատապարտեք, վատ բան արած չեք վինի, քանի որ Գերմանիայի նախագահը նրան անպատճառ ներում կշնորհի: Սա, իհարկե, այս ատյանում Զեր վրա ազդելու ընդունելի ձև չէ: Այստեղ պետք է հոչակվի իրավունքը, ոչ թե մատնանշվի ներումը: Ուրախ եմ հանձին մեծապատիկ պարոն ավագ դատախազի: Ի դեպ, ոչ թե Թեյլիրյանի, այլ Թալեաթ փաշայի պաշտպանի, որ, ցավոք, հենվում է միայն այն փաստերի վրա, որոնք նրան գեկուցել կամ պատմել են տարբեր պարոններ: Պարոնայք, այդ հարցում ես նրա հետևորդներից չեմ, ես զիտակցաբար մերժում եմ նման նոտեցումը: Այստեղ ունեմ հեռազրերի մի ամբողջ զինարան (հմնտ. հավելված, էջ 133 և հաջորդներ), և ունեմ մի վկա (հմնտ. հավելված, էջ 132 և շարունակությունը), որն ահա նստած է այստեղ և ասում է. «Այդ հեռազրերը վավերական են, ես եմ դրանք ձեռք բերել»: Բավկական է այս պարզ իրողությունը, որ մի քանի ամսվա ընթացքում 1,8 միլիոն հայերից անվիճելիորեն տեղահանվել է 1,4 միլիոնը, որից մեկ միլիոնը սպանվել է արտորի ճանապարհին: Խնդիրն, դատեր ինքներդ, արդյոք դա հնարավո՞ր էր առանց վերևից եկող կանոնավոր դեկավարության: Մի՞թե քուրքական կառավարությունն իսկապես այնքան անզոր է եղել, որ դրա դեմ ոչինչ չի կարողացել անել: Հավատո՞ւմ եք դրան, որեմն ասացեք՝ այս: Ես դրան «այո» չեմ կարող ասել: Այդ ժամանակամիջոցին ահա մի դեպք է պատահում, որն ի գործ էր շանքի պես հարվածելու: Դա Հարդենբերգ փողոցում հանդիպումն էր քուրքական երեք պարոնների հետ, որոնցից երկուսն իրենց մեջտեղից քայլող մարդուն «փաշայով» էին դիմում: Երևույթը գրավում է նրան ուշադրությունը, և ավելի մոտիկից դիտելով մարդուն ճանաչում է նրան ըստ լուսանկարի ու հաստատ համոզվում: Հետաքրքի է, սակայն, որ նա այդ դեպքի մասին ոչ մեկին ոչինչ չի հաղորդել: Չի ուզեցել ոչ որի հոգում պատճառել, նման բաների մասին խոսելու պահանջ էլ չի ունեցել: Հանդիպումն ինքնին նրան չի մեղել Թալեաթին սպանելու որոշման. այդ ուղղությամբ նա ոչինչ չի ճեղնարկել: Շարունակել է ապրել առաջվա պես, մինչև դեպքից 5-6 շարաք անց հանկարծ երազ է տեսել,

մի տեսիք, ֆիզիկապես զրեք ցնորհական մի պատկեր, թե ինչպես այնտեղ փռված է մոր դիակը, թե ինչպես մայրը բարձրանում է տեղից, և թե ինչպես ինքը հաղորդում է մորը. «Ես տեսա Թալեաքին»: Եվ մայրը պատասխանում է. «Դու տեսար Թալեաքին և շուժեցիր հորդ, քոյրերիդ ու եղայրներիդ վրեժը: Դու այլս իմ որդին չես»: Սա այն վայրկյանն է, երբ նա հետևյալ զգացողությունն է ունեցել. «Այստեղ ես պետք է գործնմ, ես պետք է կրկին իմ մոր որդին լինեմ, որ նա ինձ չվանի, երբ ես երկին՝ նրա մոտ գնամ: Ես պետք է կրկին նրա զրկում տեղ զրավեմ»: Այսպես է, որ այս երազը փոխանցվել է արքուն վիճակի, ինչպես քիչկներն արտահայտվեցին: Ուստի կարևոր չէ, թե երբ է ընդունվել որոշումը: Ուրեմն կանխամտածվածության հարցն ընդիմանապես որոշելիս մենք պետք է կշռադատենք՝ այն կա՞ր սպանության պահին, թե ամբաստանյալի համար դա եղել է կրքերի, զգացմունքների ու մտապատկերների փորորիկ, կամ սառը դատողություն: Դրա պատասխանը բնավ չեմ ուզում տալ: Կարծում եմ, որ այն առկա է հենց զորդի բնույթի մեջ: Այստեղ բարեխորդությամբ պետք է արծարծեի նաև կանխամտածվածության հարցը, թեև իմ մեջ դրան դիմադրող ինչ-որ քան կա: Որովհետև մենք՝ պաշտպաններս, ամբողջ սրտով, կատարյալ համոզվածությամբ պիտի Ձեզ խնդրենք ժխտական պատասխան տալ «հանցավորության» հարցին: Կարծո՞ւմ եք, թե կարող եք համոզված կերպով ասել, որ ամբաստանյալն այն պահին, երբ առաջին անգամ Թալեաք փաշային ներքեւում տեսավ տնից դուրս գալիս, վայրկենական որոշում ընդունեց, վերցրեց ճամպրուկից ատրճանակը, ցած վազեց ու կրակեց նրա վրա, այդ պահին ի վիճակի՝ եր հավաքել իր բոլոր հոգեկան ուժերը՝ վերջնական որոշում կայացնելու: Թե՞ դա մեռած մայրը չէր, զարհուրելի ճառապատկերները չեն, իր խոշտանգված ժողովրդի մասին հիշողություններն ու մնացած ամեն բան, ինչ նրա զիխում պտույտ էր զալիս, որ զենքը ձեռքն առավ: Անհնար են համարում, որ որևէ մենքը հակառակը պնդի: Մյուս կողմից, ցավալի է, նաև տիհած, որ զերմանական հողում մենքը հյուրընկալվում է և ահա այստեղ սպանվում: Մեր ժամանակներում, երբ ամենուր պատերազմ է, երբ այսօր էլ շարունակվում է գյոյամարտը հայերի ու քուրքերի միջև և ամենուրեք արյուն է հոսում, մարդ նաման բաների հետ ի վերջո կհաշտվի: Մարդ, համենայն դեպս, այսպես կնայի հարցին: Թալեաքի կառավարության մեղրով առնվազն մեկ միլիոն հայերի՝ երեխաների, ծերերի, կանանց ու մարտունակ տղամարդկանց արյան ծով է հոսել: Եթե այդ ամենին Հարդենքերգ փողոցում ավելացել է մի կարիլ, պետք է մեզ դրանով միիդարենք, որ դա մեր ճակատագիրն է, քանի որ մենք ապրում ենք

արյունուտ ահավոր ժամանակներում: Սակայն ավելի ահավոր կլիներ, երեք գերմանական դատարանը անօրինակ ծանր փորձություններով անցած այս մարդու ճակատագրին ավելացներ սառնորեն դատող արդարանուության վիրավորանքը ևս:

23

Թալեաթ փաշան կամ Սալի Ալի բեյը, ինչպես Բևոլինում կոչվում է իր երկրից փախած մարդը, զայրացած ձևով իրար և զարկում: – Ես դեռ ինչքա՞ն պետք է հանդուրժեմ փաստերի այս աղավաղումը:

Սողոմոն Մելիքյանը թափահարում է գլուխը:

– Պաշտպան Գոն Գորդոնը, անշուշտ, փաստեր աղավաղողներից չէ, Թալեաթ փաշա: Եվ Եթև այստեղ խոսում է մեկ միլիոն հայ զոհերի մասին, ապա ըստ ժամանակակից հետազոտությունների այդ թիվն ավելացել է նվազագույնը կես միլիոնով:

– Գլուխս նորից մի՛ տարեք ապազայից բերված Զեր գատարկախոսություններով, – Հեղնում է Թալեաթ փաշան, – բայտ ժամանակակից հետազոտությունների ավելացել է կես միլիոնով: – Թքի փրփրոտ նշույնները արծաթի պես փայլվում են օդում, երբ մարդը բացականչում է: – Ամբողջը դաշտարարություն է: Գերմանացիները ուզում են միայն հիմա և այստեղ իրենց պատիվը փրկել:

Մելիքյանը մնում է արտաքուստ հանգիստ: Սակայն բերանի անկյունները ջղաձգվում են, երբ նա կամացուկ պատասխանում է.

– Իսկ ինչպե՞ս կրացատրեք այն փաստը, որ թուրքական ինչ-որ կառավարություն զոհերի թիվը պաշտոնապես ճանաչել է 52.756:

– Դա ինձ հայտնի չէ: Եթև մի ինչ-որ սրիկա, որը մեր Քեմալից հետո իշխանության գլուխ անցնելով՝ այդպես է ասել, մեղ՝ Կրիտ-թուրքերիս մասին, պարո՞ն, այժմ ամեն ինչ կարելի է ասել: Իսկ այն սիրանքի համար, որ թուրքիան մելիքներից ազատել ենք կաշառակեր սուլթանից, մեզ ո՞չ ոք չի փառարանում:

– Քեմալ Աթաթուրքին հաջորդող կառավարությունը չէր: Բացի դրանից, ինքն էլ 1960 թ. արդեն քսան տարի էր, ինչ մեռած էր:

– Ի՞նչ նշանակություն ունի այսօր ինձ համար 1960 թվականը: Ի՞նչ իմանամ, թե քառասուն տարի անց Թուրքիայում ո՞վ է կանգնած իշխանության գլուխը: Այնուամենայնիվ պաշտպանի բերած այդ տվյալները կարող են հավաստի լինել: Այո՛, այդ թիվը ես էլ եմ հնատվյալները կարող է այստեղ լինել: Այո՛, այդ թիվը ես էլ եմ հնատվյալները համարում. բնակչության տարրեր ցեղերի միջև մշտապես գորագոր համարում:

յատեսող արյունոտ կոփվների արդյունքն է զա, օրինակ, ավագակացարո քրդերի հարձակումները հայերի վրա: Ինչքան գիտեմ, պարո՞ն, այսպիս կոչված քրիստոնյաները ևս իրար հետ միշտ չեն, որ խաղաղ են ապրել:

Այս անգամ Սոզոմոն Մելիքյանն էր, որ բացահայտ այդ ստերից Հոգնած՝ ձեռքի վանողական շարժումով հեռանում է խոսակցից ու գնում վերստին կենտրոնանալու դատավարության ընթացքի վրա:

24

Պաշտպան Վերթառեր.— Պարոնայք երդվյալներ, Ձեզ տրվելու է հարցարերիկ, որը կտանեք ձեզ հետ: Դրա մեջ նախ հարց է տրվում սպանության մասին: Թե այդ հարցին «այո» կամ «ոչ» կպատասխանեք, այդ է այս դատավարության առարկան: Այս մասին, որ Դուք կանխամտածվածության հարցին Ժիտական պատասխան եք տալու, դրա մասին կարիք չունեմ խոսելու: Ես միայն այն մասին եմ խոսելու, թե սպանության վերաբերյալ հարցին Դուք «այո», թե «ոչ» պատասխանն եք տալու: Հարցարերիկն ինքը Վատահորեն հուշում է «ոչ» պատասխանը, քանի որ այստեղ հարցն այնպես չի դրված, թե «ամբաստանյալը սպանել է Թալեաք փաշային», այլ «ամբաստանյալը հանցավո՞ր է Թալեաք փաշային սպանելու գործում»: Ըստ մեր գերմանական օրենքի Դուք պարտավոր եք ամբաստանյալին ազատ արձակել, և այդ դեպքում այն, ինչ յուրաքանչյուր մարդու սրտի զգացումն է, այստեղ պատահաբար նույնն է, ինչ որ մեր գերմանական օրենքն է պահանջում: Արդեն շեշտվել է, որ ըստ 51-րդ հոդվածի առաջին կետի, «պատժելի արարք առկա չէ այն դեպքում, եթե գործող անձը դեպքի պահին եղել է անգիտակից վիճակում» և ապա բոլորովին առանձին նախադասությամբ՝ «կամ երեն նա գործել է մոտավոր գործունեության հիվանդագին խանգարման պահին»: Ես կասեի՛ ներկա պարագան արդարացնում են ոչ թե մեկ, այլ երկու ազատ արձակումներ, այնքան ցայտուն ու այնքան պարզորդ են այս երկու դեպքերը երևան զայիս 51-րդ հոդվածի այդ երկու կետերում: Վկայակոչելով Բարձրագույն ատյանի օրենսդրությունը՝ Օլիհանգենի քրեական օրենսգիրքն ասում է (5-րդ հրատ., 1897 թ., հ. 1-ին, էջ 186, ծնք. 10). «Եթե անմեղսագիտությունը որոշակիորեն ընդունված է որպես պատիժը բացառելու հիմք, ապա այդ դեպքում այլև բավական չէ դիտավորության ընդհանուր հաստատումը, այլ անհրաժեշտ է դրա հիմնավորումը: Անհրաժեշտ է պարզորդ հաստատել, որ գործող անձը դեպքի պահին չի եղել 51-րդ հոդվածում նշված վիճակից և ոչ մեկում»: Ուրեմն պետք է դրականորեն բացահայտվի, որ

այդ խանգարիչ ազդեցությունները գոյություն չեն ունեցել: Նվազագույն տարակույսի դեպքում, թե դրանք գոյություն են ունեցել, ամբաստաճայլը պետք է ազատ արձակվի: Եթե, ուրեմն, Դուք այժմ դատավարությունից ելնելով՝ կասկածներ ունեք, որ ամբաստանյալը 1921 թ. մարտի 15-ին ժամը 11-ին գնդակն արձակելու պահին ազատ կամքի տեր էր թե ոչ, պետք է ազատ արձակեք նրան: Դուք լսեցիր նաև, որ Թալեաքի նկատմամբ մահավճռն է արձակված եղել: Դատավաճիռներն ընդհանուրապես կամ ճանաչվում են կամ չեն ճանաչվում: Եթե մենք չճանաչենք ուրիշ դատարանի վճիռները, ապա չենք կարող պահանջել, որ, օրինակ, մեր վճիռն էլ ճանաչվի: Ես նվազագույն տարակուսանք չունեմ, որ այն բարձրաստիճան ու կրված դատավորները, որոնք մանրակրկիտ քննությունից հետո վճիռ են կայացրել Կոստանդնուպոլիսի ոճրագործների վերաբերյալ Ծիշտ դատավճռն են գտել: Մահվան այդ դատավճռը, սակայն, ուրույն կերպով է ազդում հայի վրա: Նոյնիսկ ամենաարդարամիտ ու ճշմարտախոն հայը կմտածի: «Չէ» որ այս մարդը մահվան է դատապարտվել, ուրեմն նա այդ հանցագործությունները կատարել է և արժանի է մահապատժիք»: Ենթերի ու Թալեաքի նման անձինք Գերմանիայում ապրել են կեղծ անուններով: Ասվեց, որ նրանք եղել են Գերմանիայի «հյուրերը»: Ես դա վճռականորեն պետք է վիճարկեմ: Չեմ հավատում, որ Գերմանիայի կառավարությունը բույլ պիտի տար, որ իրենց երկրից փախած նման ոճրագործներ որպես «հյուր» և կեղծ անուններով բաքնված մնային այստեղ: Ասվեց նաև, որ այստեղ սպանվել է «Գերմանիայի դաշնակցներից» մեկը: Դա ևս ծիշտ չէ: Թալեաքն ու իր կոմիտեն երբեմնի պրուսական ու գերմանական զինվորական կառավարության դաշնակցն էին: Գերման ժողովրդի դաշնակցը այս մարդիկ երբեք չեն եղել: Թալեաք փաշան անհատապես կարող էր շիտակ մարդ լինել սակայն նա ռազմամոլների խորհրդի անդամ էր, իսկ ռազմամոլը այն է, ինչ իրավունքի հականիշն է: Մի ամբողջ ժողովրդի տեղահանելու հրամանը ամենահեշավոր բանն է, որ կարող էր ծնվել ռազմամոլի ուղեղում: Եթե, ինչպես այստեղ շեշտվեց, երիտրոբերի կոմիտեն համոզված է եղել, որ լավ ոստիկաններ այլև չկամ, և որ միայն խուժանն է մնացել որպես ոստիկան, այդ դեպքում կոմիտեն տեղահանության հրամանը տալու իրավունք չուներ: Խսկ եթե այնուամենայնիվ այդ հրամանը տվել է և այդ գործը նման մարդկանց է վստահել, ապա հետևանքների համար ինքն է պատասխանատու: Մտածեք նաև այն մասին, պարոնայք, որ մարդկության հայացքն ուղղված է Ձեր վճիռն, որ արդարաբերյունը սերտ միաբանությամբ մարդկանց զգացմունքների հետ, Զեզ է սպասում: Ասացե՛ք պարզապես. «Նա մեղավոր չէ»: Մնացածը մեր գործը չէ:

Թալեաթ փաշան ինքն իրենից երբեք այսպես դուրս չէր եկել:
 – Մնացածը մեր գործը չէ՞: Այդ հայր սպանեց ինձ, իսկ մնացածը
 մեր գործը չէ՞: Բայց ... ահա՞ թե ովքեր են զերմանացիները:
 – Այդպես չի կարելի խոսել, Թալեաթ փաշա, – առարկում է Մե-
 լիքյանը:
 – Դատախաղին, իհարկե, բացառում եմ, – տեղի է տալիս ներքին
 գործոց նախկին նախարարը:

– Բանը ճիշտ այնպես է, ինչպես քիչ առաջ պարոն պաշտպան
 Վերթառուերն ասաց. Թալեաթ փաշայի նման զաղանարարո մարդիկ
 էին, և ո՛չ թե թուրք ժողովուրդը, որ հայերին ոչնչացրին:

Փոքր դաղարից հետո, որի ընթացքում խոսակիցը չի հակածա-
 ռում, Մելիքյանն ավելացնում է. – Այստեղ ներկա գտնվողներից կամ
 մեզից հետո ծնվածներից ոչ մեկին իրավունք չի վերապահված ա-
 սելու, որ բոլոր թուրքերը Թալեաթ փաշայի նման են, կամ բոլոր հա-
 յերը ամբաստանյալի նման են:

– Ինչպիսի անպատկառություն՝ ինձ Ձեր ազգականին, հայազգի
 այդ նենգ մարդասպանին, հավասարեցնելու փորձը, – մոթմոթում է
 նկատնիդրեն խոցված Թալեաթ փաշան:

Երիտասարդը, բթամատով ուսի վրայով երեսկայական ինչ-որ
 փողոցի կողմը ցույց տալով, ասում է.

– Մի քանի օր առաջ զրախանութում անհեթեթ բայց զգայացունց
 մի գրգուկ հայտնաբերեցի ...

– Հոգնած եմ, պարո՞ն:

Սակայն Մելիքյանը տեղի չի տալիս: Եվ կարծես Ներկնային հրաշ-
 քով փոքրիկ գրգույկն անմիջապես հայտնվում է նրա ձևոքերում:

– Այնուամենայնիվ լսե՞ք: Վստահորեն Ձեզ դուր կգա այս գրգույկի
 մեջ գրվածը: Այն վերնազրված է այսպես. «Թալեաթ փաշայի սպա-
 նության զաղտնիքը» և լավ էլ վաճառվում է, ինչպես զրավաճառ
 ինձ՝ իմ հարցուփորձի վրա տեղեկացրեց:

– Ինչ մի մեծ գաղտնիք կա այդտեղ, – անփութ ասում է Թա-
 լեաթ փաշան, – մարդասպանը Հարդենբերգ փողոցում ինձ քոսոտ
 շան պես ...

Մարտի 15-ի կեսօրից առաջ տեղի ունեցած իր անսպասելի մահ-
 ան մասին սարսափելի հիշողությունը կարծես սասանում է այդ
 ուժեղ մարդուն: Արցունքախեղ ձայնով նա ավարտում է խոսքը. –
 Բաց փողոցում, պարո՞ն: Օրը ցերեկո՞վ:

– Ձեր հոգեգեկան վիճակը անմիջապես կրարելավվի, թալեաթ
 փաշա, ևթե լսեք, թե ինչ է գրված այս գրգույկի մի հատվածում:
 Կարդում եմ. «Երիտասարդ հայը, որն անձնատուր եղավ որպես
 Թալեաթ փաշայի սպանող, – Մելիքյանն ընդհատում է ընթերցա-
 նությունը և զննող հայացքով շրջանակի վրայով զննում է խո-
 սակցին, – այստեղ ուրեմն ակնարկվում է, թե դրա ետևում կանգնած
 է ինչ-որ օտարազգի հզոր պետություն: Սակայն շարունակեմ մեջ-
 բերումը. «... նա միայն գործիք է եղել բարբարոս այն կատաղության,
 որը հատուկ է նրա ցեղին: Առանց մտածելու և առանց գիտակցելու,
 թե ինչ է անում: Թուրքերի կողմից իր ծնողների տարագրման նրա
 սրտաշարժ պատմության նպատակը դատավորների համակրանքը
 շահելն է ...»:

Գունաթափի այդ մարդու ուժերը հանկարծ կարծես վերածնվում
 են: Երկու ձեռքերի բթամատն ու ցուցամատը արագ-արագ ոլորում
 և բնդերի ծայրերը: Ապա Թալեաթ փաշան պահանջում է.

– Ապա մի ցույց տվե՞՛ տևանեմ: Խսկապե՞՞ս այդպես է գրված: Մեզ
 սմանները երբեք չպետք է վստահեն Ձեր կարգի մարդկանց:

26

Պաշտպան Նիմայեր. – Պարոնայց երդվյաներ, մենք միմիայն մեկ
 հարցի պիտի պատասխանենք, որովհետև միայն այս մնկը առաջին
 հարցն է, որ նախ կանգնած է մեր առաջ: Արդյոք Սալոնն Թեյլիքյանը
 հանցավո՞՞ր է սպանության համար: Պե՞տք է նա իր գլուխը դնի կա-
 ռավինարանի կողին ու քավի մարտի 15-ին զործած մեղքը: Ես կասկած
 չունեմ, որ դեպքի կատարման պահին, որ միակ խնդրո առարկան է,
 կանխամտածվածություն չի եղել, թեկուզ և նախապես նրա զլխում առ-
 կա լինենի ամենամանրակրկիտ խորհրդածություններ: Պարբերությու-
 նը, որի հիման վրա կայացնելու եք Ձեր վճիռը, ասում է. «Ով դիտա-
 վորյալ մարդ է սպանում և այն կատարում է կանխամտածված, մար-
 դապահանության համար դատապարտվում է մահվան»: Բոլորը համա-
 ծայն են, որ պատճելիության համար ամենուրեք անհրաժեշտ է անօրի-
 նականություն: Սակայն անօրինականության անհրաժեշտության կող-
 քին, եթե ճիշտ մտածենք, գոյություն ունի նաև անօրինականության
 գիտակցականության անհրաժեշտությունը: Որ ամբաստանյալը փաս-
 տորեն գործել է ոչ քե օրենքի համաձայն, այլ օրենքին հակառակ, գուցե
 առաջին հայացքի կասկածից վեր բվա, սակայն այսուհանդերձ բոլո-
 րվին կասկածից վեր չէ: Որովհետև բնավ կասկածից վեր չէ, քանի որ

դեպքը պատահած ժամանակ բուրքերն ու հայերը իրար դեմ պատերազմական վիճակում էին գտնվում, որեմն միջազգային իրավունքի տեսակետից թշնամիներ էին համարվում: Այստեղ կարևոր է, որ տվյալ դեպքում ամբաստանյալի համար անօրինականության գիտակցությունը հարաբերականորեն ազգայնացված բռնույթ ունի: Արևելքի ժողովուրդների համար գործողության օրինականության կամ անօրինականության մասին գիտակցականությունը բոլորովին այլ է, քան մեզ համար: Լսեցինք, թե ինչպես ամբաստանյալը պարուն նախագահի հարցին, թե նա իրեն հանցավոր ճանաչո՞ւմ է, պատասխանեց «ո՛չ», իսկ երբ պարոն նախագահը նրան հարցրեց՝ «ինչո՞ւ Ձեզ հանցավոր չեք ճանաչում», ամբաստանյալն ասաց. «Խոիդս հանցիստ է»: Նրա համար բարոյական և իրավական ճշտությունը նույնարձեք է: Նա չգիտե, չի կարող պատկերացնել, որ բարոյապես ճիշտը կարող է իրավաբանորեն սխալ լինել: Նա չի կարող պատկերացնել, որ բարոյապես լավը նրան մահապարտ կարող է դարձնել: Երբ ես մարտի 16-ին կարդացի Հարդենքերգ փաղոցում կատարվածի մասին, աշքիս առաջ երեք ետևարան կանգնեց, որոնցից այլևս չկարողացաւ ազատվել: 1896 թ. օգոստոսի 26-ին, երբ հայերը խոռվության մի փորձ էին նախապատրաստել, և երբ այդ մասին ոստիկանությունը նախազգուշացրել էր բուրքական կառավարությանը, վերջինս, հատկապես սուլթան Արդուլ Համիդը, ոչինչ չարեց խոռվությունը կանխելու համար, մի քան, որ մեծ դյուրությամբ իրագործելի էր. դրա փոխարեն խոռվությունը ողջունվեց: Կազմակերպվեցին մահակներով զինված խմբեր, որոնց հրամայված էր սպանել յուրաքանչյուր հայի, որին նրանք օգոստոսի 26-ի կեսօրից սկսյալ կտևունեին փողոցում: Ինձ պատմել են, որ հայերին սպանել են ծնկաչոք վիճակում, զլուխները խոնարհած և ձեռքերը աղորքի համար երկինք պարզած: Այն ժամանակ այս ձևով մահացածներից 90 տոկոսը ունեցել է զիսի այդ վերքը: Երկրորդ ինչպես ու է 1908 թ. Թալեաք փաշան իշխանության զրոխ անցել: Նա իր մի քանի բարեկամների, քաղաքական գործընկերների հետ գնացել է նախարարության մեծ վեզիրի (Եպարքոս) մոտ, որն իրեն սպասելիս է եղել: Վերջինս մի ծխախոտ է վառել և ձեռքերը գրպանը դնելով ասել. «Այդ ի՞նչ եք անում, չգիտե՞ք, որ դա մեզ դուք չի գալիս»: Նույն պահին լսվել է հրացանի կրակոց, և նա, որ ուզում էր Թալեաք փաշային հեռացնել, անշունչ գետին է տապալվել կոկորդից զարկված: Եվ վերջապես երրորդ՝ մարտի 15-ի մեզ բոլորին հայտնի տեսարանը: Կարող ենք սրան դիմադրել, ինչքան էլ որ ուզենանք, սակայն այս դատավարությունը նման չէ մյուսներին: Այն ինքնին դուրս է գալիս դատարանի այս դահլիճի շրջանակներից և ստիպում մեզ հա-

յացքն ուղղել հեռավոր առնչությունների վրա ու փորձել հասկանալ այլ ժողովուրդներին, այլ մարդկանց, այլ հանգամանքներ ու արդար լինել նրանց նկատմամբ: Մենք ստիպված ենք կիրառել նահանգային 3-րդ դատարանի և երդվալների այս դատարանի իրավաբանական փորձը՝ իրավունքի էուրյան ու մարդկության խնդիրների համակողմանի լուսաբանված իմացության և փոխկապակցվածության իմաստով: Եթե այդպես վարդենք, ապա չեմ կարծում, որ Դուք Սալոմոն Թեյլիրյանին սպանության համար հանցավոր ճանաչեք: Եթե այդ ամեք, այն ժամանակ, կարծում եմ, զիտեք, թե ինչ կպատահի. այն ժամանակ նա իր ներքին կստահությամբ, անսահման մարդու խողով, վեհ մտայնությամբ, չուզեց ավելորդ մեկ քառ անգամ ասել, որ իր հոգու անլոր մաքրությամբ, երբ նրան հարկադրում էին խոսել, հայտարարեց. «Չեմ ուզում խոսել, չեմ ուզում այդ ամենը մեկ անգամ ևս վերապետել, ավելի լավ է անմիջապես տեղում մեռնեմ»: Նա այդ ասաց առանց որևէ հոգմունքի, իսկ ես կարծում եմ, որ նա հիմա էլ կասի. «Ի՞նչ արած, այդ դեպքում ես կմեռնեմ»: Նա իր պատահի զլուխը, մարտիրոսի իր զլուխը կրնի կողմին, մայրը նրան կհայտնվի ու նրան օգնության ձեռք կմեկնի, և նա կմեռնի երանելի մահով: Ըիս է մնում մարդ այդ քանը ցանկանա: Նրան ազատ արձակելով՝ ծնողները, երբայրներն ու քույրերը չեն կենդանանա, նրան ազատ արձակելով՝ նրա առողջությունը ևս չի վերականգնվի, նա այլևս երբեք չի լինի այն, ինչ ուրիշներն են:

Դատախազ Գործիք.— Պարոնայք երդվալներ. պարոնայք պաշտպանները մեկ քան ձեզ շասացին, գոնե ոչ բարացիորեն, այն, որ դատավորը պարտավոր է դատել ըստ օրենքի: Ես համաձայն եմ առաջին պարոն պաշտպանի հետ այնքանով, որքանով նա իրավամբ գտնում է, որ սպանության կատարման պահին առկա պետք է եղած լինի խորհրդածություն, և միանգամայն ճիշտ է նաև այն, թե սպանությունը, ինչպիսի խնամքով էլ կանչամտածված ու նախապատրաստված լինի, երբեք չի կարող դիտվել որպես կանչամտածված սպանություն, եթե կատարման պահին բացակայել է խորհրդածությունը: Թվում է, թե երկրորդ պաշտպանն աշխարհը բաժանում է ռազմամոլների, որոնց ուղեղությունը մի դե հանել է այն մասերը, որտեղ տեղավորված են արդարությունը, կարեկցությունն ու մարդկայնությունը և, մյուս մարդկանց, որոնց մեջ այդ մասերը դեռ տեղում են: Կարծում եմ, որ այս տեսակետը փորձինչ արմատական է, շատ միակողմանի և արիեստականացված: Նա հավանություն չտվեց այն քանին, որ ես սպանվածին բնութագրեցի որպես գերմանացի ժողովրդի հավատարիմ դաշնակից: Պետք է կրկնեմ, որ քուրք ժողովուրդը կովել է գերմանացիների հետ ուս ուսի տված և

Վատահորեն կարող է կոչվել զերման ժողովրդի դաշնակիցը: Խստագույնս բողոքում եմ, որ պարոն պատասխանը ժուրքիայի քաղաքականության այդ երկու փայլուն ներկայացուցիչներին՝ Ենվեր ու Թալեաթ փաշաներին, վիրավորական ծևով որակեց որպես իրենց երկրից փախած ոճրագործներ: Հոյս եմ հայտնում, որ Դուք, պարոնայք երդը յալներ (այդ վատահորյունը ես ունեմ), որ չնայած Զեզ այստեղ ներկայացված զիտական, բժշկական, իրավատեխնիկական պարագաների շահմասնող թվին, եթե կիրառեք մարդկային առողջ բանականությունը, ապա կգտնեք ճիշտն ու արդարը:

Պաշտպան Գոն Գորդոն.— Պարոնայք, միայն մի քանի խոսք: Պարոն ավագ դատախազը մեզ նկատողություն արեց, որ իրը մենք Զեզ մեկ քան չենք ասել, այն է՝ դատավորը պարտավոր է դատել ըստ օրենքի: Այս, պարոնայք, ես պիտի ամաշին Զեզ ասել ինքնըստինքյան հասկանալին (աշխուժություն): Այնուեւու պարոն ավագ դատախազն ասաց, թե այստեղ չի կարելի վկայակոչել օրենքով սահմանված պատիժը, տվյալ դեպքում մահապահիժը: Դա բացարձակապես սխալ է: Դուք ևս, պարոնայք երդվյալներ, պետք է միշտ աշքի առաջ ունենաք, որ իրավունք չունեք այնպիսի վճիռ կայացնել, որը ներքուստ Զեզ ճիշտ չի թվում, Զեր խորհին ընդունելի չէ: Ինչո՞ւ: Որովհետև հենարավոր չէ, որ մեզ մոտ անարդարությունն օրենքի ուժ ունենա: Դուք, պարոն ավագ դատախազ, խոսեցիք այն մասին, որ մենք չպետք է անցյալն ուրանանք, որ քուրք ժողովուրդը մեզ հետ ուս ուսի տված կովել է: Այստեղ ես Զեզ հետ լիովին համաձայն եմ: Սակայն քուրք ժողովուրդը այդ ջարդերի համար մեղավոր չէ: այն դատապարտում է այդ ջարդերը, ինչպես բնական զգացումներով յուրաքանչյուր մարդ:

Պաշտպան Վերքառելք.— Թալեաթ փաշան քուրքական տոմարով 1334 թ. հունիսի 10-ին օրինական դատավճռով դատապարտվել է որպես հայերի նախնիքի ու անմեղ մարդկանց պատժելու ստոր ոճի հեղինակ: Այդ դատավճռուն ունի օրինական ուժ, և սխալ է, նույնիսկ զերմանական օրենսդրության հակառակ, եթե ես այժմ մեղադրվեմ այն քանի համար, որ դատապարտյալներին, նրանց, որոնք օրինական դատավճռով մեղավոր են ճանաչվել, ոճրագործ են անվանում: Ռազմամոլները կանգնած են ժողովրդից դուրս: Նրանք հայրենիք չունեն, ոչ էլ ազգություն ու մարդկային զգացմունք, ունեն միայն քօնի ուժի զգացում, իսկ այդ ուժի էությունն այն է, որ ճնշում է իրավունքը: Մենք դա տեսանք այստեղ, ուր երկու հակառակ տեսակետների ներկայացուցիչներ իրար դիմ դուրս եկան, մի կողմում բռնի ուժի ներկայացուցիչը, մյուս կողմում՝ ճնշվածների ներկայացուցիչը, որը արդարության ընթացքից էլ առաջ է

անցնում: Ահա այն ամենը, ինչի մասին ինձ քույլ տվեցի ասել: Իրոք, երբ արդարությունը ներկայացնող այսպիսի մի մարդու դիմաց կանգնած է եղել մյուս ներկայացուցիչը, այն ժամանակ նրա աշքին ոչ մի քան չի երևացել, և նա այլևս չի գիտակցել, թե ինչ է անում: Որոշ իմաստով նա առաջ պարզած տանում էր խոշտանգվածների դրոշը, իր անարգված ընտանիքի դրոշը: Ինչքան հաճախ է պատահում, որ վճիռ պետք է կայացնեք ամուսնու համար, որը, տուն վերադառնալով, տեսնում է կնոջ անհավատարմությունը և սպանում նրան: Այդ դեպքում ո՞ւմ մտքով կանցնի գատապարտել ամուսնուն:

Պաշտպան Նիմայելք.— Ժույլ տվեք, այնուամենայնիվ, ասել այն, ինչին ինձ նդեց պարոն ավագ դատախազը: Ժուրքիայում պատերազմի ժամանակ Գերմանիայի ռազմական և զանազան այլ մարմիններ, ինչպես դրսում, այնպես էլ այստեղ, հայկական արհավիրքները քոյլատրելիի սահմանին հասնող չափով լուրջյան մատնեցին ու քողարկեցին: Ի՞նչ խոսք, որ որոշ ջանք քափկեց վայրագություններին վերջ տալու համար: Բայց քուրք բնակչությունն ինքն իրեն ասում էր. «Անկարելի է, որ այս ամենը առանց գերմանացիների հավանության տեղի ունենա: չ» որ գերմանացիներն այնքան ուժեղ են»: Այսպիսով, մենք՝ գերմանացիներս, Արևելքի և ամրող աշխարհի աշբույս դարձանք հայկական արհավիրքների մեղսակիցը: Ամերիկայում, Ֆրանսիայում և Արևելքում մեծ քանակությամբ գրականություն կա, որը հանգում է հետևյալին. գերմանացիները ժուրքիայում իսկական քանաքըն են եղել: Եթե հայտարարվի՝ Սալոնն Ծեյլիրյանն ազատ է արձակված, ապա այդ քացանական կարծիքն աշխարհում կանգուն չի մնա: Արդարացման դատապահին աշխարհը կողջունի որպես ճշմարիտ, գերազույն արդարադատության դրսելորում:

Նախազահ (Քարգմանչին).— Հայտնեցեք ամբաստանյալին, որ նրա երեք պաշտպանները պահանջել են նրա ազատ արձակումը և հարցըք նրան, թե իր կողմից ունե քան ունի՞ հայտնելու (Քարգմանվում է):

Ամբաստանյալ.— Ես չեմ հասկացել, թե պարոնայք պաշտպանները ինչ են ասել սակայն համոզված են, որ այն, ինչ նրանք ասացին, արդեն բավարար է, ավելացնելու ոչինչ չունեմ:

Նախազահ.— Այդ դեպքում ինձ մնում է պարոնայք երդվյալներին իրավական խորհուրդ տալ, և իմ այդ պարտականությունը կատարել մի քանի հակիրճ խոսքով: Արդ, ստորագրում եմ հարցերը:

Եղովյալները գնում են խորհրդակցության:

Ակներևաբար Թալեաթ փաշան հաղթահարել է Փիզիկական ու Հոգեկան թուլության նոպան: Գնալով ավելի մեծ թափ առնելով՝ նա անդադար տրտնջում է:

— Դատարանի իսկական նախագա՞հ: Ընդհանրապես ինչպե՞ս կարելի է իմ դեպքում խոսել իսկական դատարանի մասին:

— Այդ օրերին դուք նույնիսկ դրան չարժանացրիք միջիոն ու կես Հայերին, — կարողացածի չափ կտրուկ կերպով պատասխանում է Սողոմոն Մելիքյանը: — Մինչդեռ նույնիսկ այդ ձեր Օսմանյան կայարությունում, Թալեաթ փաշա, գոյություն չունեին այնպիսի օրենքներ, որոնք զրկում էին իմ հայ նախնիներին ապրելու իրավունքից: Ղուրանը նույնպես այլազավանների վերաբերյալ ուսուցանում է Զեր արածի ճիշտ հակառակը:

— Դուք, որպես քրիստոնյա հեռավոր երկիր Ամերիկայից, չինի՞թե ուզում եք ինձ հայտարարել, որ ...

— Եթե ուզեք, Թալեաթ փաշա, — խոսակցին ընդհատում է Մելիքյանը, — ևս հիմա սուրբայից մեջբերում կանեմ ...

— Շնորհակալ եմ, պարոն, վերջացրե՞ք, բավական է, վե՞րջ. — ընդմիջում է Թալեաթ փաշան անհողողող, — խնայե՞ք Զեր ուժերը: Եվ Դուք դեռ չարունակում եք հապարտանալ Զեր Թելիքյան պապով:

— Թեհէլերյան: Հետագայում նա իրեն անվանեց Սարո Մելիքյան և մասց այլպես:

Թալեաթ փաշան ծիծաղում է արհամարհանքով:

— Միայն այն մարդիկ են զեն նետում իրենց ազգանունները, որոնք անքավելի մեղքի տակ են ծանրացած:

— Ինչպես դուք, Սալի Ալի բնել:

Թալեաթ փաշան, կարեռություն չտալով, շարունակում է.

— Եվ մի բան էլ. ինձ մեկընդմիշտ հանգիստ թողեք: Նույնիսկ Զեզ՝ մարդասպանի թոռան համար, մեռած մարդու և նրա ընտանիքի հիշատակը ավելի թանկ պետք է լիներ, քան պարտքի ու մեղքի պատմական հասարակ հաշվեհարդարը: Ընդհանրապես իմ կողմից սխալ էր, որ Զեզ հետ բանավեճի մեջ մտա: Ընդունեցե՞ք սա որպես Զեր ժողովրդի հանդեսպ իմ հանդուրժողության արտահայտություն:

Լայնաթիկունք մարդը մի պահ կանգ է առնում, ապա ինքնավատահ չարունակում.

— Գերմանական այս ատյանում իրավունքը, ելնելով քաղաքական ինչոր նկատառումներից, արդարության հետ չի նույնացվում: Խնդրեմ, Դուք և Զեր նմանները զնացե՞ք ու մեծարե՞ք այդ վախսկուտ մարդասպան Սալոմոն Թելիքյանին՝ որպես անբասիր մարդու և հերոսի: Սակայն Դուք՝ հայերդ, երկար չեք վայելելու այդ նողկալի արարքը: Մեկ այլ մեծ փորձանք կզարդորի կողմից այնքան կարևոր հայերիդ զլիսին:

Թվաց, թե ոզը չի բավականացնում Թալեաթ փաշային: Սպառնալից կանխագուշակությունը մնում է առկալի:

Մելիքյանը զլիսով է անում, ապա լուրջ դեմքով ասում:

— Դա Զեր իմանալու բանը չէ, Թալեաթ փաշա, սակայն Զեր նոր ասած խոսքերը երեւ մարգարեական էին:

— Երդվալները, պարոնս: Ուզում եմ լսել նրանց: Ով գիտի, գուցե հրաշք կատարվի, և արդարությունը հաղթի:

— Այդ բառերը Զեր չուրթերից թող Աստծո ականջին հասնեն, Թալեաթ փաշա, — պատասխանում է երիտասարդ ամերիկացին և սպասումով լի հայացքն ուղղում երդվալների նստարանին:

28

Մեկ ժամվա խորհրդակցությունից հետո երդվալների զլիավորը հայտարարում է.

«Պատվով և խորհու հավաստում են երդվալների վճիռը. հարց՝ հանցավո՞ր է ամբաստանյալ Սալոմոն Թելիքյանը 1921 թ. մարտի 15-ին Շաոլոբենքուրգում կանխամտածված կերպով մի մարդու՝ Թալեաթ փաշայի սպասության հարցում: Պատասխան՝ Ո՞չ:

Օքքո Ռայնիքն, երդվալների զլիավոր»:

29

Դահլիճում տարերայնորեն սկիզբ առած աշխատվությունն ու ընդհատվող ծափահարությունները Սողոմոն Մելիքյանին մի քանի վայրկանով մոռանալ են տալիս երիտարքական ներքին գործոց նախակին նախարարին: Եվ երբ նա վերհիշում է Թալեաթ փաշայի գոյությունը, վերջինս անհետ չքացել էր: Երիտասարդն իրեն տեսնում է զեպի ելքը ձգտող բազմության մեջ: Արդարադատության գերհզոր շենքի առաջ լրացրավաճառ պատանին հույսը դրած թերթի լավ վաճառքի վրա՝ բացականչում է.

«Զուիլիո Մաղետին Փիատով հաղթանակ է տանում Տարգա ֆլորիոյի ավտոարշավում: ԲԵՌԼԻՆԵՐ ԱՅԴԵՄԱՅՆԵ ՑԱՅ-ԹՈՒՆԳ. Բեղինում սպանության դատավարության մասին. Գերմանիան մնում է իրավական պետություն. իրավունք ունե՞ն օտար ժողովուրդների ներկայացուցիչներն իրենց անձնական հաշիվները մաքրել գերմանական հողի վրա: ԲԵՌԼԻՆԵՐ ԱՅ-ԳԵՄԱՅՆԵ ՑԱՅԹՈՒՆԳ (Բեղինյան ընդհանուր թերթ)...»

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՑԱՆ

Սեպտեմբերի 28, 1995 թ., ժամը 7-ն անց 45:

Քույր Բեաթլեն վեր է կենում ամերիկացի Սողոմոն Մելիքյանի մահճակալի մոտ դրված աթոռից:

– Բժիշկ Սեյսումյուն, – ձայնում է նա դռան արանքից դեպի դիմացի բժշկի սենյակը, – նա ուշքի է զալիս:

Մելիքյանը բաց է անում աչքերը:

– Որտե՞ղ եմ, – շնչում է նա, – ի՞նչ է ինձ հետ պատահել: Քույր, չեմ կարողանում շարժվել:

Հանգստացնող տոնով Քույր Բեաթլեն համոզում է նրան.

– Այդ ինչե՞ր եք սարքում մեր գլխին, պարո՞ն Մելիքյան: Ինչպես կի՞ աջ ու ձախ հարվածում, վստահ ևս ահավոր մղձավանշներից էի՞ տանջվում: Ստիպված եղանք Ձեզ ամուր կապկապել: Ու անդադար զառանցում էի՞: Մի ոմն փաշայի հետ էի՞ խոսում:

– Ավելի լավ՝ եք արդեն, – հարցնում է բժիշկ Սեյսումյուն՝ մոտենալով մահճակալին:

– Դուք... – Մելիքյանի լեզուն անցնում է ուռած շրթունքների վրայով: Ցավից երևար ջղաձգվում է:

– Բժիշկ Սեյսումյուն, – ներկայանում է բժիշկը՝ զլսով անելով, – Դուք ուժեղ ցնցում եք ստացել, ուզում էի՞ այստեղ նույնիսկ ինձ հետ կովի բռնվել: Դուք դա հիշո՞ւմ եք:

Սողոմոն Մելիքյանը տնօքալով բռնում է գլուխը: Հիշողությունն իրեն դավաճանում է:

– Հնարավո՞ր է, որ Դուք մեր՝ թուրքերի հանդեպ թշնամաբար եք տրամադրված, – կամացուկ հարցնում է բժիշկ Սեյսումյուն: – Որպես ամերիկացի՞: Իսկ եթե դա այդպես է, ապա ինչո՞ւ:

– Ոչ, ոչ, – հակաճառում է Սողոմոն Մելիքյանը, – պարզապես ևս ԱՄՆ-ի գիտական ինստիտուտներից մեկի համար աշխատություն

եմ գրում 1915 թ. Հայերի նկատմամբ թուրքերի կազմակերպած ջարդերի մասին: Իմ նախնիներին ևս այդ ժամանակ զաղանաբար կոտորել են: Հավանաբար այդ պատճառով եմ զառանցել:

Հանգիստ, սակայն շատ որոշակի հնչում է բժշկի հարցը.

– Իսկ ի՞նչ են անում ներկայումս Ձեր Հայրենակիցները:

– Չեմ հասկանում:

– Ի՞նչ եք անում Դուք՝ Հայերդ, Աղբեջանի իմ Հավատակից Եղայրյաներին: Քշում եք մարդկանց, այրում մուտքմանների տները:

– Ապրում եմ, ինչպես ասացի, Ամերիկայում: Սակայն զուց այդ ամենը տեղի է ունենում, բժիշկ, որովհետեւ մինչ այդ Հայերի ողբերգական ճակատագիրը դարձյալ անհնտացել է աշխարհի խղճի տևսադաշտից՝ երկրաշարժից և Լևոնյան Ղարաբաղի համար արյունալի կոփներից հետո:

– Բայց չի՞ որ հանցագործությունների միջոցով է, որ Ձեր Հայրենակիցները ձգտում են իրենց վրա ուշաղրություն հրավիրել: Դուք և Ձեր ժողովուրդը պետք է որ պատմությունից բոլորից լավ գիտենայիք, պարո՞ն Մելիքյան, թե ինչ է նշանակում զավթում և արտաքսում:

Քույր Բեաթլեն ընդհատում է խոսակցությունը.

– Տիկին ինչն է այստեղ, բժիշկ Սեյսումյուն:

Թրքուհին, զուան շրջանակին ամուր կառչած, լաց էր լինում:

– Ինչո՞ւ իմ էրգուն ... մեռած, պարո՞ն բժիշկ:

Բժիշկ Սեյսումյուն, մոտենալով հուսակտուր կնոջը, կարեկցանքով բռնում է ուսերից:

– Հավատացե՞ք, տիկին ինչը, մենք ամեն ինչ արեցինք: Սակայն դանակի հարվածներից մեկը շատ խորն էր, թոքերին էր հասել: Մի բան էլ. Ձեր ամուսինը այստեղ գալու ճանապարհին շատ արյուն էր կորցրել:

Տիկին ինչն անընդհատ կրկնում է հարցը.

– Ինչո՞ւ իմ էրգուն ... մեռած, պարո՞ն բժիշկ:

Քույր Բեաթլեն միջամտում է՝ փորձելով միսիթարել նրան.

– Լսեցե՞ք, տիկին ինչը: Դա իհարկ է Ձեր փիշտը չի կարող ամորել, սակայն Ձեր ամուսինը փրկել է այս պարոնի կյանքը: Մենք բոլորս մեծագույն հարգանքով ենք լցված Ձեր ամուսնու՝ էրգուն ինչեի նկատմամբ:

Քույր Բեաթլեն փորձում է թևանցուկ անելով կնոջը զգուշորեն դուրս տանել հիվանդասենյակից:

— Գնանք, տիկին Ինչն; Ես Ձեզ հանգստացնող մի քանի կաթիլ կտում; Հետո, եթև ուզնք, կհեռաձայնեմ Ձեր աղջկան ու ամեն ինչ կհաղորդեմ:

Զարմանալի ուժով տիկին Ինչն բռնվում է դռնից: Կարծես մտացրիվ, նա երրորդ անգամ գոռում է սենյակից ներս.

— Ինչո՞ւ իմ էրգուն ... մեռած, պարո՞ն թժչկ:

Սողոմոն Մելիքյանը, մեծ ճիգ գործադրելով, մի փոքր ուղղվում է մաշճակալի մեջ և աղղված ձայնով ասում.

— Հարգելի՛ տիկին Ինչն, ևս էլ ուզում եմ Ձեզ ասել, թե որքան եմ ցավում: Եթև ևս չլինեի...,՝ երիտասարդ ամերիկացին կանգ է առնում: Նա զիտի, որ այս պահին ցավակցական խոսքերն անօգուտ են: Սակայն ներքին մղումով ավելացնում է միակ նախադասությունը.

— Անունս Սողոմոն Մելիքյան է, տիկին Ինչն, գուցե ասեիք, թե ի՞նչ կարող եմ անել Ձեզ համար: Զէ՞՞որ Ձեր քաջ ամուսինը կյանքս է փրկել:

Առանց օտարականին մինչև վերջ լսելու թրքուհին լաց լինելով՝ երեսը շրջում է: Դուրս գնալիս նա հեծկուանքների միջից շնչում է. «Հայն ապրած, թուրքը՝ մեռած»:

ՎԵՐՋԱԲԱՆ

«Փա՛ռք քեզ, գերմանացի՛ դատավոր»,՝ ասվում է Հայկական ժողովրդական երգերից մնկում: Այդ մասին ես առաջին անգամ տեղակացա 70-ական թվականների սկզբին, երբ ուսանում էի այն ժամանակվա Խորհրդային Հայաստանի հանրապետությունում:

Այդ տարիներին Թալեաթի վրա մահափորձ կատարած Սողոմոն Թեհրեյանի (ղատական արձանագրություններում՝ Սալոմոն Թեհրեյան) սենսացիոն արդարացումից արդեն անցել էր ավելի քան 50 տարի: «Փոքր Նյուրնբերգ՝ անհատի ճակատազրի մակարդակի վրա». այսպես է անվանել երեսանցի պատմության պրոֆեսոր Մեծնդակ Մելիքյանը 1921 թ. Շառլոթենբուրգի առաջին ատյանի դատարանի երդվալների դատավարությունը ընդդեմ Թեհրեյանի: Հայտնի է, որ Հայ Ժողովուրդը մինչև օրս սպասում է այս Հարցի «Մեծ Նյուրնբերգին», երբ միջազգային հանրությունը կդատապարտի Հայերի ցեղասպանությունը, որի սարսափազզու ֆոնի վրա ընթացավ վերոհիշյալ դատավարությունը: Չնայած մի քանի բացառության՝ պատմության այդ ամոթալի էջը քննարկման է արժանացել միայն անխոս թղթի վրա: Խակ մինչ օրս տպագրված բոլոր նյութերից ընթերցողների ամենալայն շրջանակ է ունեցել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը»:

Անշուշտ, քանից մատնանշվել են պատերազմի հանցագործների ստամբուլյան դատավարությունները, որոնք տևելի են ունեցել 1919–1921 թթ. Անտանտի պետությունների ճնշման տակ: Սակայն Թուրքիայի հանրապետությունը՝ Մուսավաֆա Քեմալ Աթաթուրքի կողմից իր ստեղծման օրվանից անտեսեց նշված դատավարությունների ընթացքում բերված ապացույցներից ու ընդունված վճիռներից բխող հետեւթյունները: Դեռ ավելին, ինքնին դատավարություններն արգելք հանդիսացան ազգային ու Համապետական նոր Հասկացության որոնման Հարցում: Օսմանյան բազմացեղ ու բազմակրոն կայսրությունը թուրքական աշխարհիկ պետականությամբ փոխարինելու մասին հանրապետության հիմնադիրների պատկերացումները չափազանց նման էին Հանցագործ երիտթուրքերի պատկերացումներին, այնպես որ նրանց խորաթափանցությունը հաղիվ թե ի վիճակի

լիներ սուսկ արտաքին վերապիտակավորումներից այն կողմ անցնել: Որպես իրմանցը հավակնած պետական տարածքում թուրքերից բացի մեկ այլ ազգի կենսական իրավունքների թեկուց հիշատակումը սկզբ-ը և սիթ սրբազնություն էր իշխանության մասին իրենց ունեցած հասկացության նկատմամբ:

Ընթերցողը չվետք է աչքաթող անի նաև այն մնայուն հետեանք-ները, որ ունեցավ՝ 1928 թ. անցումը լատինական գրերին: Պատե-րազմի հանցագործների ստամբուլյան դատավարությունների աղ-ըյուրների՝ դատական տեղեկագրերի ու թերթերի ուսումնասիրու-թյունների՝ այսօր կպահանջի գրեթե զաղտնագրեր վերծանելու կարողու-թյուն, և այն էլ ոչ միայն արարական գրերի, այլև այդ աղբյուրներում առկա ոչ թուրքական, մեծ մասամբ պարսկական ծագում ունեցող բազմաթիվ մասնագիտական եղրույթների: Այդ աշակոր աշխատան-քը բաժին ընկավ թուրքիայից դուրս գործող մասնագետներին, և առաջին հերթին Վահագն Տատյանին: Բնովինում ուսանած՝ ցեղա-սպանության այդ ամերիկացի անվանի գիտնականը դատավարու-թյունների հաղորդագրերի հիման վրա ապացուցեց, որ ՄԱԿ-ի ցե-ղասպանության բնորոշման բոլոր չափանիշները, ինչպես՝ «պանա-փորփած ձեռվ նախապատրաստված», «կանոնավոր ձեռվ իրագործ-փած» և այլն, կիրառելի նն հայերի ցեղասպանության նկատմամբ: Դատավարությունների շրջանի թուրքական հասարակության մեջ, ինչ խոսք, կարող էր լինել մեղքի զգացումի գեթ նշույլ, այն դեպքում, երբ 1919 թ. մահվան դատապարտվածներից առաջինի թագումը վեր ածվեց «իսլամական նահատակին» նվիրված սրբազն ցույցի: Իսկ Անտանտի նրկումը՝ Այդ ժամանակ նրանք վաղուց արդեն ամբող-ջությամբ գրադարձ էին առաջնային այլ խնդիրներով: Այսպիսով, ցեղասպանության վերապրողները, հատկապես նրանք, ովքեր չեին վայելում արտասահմանյան որևէ նրկի ապահովությունը, կրկին ու կրկին անզամ դավաճանվեցին ու ծախսեցին: Այդ բախտին արժանա-ցավ, օրինակ, Արդահանի ու Կարսի հայ բնակչությունը, որը Աթա-թուրքի ու Լենինի միջև կնքած, բայց հեղափոխական շաղակա-տանքով գունազարդված հողի, փողի ու զենքի գործարքի զոհը դառ-նալով՝ կրկին ընկավ անկարայի կործանարար լի տակ:

Այն միտքը, որ «երր թիկունքում, հեռափոր թուրքիայում, ազգերը իրար են բախվում» (Գյոթե), մեզ՝ ժամանակակիցներիս, շատ ավելի է վերաբերում, քան ոմանց առաջին հայացքից թվում է, շատ դիպուկ կերպով շեշտեց ավետարանական միացյալ կեղեցու արվեստապետ պատվելի Մանֆրեդ Ռիխերը՝ Լևիսիուսի հոգեոր ժառանգներից

մեկը, երբ նա 1995-ին Բևոլինի մայր տաճարի տիեզերական ժամեր-գության ժամանակ հետևյալ քարոզը կարդաց.

«... Թուրքիայի ու Աղրբեջանի կողմից այդ երկրին (այսինքն՝ Հայաստանին – Ա. Հ.) ու նրա մարդկանց ամբողջ աշխարհի աչքի առաջ պատճառած չարագործությունները, այդ թվում տվյալ եր-կըրներում իրենց կատարած ոճիրների ժխտումը մինչև այսօր շարու-նակվում են: Նարունակվում է նաև սիրախաղը մարդկային իրա-վունքները ոտնաշարող թուրքական բաղաքականության հետ, իսկ աշխարհն այդ բոլորը հանդուժում է: Հանդուժողներից մեկն է նաև Գերմանիան: Կա սակայն, ցավոք, մի հատուկ պատճառ, որի համար ես այսօր, դարասկզբի առաջին մեծ ցեղասպանության 80-ամյակի նախաշեմին, և կեղեցու խորանից պարտավոր եմ Հայտարարել. Հան-րածանոթ փաստ է, որ գերմանական կայսրի արքունական եկեղեցին այն ժամանակ տեղյակ լինելով հանդերձ այդ ոճիրների մասին, լուել է: Այո՛, վերջերս որոշակի փաստաթղթերի հայտնաբերման շնորհիվ ապացուցվել է, որ Գերմանիան ոչ միայն առանց որևէ առարկության հանգույթներ է թուրքական կառավարության հանցագործուն-ները, այլև արգելով է հանդիսացել, որ ջարդերի մանրամասնություն-ները հրապարակ հանվեն: Դա ապացուցել է ավետարանական հո-գերական Յոհաննես Լևիսիուսը 1918-ից հետո, երբ նա Վայմարի իշխանությունների առաջարանքով դիմանագիտական բազմաթիվ վավերագրերի, հատկապես թուրքիայում գերմանացի հյուպատու-ների կոստանդնուպոլսի (Ստամբուլ) Գերմանիայի ղետպանատան, ինչպես նաև Գերմանիայի արտաքին գործոց նախարարության հետ ունեցած թղթակցությունների հիման վրա գրել է «Հայ ժողովրդի մահվան երթը 1915–1916 թթ.» աշխատությունը: Այդ գործը գեր-մանական իշխանությունների կողմից բռնագրավվել է, գեռես նախքան Ռայխսմագի բոլոր պատզամագորներին հասնելը: Սակայն Գերմանիայի մեղսակցությունը դրանով չի սպառվում. թուրքական զիլսափոր շտաբ գործուղված գերմանացի զորագլուխը գործուն կեր-պատվել է թուրքերին ու նրանց դրեւ, որ իրագործեն հայերի պով հրահրել է թուրքերին ու նրանց դրեւ, որ իրագործեն հայերի բնաշնչումը:

Խիստ երկմտելի է այն հայտարարությունը, որ գրեթե տասը տա-րի առաջ ունկնդիրներին հանդարատեցնելով՝ կատարել է գերմանա-կան արտաքին գործոց նախարարության բարձրաստիճան պաշտոն-յաներից մեկը. «Ցեղասպանության փաստը վաղուց է, որ գերմանա-յաներից մեկը. «Ցեղասպանության փաստը վաղուց կան բաղաքականության բոլոր մակարդակներում գիտակցության բովանդակություն է դարձել»: Այսուհանդերձ, հազարավոր ստորա-բովանդակություն է դարձել»:

զրություններ հավաքելուց հետո միայն Գերմանիայի Բունդեսթագի մի քանի պատգամավորների պահանջով 2001 թ. Հայաստան թևման ընդհանրապես կարող էր դառնալ խորհրդարանի քննարկումների առարկա, այն էլ դգուշորեն խուսափելով «ցեղասպանություն» հասկացությունից: Այո՛, Գերմանիայի կառավարության պաշտոնական քաղաքականությունը պատմական արդարության հարցերում առաջամարտիկի դիրքերում չէ: Նման հարցերը ավելի լավ է թողնել ֆրանսիայի, Խորհրդայի ու Վատիկանի խորհրդարաններին: Թվում է, թե Գերմանիայում գոյություն ունեն առաջին և երկրորդ կարգի ցեղասպանություններ, որոնց գերմանական տարբեր կառավարություններ մասնակցել են որպես մեղավոր կամ մեղսակից: Մինչև օրս տեղի ունեցած ամեն արհավիրք ստվերի տակ զցող հրեական ողջակիզումը չպետք է պղտորի ներկա և ապագա սերունդների դատողությունը, թե ինչպիսի չարիք է գործվել հրերուների, սինտիների, գնչուների և Հենց նաև Հայերի նկատմամբ: Այսպիսով, գեղ շատ բան կա անելու միջազգային իրավունքի հասկացություններն առանց խորականության ընկալելու և դրանք հոգանակոր չունեցող ժողովորդների նկատմամբ ևս կիրառելու հարցում:

Այդ տեսակետից վերջարանիս սկզբում Մելիքյանի արտահայտած միտքը Շաղոթենքուրգի և Նյուրնբերգի քրեական դատավարությունների միջև կապի աստիճանական բնույթի մասին առավել իմաստալից է դառնում, և ոչ միայն այն պատճառով, որ Նյուրնբերգում զլսավոր դատախազի պաշտոնակատար Ռոբերթ Վ. Քևմիները նախապես որպես ուսանող մասնակցել էր Շաղոթենքուրգի դատավարությանը, այլև որովհետև այդ երկու դատավարություններից հետո ծնված ամեն հայ կարող է նույնանալ այդ երկու դատավարությունների ընթացքի ու նրանց անհերքելիության հետ, մի բան, անշուշտ, որ իրավես չի կարելի ասել ստամբուլյան դատական նիստերի մասին: Որքան ավելի մեծ է զոհերի խարգածությունը, այնքան ավելի ծանրակիր պետք է լինի մատուցվող հատուցումը: Ստամբուլյան դատական նիստերում ներկայացված Հայերի արդարացի պահանջների դիմաց շատ քիչ հաջողվեց որևէ մնայուն բան ստանալ: Գրեթե նույնը կարելի է ասել Շաղոթենքուրգի դատավարության մասին, որի խորհուրդն արտացոլված է վերը նշված երգի մեջ: Իրավացի էր ԳԴՀ-ի արևելագիտության անվանի գիտնական Բուրխարդ Բրենթյասը, որը պետական հանցագործներ Բալեաթի ու Էնվերի անունները տեղադրել է Հիտլերի ու Հիմլերի անունների կողքին: Քաջ Հայտնի է 1939 թ. Հիտլերի խոսքը Հայերի ցեղասպանության մասին, երբ նա

փորձում էր ցըել բոլոր տարակուսանքներն իր վարած զավթողական պատերազմի ու ոճրագործ ծրագրերի վերաբերյալ՝ ասելով. «Ո՞վ է հիշում նրանց մասին»: Ուրեմն պատերազմի հանցագործների ստամբուլյան դատավարություններն առանձնապես մեծ են չիտղացին թուրքիայից զուրս ևս ավելի բարձր արգելափակոցներ տեղափորելու ուղղությամբ: Ի դեպ նացիոնալ-սոցիալիստները քաջ զիտեին, թե ինչու 1934 թ. արգելել մեկ տարի առաջ լույս տեսած «ԱՌԱՍ լուսան 40 օրը» գիրքը: Թալեաթին ու Էնվերը համարվում էին ուսուցիչներ, իսկ ուսուցիչներին պատիվ է վայել: Թալեաթի աճյունը 1943 թ. տեղափոխվեց Ստամբուլ, իսկ էնվերինը՝ Խորհրդային Միության վլուգումից հետո Միջին Ասիայից տուն վերադարձվեց:

Ի դեպ Շաղոթենքուրգում թե՛լիքյանի ազատ արձակման գնահատումը, որպես սահմանադրական պետականության մարմնավորում, անտեղի է: Այդ ժամանակվա Գերմանիայում խուսափում էին այնպիսի հարցերից, ինչպիսին էր Հայաստանի և Թուրքիայի փոխհարաբերությունը մեղսակից կայսերական Գերմանիայի հետ և ցանկանում էին գործն աննկատ արխիվ հանձնել: Բացի դրանից Բելինը ապաստարան էր դարձել բոլոր հին դաշնակիցների համար և լույսայն հանդուրժում էր Թալեաթի պես մարդկանց, որոնք 1919 թ. իրենց բացակայությամբ մահվան էին դատավարատվել սեփական երկրում: Այդ է պատճառը, որ թե՛լիքյանի հրապարակային դատավարության ներկայացումն ընթացավ զարդանալի շտապողականությամբ, նույնիսկ առանց լրացուցիչ կարեռ վկաների լսելու կամ ընդունակ ապացույցների (Հեռագրերի) վավերականությունը ստուգելու, մի գործնթաց, որն այսօր անվավեր պիտի համարվեր: Դատավորն ու երդը վայական ակնհայտորեն ցանկանում էին հետամտել միայն սպանության իրագործման ու դրա նախապատրաստման, ինչպես նաև ամբաստանյալի հոգեկան վիճակի և նրա արարքի դրդապատճառներին վերաբերող ցուցմունքներին: Այսպիսով, մի տեսակ զերազա արդարություն Շաղոթենքուրգում կարողացավ տոնել իր հաղթանակը: Կարծես մահափորձի միջոցով վավերացված լիներ Թալեաթի դեմ մահավճորի ի կատար ածումը, թեև իրավաբանորեն թե՛լիքյանի ազատ արձակման վճիռը որակված էր որպես «հուգական արարք հանցանք գործելու անընդունակ վիճակում»: Վճիռը ողջունեցին ոչ միայն զգացումով կողմնակալ Հայերն ու Հայասերները, այլև ժողովը ըլլուգավար գերմանացիներն ու Լեփսիուսի նման մարտնչող քրիստոնյաները:

Նորագույն պատմությունը մեզ սովորեցրել է, որ նույնիսկ Նյուրնբերգը, որքան էլ այնտեղ բարձր ու գոհացուցիչ կերպով տևղադրվեց մարդկության դեմ հանցագործությունները կանխող չափածողը, իրավագիտության պատմության մեջ կարող է դիտվել միայն որպես անցման փուլ։ Ո՛չ Նյուրնբերգում մշակված իրավական նոր չափորոշիչներից, ո՛չ էլ դրանց վրա հենված ՄԱԿ-ի կանոնակարգերից չի կարևի անհրաժեշտորեն բխեցնել հայկական ողբերգությունը համանման չափանիշներով քննարկելու և կամ նորագույն շրջանի ցեղասպանությունների դեմ պարտադիր միջոցառումներ կիրառելու հնարավորությունը։ Մինչ օրս միջազգային իրավական համակարգում չկա մի գործընթաց, որը համապատասխաներ հայցի դեպքում պարտադիր դատաքննության։ Որտեղ այսօր հայցվոր կա, բնակ պարտադիր չէ, որ դատավոր էլ գտնվի։ Այս ցավուտ կենսափորձի հետ հայերը երևի պետք է հաշտվնե՞ չնայած այն հանգամանքին, որ նրանք 1991-ին իրենց հանրապետության հոչակման ժամանակ Միացյալ ազգերին ու Եվրոպական կառուցներին անդամակցելու մեծ հույսեր էին կապել։ Արդեն քա՞նիքը տարին է, որ աշխարհն անտարբերությամբ հանդուրժում է, որ Հայաստանի շրջափակումը հարատեկի։ Թե ինչպիսին կինի Լեռնային Ղարաբաղի ապագան, ոչ ոք չի կարող կանխատեսել։ Չնայած զինադադարին՝ Հայաստանի տնտեսական ծանր վիճակի պատճառով շարունակվում է հարյուր հազարավոր մարդկանց արտագաղթը։ Սա աննախընթաց արյունաքամություն է։ Սկսուքի հին ու նոր համայնքները զերծ չեն երկպառակություններից, իսկ միջոցների ներհույքը զլսավորապես սպառողական բնույթ ունի։ Արտաքին խաղաղության տեսակը, ինչպես և ներքին իրավական ապահովությունը, ամենին էլ տնտեսական մուտքուտ հրաշքներ չեն խոստանում։

Դրա փոխարեն բոլորովին այլ բնույթի հրաշքներ են կատարվում։ Նկատի ունենալով ամենօրյա հացի համար դժվարին պայքարը պիտի թվար, թե երկրում մնացած մարդկանց չպիտի հետաքրքրեին ժողովական երգերը, առասպելներն ու գեղարվեստը։ Այսօրվա այցելուն ամենն քայլափոխի տեսնում է ճիշտ հակառակը։ Եկեղեցու 1700-րդ տարում իր գագաթնակետին է հասել պատմության շարունակականության ամենուրեք իշխող պահանջը։ Պարտադիր չէ, որ պատմությունն ընկալվի միայն որպես տառապալից անցյալ։ Ազատությունից ու պետական անկախությունից քաղել առավելագույնը («ՄԱԿ այլ Հայաստան չունենք»), աւա թե որն է գոհերի պատօնամը մարդկանց ըմբռնմամբ։ Դժվար, բայց իրագործելի խնդիր։ Միրով,

իսկ վերջերս բավական հաճախ, մարդիկ մեջ են բերում իմաստալից մի քայլակ, որը «Սասունցի Դավիթ» հազարամյա ազգային էպոսի սկզբում մեղադրական խոսքեր է կրկնում երկրագնդի բոլոր խաղաղասեր քաղաքացիների անունից և որ հանդիսանում է կոտորածներն ու սպանդները փոխընտրելու միակ ծրագիրը։ Ոմնի դա Բեոյինում, ուր այս գրքի գործողությունն է տեղի ունենում և որտեղ այն գրվել է, թե Հայաստանում, որը փորձում է փոխարքունման ձևոք մեկնել ախարհի ժողովուրդներին, մինչ իր երրորդ հազարամյակի շրջադարձին այն հնտաղարձ հայացքով նայում է գեպի գրիստոնեական իր 1700 տարիները և միահամանակ անսասան հույսով հավատում ապագային։ «Համերաշխությունը շղթայի օղակն է, կամուրջը տարբեր հավատների միջն»։

Թեև նահանգային դատարանի տնօրեն դ-ր Լեմբերգն ինքը չէր, այլ երդվյաներն էին, որ «Թալեսաթ փաշայի դատավարությունում» կայացրին թեւկերյանի անմեղության վճիռը, հայ ժողովրդի հոգիներում վերացարկվելով՝ Լեմբերգը հավերժություն մտավ որպես «գերմանացի դատավոր»։ Մի ամբողջ ազգի հավաքական վերքերն արտահայտվել են նախ ողբերգություններում, ապա պատմական վեպերում և բազմաթիվ վավերագրություններում։ Եվ երբ տանջանքը, տագնաան ու փորձանքները անհանդիմելի դարձան, նրանք հնչեցին արդարության ասպետների բերանում («Զարթի՛ր, լառ») և ոգեշնչեցին մարտիկներին, ինչպես զա տեղի ունեցավ Սարդարապատի հաղթական ճակատամարտում (1918), Լեռնային Ղարաբաղի ազատագրական կոփիներում (1988-ից սկսած), երբ ծեր ու մանուկ, բոլորը միաբերան փառաբանում էին Սովորոն թեւկերյանին՝ որպես իրենց հերոսի։ Եվ, ով գիտի, շատ հարավոր է, որ բանավոր խոսքին նախքան նվիրված և զրքերին սիրահարված՝ հայկականի նման հնայնքան նվիրված ավելացնի մի շարունակություն՝ վիպագրելով ներկա դարշարջանի ուշագրավ իրադարձությունները։

ԱՏԵԶԱՆ ՀԱՅՄԱՆ

ՄԱՍՆԱԿԻՑ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ

(Թեհականի, Անտոնյանի և Բալաբյանի կենսագրականները կազմվել են Թեոլինում պարոն Համո Պետրոսյանի բարեհաճ օգնությամբ)

ՍՈՂՄՈՒՆ ԹԵՀԱԵՐԹԱՆ (Սալոնն Թեյլիրյան, Սարո Մելիքյան)

Ծնվել է 1896 թ. ապրիլի 2-ին (ըստ դատական արձանագրության՝ 1897 թ. ապրիլի 2-ին) Երգնակայի գավառի Կամախի գավառակի Ներքին Բազարի գյուղում, վաճառականի ընտանիքում: Երբ 1915 թ. ապրիլի վերջին սկսվեց Հայերի կոտորածը, նա գտնվում էր Սալմաստում: Այնտեղ Սեպուհի զլիսավորությամբ կազմվել էր կամագորական մի ջոկատ, որին պատկանում էին Հայ մտավոր աշխարհի անվանի Ներկայացուցիչներ: Սակայն ջոկատը շուտով կազմալուծվեց: Վերադառնալով Հայրենի Երգնակա գավառը՝ նա իր 85 մոտ ու հեռու ազգականների հետ ենթարկվել է տեղահանության, որը կարգադրված էր ամբողջ Հայ բնակչության նկատմամբ: Բացի նրանից սպանվել են բոլոր ազգականները: Հայրական տունը վերածվել է թուրքերի իջևանատան: Վրեմի զգացումից ու ատելությունից մղված՝ նա տարիներով թափառել է Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի ու Ղրիմի քաղաքներով, որտեղից 1918 թ. գնացել է Ստամբուլ: Այնտեղ է նա սկսել նախապատրաստվել Հատուցման ահարենքության: Հայաստանի առաջին հանրապետության իշխող կուսակցությունը՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, 1919 թ. Երևանում գումարած ընդհանուր ժողովում կազմել էր Եղեռոնի զլիսավոր Հանցագործների ցուցակը և ուղարկել կուսակցության բոլոր մասնաճյուղերին այն Հրահանգով, որ կուսակցության յուրաքանչյուր թջիջ պարտավոր էր այդ անձանց նկատմամբ կիրառել Հատուցման ահարենքություն, որտեղ էլ նրանց գտնելու լիներ: Թեհայանը մեկնել է Փարիզ, ուր իր ապրուստը վաստակել է որպես կոշկակարի աշկերտ: 1920 թ. կանչվել է Ամերիկա, որտեղ մշակվել է Սալի Ալի բևել ծածկանուով՝ որպես թուրք վաճառական թեոլինում բնակվող Թալեաթ փաշայի

սպանության ծրագիրը: 1920 թ. դեկտեմբերին Թեհայանը որպես պարսկահայ ուսանող ֆնառով գնացել է Բելգիա, բնակարան վարձել նախ Շաոլոթենբուրգում, ապա Առուցրուրգեր փողոցում, իսկ 1921 թվականի մարտի 4-ին տեղափոխվել է Հարդենբերգ փողոց, Թալեաթ փաշայի բնակարանից հազիկ 25 մ հեռավորության վրա: Մարտի 15-ին կեսօրի կողմ Թեհայանը ֆաղան և Հարդենբերգ փողոցների անկյունից ոչ հեռու ատրճանակի մի կրակոցով գետին է տապակել Թալեաթին: 1921 թ. Հունիս 2-ին և 3-ին տեղի է ունենում պալել Թալեաթին: 1921 թ. Հունիս 2-ին և 3-ին տեղի է ունենում պատապարությունը գործ Համար Ը. Հ. 22/21 անվան տակ: Երդվարդատապար Համբակային դատաքննությունը, մեկ ժամ տևող խորհրդակցությունից հետո վճռել են, որ ամբաստանյալը «մնողավոր» չէ: Թեհայանը Գերմանիայից հեռացել է որպես ազատ մարդ և կարծ ժամանակով մեկնել Ամերիկա, որտեղ ջերմ բնդունելություն է գտել Հայ Համայնքի կողմից: Վերադառնալով Ամերիկայից, նա բնակություն է Հաստատել Սերբիայի Բելգրադ քաղաքում: Սարո Մելիքյան անունով, որը պահպանվել է մինչև իր կյանքի վերջը: Ամուսնացել է նույնացես Երգնակայից սերող վաճառականի դուստր Անահիտ Թաթիկյանի հետ, որին Հանդիպել էր դեռ Կովկասում եղած ժամանակ: Բելգրադում նրանք սրճարան են բացել: Զավեն ու Շահեն որդիները ծնվել են 1923 և 1927 թթ.: Ընտանիքը ձեռք է բերել որոշ շակի բարեկեցություն: Երկրորդ աշխարհամարտից հետո Հարավսլավիայի կառավարությունն ապասեփականացրել է Թեհայան-Մելիքյանների տունն ու սրճարանը: Ընտանիքը մեկնել է Կասարլանկա, որտեղ Թեհայանը Հայրենակիցների աջակցությամբ կասարլանկա, որտեղ Թեհայանը Հայրենակիցների աջակցությամբ է գտնում: Սակայն զույգը մտադիր էր Ամերիկա տեղափառանք և գտնում է նախանք նախ մեկնել և նրանք նախ մեկնել են Փարիզ, որտեղ Հայ Համայնքը նրանց ապրուստի միջոց Հայթայինելու նպատակով Հանգանակություն է կազմակերպել: Թեհայանին տեսնելու համար ժամանել են բազմաթիվ Հայեր: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը բազմաթիվ Հայեր: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը Համբուրգը և նրա ճակատն ու ասել Հայերին լավ Հայտնի հետևյալ Համբուրգը և այս պատճեն ու ասել Հայերին լավ Հայտնի հետևյալ «Փողովուրդ»: Կիմբելով ներկաներին, ասել է. «Անհրաժեշտ ձեռքը, քան իմ Աջը», և դիմելով ներկաներին, ասել է. «Անհրաժեշտ է մեր հերոսին այնքան պատվել, որ նա ամեն ինչից վեր կանգնի: Մի ազգ, որ չունի հերոսներ, չունի նաև պատճեն այս պատճեն»: 1956 թ. Թեհայանը մասնակից ժողովում մեկնել են Սան Ֆրանցիսկո: Մինչ իր մահը Թեհայանը լերյանները ժամանել են Սան Ֆրանցիսկո: Մինչ իր մահը Թեհայանը աշխատել է որպես Գեորգ Մարտիկյանի քարտուղար: Նա ըստրվել է վերակառուցված Հայ Հեղափոխական դաշնակցության կենտրոն կամաց կառավարական աշխատանքներին մինչև իր նական կոմիտեում, որի քաղաքական աշխատանքներին մինչև իր

մահը՝ 1960 թ. մայիսի 23-ը, ակտիվորեն մասնակցել է: 1960 թ. Մայիսի 27-ին Ֆրեզնոյի «Արարատ» գերեզմանատանը տեղի է ունեցել թեհերյանի հուղարկավորությունը, որին մասնակցել են Կալիֆոռնիայում բնակություն հաստատած Հայերի մեծագույն մասը: Նրան ամփոփել են Զորավար Անդրանիկի շիրիմի կողքին: Դագաղը ծածկված էր Հայկական եռագույնով, և վրան դրված այն հեռազիտակը, որով թեհերյանը բեռլինի իր բնակարանից հետևել էր Թալամթին:

ԱՐԴՈՒ ՀԱՍԻՇ (Արդ ալ-Համիդ Երկրորդ)

Մնվել է 1842 թ. սեպտեմբերի 21-ին Կոստանդնուպոլսում որպես Արդ ալ-Մէջիդ Առաջինի երկրորդ որդին: 1876 (36) թ. սեպտեմբերի 11-ին եղրորդ՝ Մուրադ Հինգերորդին, գահընկցեց անելուց հետո դարձել է Օսմանյան կայսրության սուլթան: Երիտթուրքերի ճնշման տակ նա 1876 թ. գեկտեմբերին հոչակել է օսմանյան առաջին սահմանադրությունը (1877 թ. մարտին տեղի է ունեցել խորհրդարանի նիստը): 1878 թ. փետրվարին սահմանադրությունը կամեցվել է, խորհրդարանը՝ արձակվել: Վճռականորեն ճնշվել են ամեն տեսակի քաղաքացիական-լիբերալ ու ազգային գգտումները: 1894–95 թթ. կազմակերպվել են Հայկական կոտորածները: Երիտթուրքերի հեղափոխության ճնշման տակ վերականգնվել է 1876 թ. սահմանադրությունը: Թուրքական պահպանողական ուժերի խռովության պարտությունից հետո՝ 1909 թ. ապրիլի 18-ին Համիդը գահընկցել է արվել և աքսորվել: Մահացել է 1918 թ. փետրվարի 10-ին Կոստանդնուպոլսում:

ԱՐԱՄ ՄԱՏՈՆՅԱՆ

Մնվել է 1875 թ. Կոստանդնուպոլսում: Հաճախել է Սարիկյան կրթական հաստատությունը, որից հետո Փրանսիական գիմնազիան: Կրթության հիմնական մասը սակայն նա ձեռք է բերել որպես ինքնուս, որպեսզի կարողանա մասնակցել այնպիսի թերթերի խմբագրական աշխատանքներին, ինչպիսիք են «Մաղիկն» ու «Մասիաը»: 1907–1908 թթ. հրատարակել է «Գրական Հանդես» ամսագրը: 1915 թ. ապրիլին ձերբակալվել և աքսորվել է Դոր: Աքսորից ազատվելուց հետո նա Հալեպում չնորհիվ Սալիմ բեյի հետ ունեցած

բարեկամության և հովանավորության հավաքել է Հայերի տեղահանության ու բնախնջան վերաբերյալ արժեքավոր վավերագրեր, այդ թվում և գրավոր հզված ցուցումներ, նամակներ, հեռագրեր: Զինադարձարից հետո Անտոնյանը վերադարձել է Կոստանդնուպոլիս, այնտեղ 1919 թ. հրատարակել է «Հայրենիքում» իր վերապրածը պատմվածքի ձևով, ինչպես նաև «Բալկանների պատերազմի մանրամասն պատմությունը» աշխատությամբ: 1920 թ. նա Փարիզում հրատարակել է «Աքսորի ճանապարհներին» գործը, իսկ 1921 թ. «Մշեր ավագը» գիրքը անգլերեն և ֆրանսերեն լեզուներով: Անտոնյանը հաստատվելով Ֆրանսիայում՝ 1918–1951 թթ. դեկավարել է Փարիզի նուպարյան գրադարանը: Նա միաժամանակ «Արևմուտք» պարբերականի խմբագիրն էր: Որպես գրող, օգտագործել է նաև «Էդելվայս» և «Մերսեղես» կեղծանունները: Անտոնյանը մահացել է 1952 թ. Փարիզում:

ԱԹԱԹՈՒՐՋ ՄՈՒՏԱՖԱ ՔԵՍԱԼ ՓԱԾՈ

Մնվել է 1881 թ. մարտի 12-ին Սալոնիկում հասարակ ծառայողի և փայտի վաճառականի ընտանիքում: Հինգ տարեկան հասակից հաճախել է Սալոնիկի, ապա Մոնաստիրի գինվորական դպրոցները: 1899–1905 թթ. ուսանել է Կոստանդնուպոլսի ու ազգական ակադեմիայում: Երիտթուրքական շարժմանը մասնակցելու պատճառով ուղարկվել է Սիրիա: 1906 թ. Դամասկոսում հիմնել է «Հայրենիք և ազատություն» գաղտնի կազմակերպությունը և միացել «Միություն և առաջադիմություն» կոմիտեին, որը 1908 թ. հունիսի երիտթուրքական հեղափոխության պատասխանատուն էր: 1911–12 թթ. մասնակցել է թուրք-իտալական, իսկ 1912–13 թթ. Բալկանյան պատերազմներին: 1913–15 թթ. Սոֆիայում ու ազգական խորհրդատու էր, իսկ 1916 թ.՝ գեներալ և փաշա: Առաջին աշխարհամարտի ժամանակ դիվիզիայի հրամանատար էր, ապա՝ բանակի հրամանատար: Զինադարձական հայության համանատար էր, ապա՝ բանակի հրամանատար:

Հետո շահել է Զաքարիայի (1921 թ. օգոստոս) և Դումլու Փինարի (1922 թ. օգոստոս) մոտ Հունական զորքերի ղեմ մղած վճռական ճակատամարտերը: Դրա չնորհիվ ստեղծված թուրքական նոր սահմանները 1923 թ. Հոգանում դաշնակիցների կողմից ճանաչվել են: 1923 թ. օգոստոսին Քևմալը հիմնել է Ժողովրդական կուսակցությունը (1924 թ.՝ Հանրապետական ժողովրդական կուսակցություն) և դարձել 1923 թ. Հոկտեմբերի 29-ին Հոչակված Հանրապետության առաջին նախագահը (1922 թ. նոյեմբերի 1-ին վերացվել էր սուլթանությունը): Գործի են դրվել բարեփոխման լայնածավալ ծրագրեր՝ արդիական ու աշխարհիկ պետության ստեղծման համար (խալիֆայության լուծարք, քաղաքացիական օրենսգրերի ու լատինական գրի ներմուծում): Վերացվել է նաև սահմանադրության այն պայմանը, որով իսլամը հաստատվել է որպես պետական կրոն: Քեմալական զաղափարախոսությունը (ձևավորվել է 1931 թ.) հենվել է Հանրապետականության, ազգայնականության, ժողովրդավարության, պետական վարչարարության, աշխարհականացման և հեղափոխականության վրա: 1934 թ. ազգային մեծ ժողովը Քևմալին՝ ի ճանաչումն թուրք ազգի համար նրա ակնառու ծառայությունների, չնորհել է Աթաթուրք (թուրքերի հայր) անունը: Մահացել է Ստամբուլում 1938 թ. նոյեմբերի 10-ին:

ԳՐԻԳՈՐԻՍ ԲԱԼԱԶՅԱՆ

Մնվել է 1879 թ. Թուկատում: Ավարտելով Կարինի (Էրզրումի) Սանասարյան վարժարանը՝ Գերմանիայում ստացել է աստվածաբանական կրթություն: 1901 թ. Արմաշի վանքում ձեռնադրվել է քահանա: 1908 թ. ուղեկցել է նորընտիր Մատթեոս Իզմիրյան կաթողիկոսին Կոստանդնուպոլիսից դեպի Սուրբ Աթոռ Էջմիածին: Այնուհետև, մինչև Առաջին աշխարհամարտի ըրոնկումը, Գերմանիայում շարունակելով ուսումնառությունը՝ իրևն նվիրել է Հոգեսոր գործունեության: 1914 թ. վերադարձել է Կոստանդնուպոլիս, որտեղ 1915 թ. ապրիլին՝ Հայկական ջարդերի նախօրյակին, ձերբակալվել և քշվել է Դեր Զոր: Նա Հրաշքով ազատվել է ստույգ մաշից: Արամ Անտոնյանը այն 15 անձնությունը մեկն է, որ փրկվել է Կոստանդնուպոլիսի Հայ համայնքի 600 նշանավոր մարդկանց խմբից: Զինադադարից հետո 1918 թ. Բալաբենչանավոր մարդկանց խմբից: Զինադադարից հետո 1918 թ. Բալաբենչանավոր մարդկանց խմբից: Զինադադարից հետո 1918 թ. Հայոց յանը Հրատարակել է իր ապրած եղենու վկայությունները՝ «Հայոց գողգոթա» վերնագրի ներքո: Առաջին աշխարհամարտից հետո մի

կարճ ժամանակ Մանչեստրում զբաղեցրել է Հայ Հոգևորականի պաշտոնը, սակայն Դուրյանի կողմից լուծարվելուց հետո վերադարձել է Էջմիածին: 1925 թ. Բալաբյանը Գևորգ Հինգերորդ կաթողիկոսի ձեռամբ օծվել է Եպիսկոպոս և որպես սուրբ Աթոռի նվիրակ ուղարկվել Ֆրանսիա, Եվրոպական թեմ ստեղծելու նպատակով: Սկսած 1926 թ. նա նվիրումով ծառայել է Ֆրանսիայի հարավում ընակություն հաստատած Հայերին, մինչդեռ Փարիզում նրան չի հաջողվել տեսական գործունեություն ծավալել՝ Սփյուռքի տարբեր խմբերի քափական երկպատակության պատճառով: Եպիսկոպոս Բալաբյանը մահացել է 1934 թ. կաթվածից:

ԷՆՎԵՐ ՓԱԾԱ

Մնվել է 1881 թ. նոյեմբերի 23-ին Կոսանդնուպոլատում, սովորական Արդ ալ-Համիդ Երկրորդի շքախմբի անդամներից մեկի ընտանիքում: Ավարտելով ուղմական ակադեմիան՝ 1903 թ. դարձել է Մակեդոնիայում տեղակայված 3-րդ բանակի զորամասերից մեկի հեծելազորի հրամանատարը և կապ հաստատել ազգային-բուրժուական «Միություն և առաջադիմություն» գաղտնի կազմակերպության հետ: 1908 թ. հովիսի նրաթմուրքական հեղափոխության կազմակերպիչներից էր և մասնակիցը 1909 թ. ապրիլին Ստամբուլի վրա կատարած ուղմանը, որի հետեւանը եղել է Արդ ալ-Համիդ Երկրորդի գահընկեցությունը: Բնոլինում ավարտելով ուղմական կցորդի պահնկեցությունը: Բնոլինում ավարտելով ուղմական կցորդի պաշտոնավարությը (1909–1911), Տրիպոլիսանիայում մասնակցել է Խտալիայի ղեմ պատերազմին (1911), իսկ Բալկանյան պատերազմի ժամանակ (1912–13) 1913 թ. հունիսի 23-ին կատարել հեղաշրջում, որը Քեմալ և Թալեբաթ փաշաների ղեկավարած «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը վերջնականացվել իշխանության վկանը է բերել: Լինելով զիլավոր շտարի պետ (1913, Հունվար), ուղմական նախարար (1914, փետրվար) և վիցեգեներալիստիմուս (1915-ի սկզբին), ինչպես նաև ամուսնանալով կառավարող սուլթանի գարմուհու հետ՝ նա դարձել է թուրքական քաղաքականության և ուղմական վարագլուխ: Նա պատասխանատուներից է Կենտրոնական պետությունների կողմից պատերազմին մասնակցելու թուրքական քաղաքականության և 1915–16 թթ. Հայկական կոտորածների համար: Օսմանյան պետության ուղմական ու քաղաքական փլուզումից հետո, 1918 թ. հոկտեմբերին, փախել է

նախ Գերմանիա: Այնուհետև մի որոշ ժամանակ ապրել է Մոսկվայում, ապա միացել Սիրին Ասխայում բասմաչների պայքարին ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի, իրեն Հռչակել Թուրքեստանի սովլթան և 1922 թ. ապրիլի 4-ին ընկել մարտերից մեկում:

ԳՈԼԸ ԿՈԼՄԱՐ ԲԱՐՈՆ ՖՈՆ ԴԵՐ (Գոլց փաշա)

Ծնվել է 1843 թ. օգոստոսի 12-ին Բիելենֆելդում: Եղել է պրուսական ու թուրքական գեներալ: Մասնակցել է 1866 և 1870-71 թթ. պատերազմներին: Աշխատել է գլուխվոր շտաբի պատերազմների պատմության բաժնում, մասնագիտությունը՝ զինվորական գրող: 1883 թ. ծառայել է թուրքական բանակում, վերակառուցել թուրքական բանակը, ստացել փաշա տիտղոսը: Վերադարձել է պրուսական բանակի, սակայն 1909-1911 թթ. կրկին թուրքիայում էր: 1911 թ. կան բանակ, սակայն 1909-1911 թթ. կրկին թուրքիայում էր: Առաջին աշխարհամարտի ստացել է գեներալ-ֆելդմարշալի կոչում: Առաջին աշխարհամարտի մկրին Բևերիայում գեներալ-նահանգապետ էր: Ապա թուրքական կառավարության խնդրանքով դարձել է 1-ին, իսկ ավելի ուշ ճ-րդ կառավարության խնդրանքով դարձել է 2-ին: 1916 թ. ապրիլի 19-ին Բաղրամանաստար: Մահացել է 1916 թ. ապրիլի 19-ին Բաղրամանական դադում:

ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՈՒՈԽ

Ծնվել է 1858 թ. դեկտեմբերի 15-ին Բելինում եզրակացեա ու լոգաբան Կարլ Ռիխարդ Լեփակուսի ընտանիքում: Ուսանել է աստվածաբանություն, իմաստափրություն, նաև մաթեմատիկա, գրականություն և արվեստի պատմություն: 1889 թ. ստացել է Փիլիխոփայության գոկտորի գիտական աստիճան, գործել է որպես ծխական քահանա: 1895 թ. հիմնադրել է «Գերմանական առաքելությունն Արևելքում և օգնություն Հայերին» կազմակերպությունը: 1896 թ. հրատարակել է «Հայաստանը և Եվրոպան» Հայերի դեմ գործած ոճրագործությունների վավերագրերի ժողովածուն, որի մեջ պատասխանատվության է կանչել Եվրոպական տերություններին: Առաջին աշխարհամարտի մկրին Բևերիայում գեներալ-կանչել է կառավարությունը: 1915 թ. օգոստոսի 10-ին Հանդիպում է ունեցել էնվեր փաշայի հետ, որը մերժել է Լեփակուսի միջամտությունը Հայերի գործնին: 1916 թ. լույս է տեսել նրա «Զեկուց Թուրքիայում Հայ ժողովրդի

վիճակի մասին» (1919 թ.՝ երկրորդ ընդարձակված հրատարակությամբ՝ «Հայ ժողովրդի մահվան Արթը» խորագրով) աշխատությունը: Այս երկրորդ հրատարակությունը լույս է տեսել գրաքննության պայմաններում և չի հասել գրավաճառներին: 20.000 օրինակի մեծ մասը ուղարկվել է «Առաքելություն Արևելքում» կազմակերպության անդամներին, ավետարանական քահանայական ծառայություններին, Գերմանիայի ույսսմթագի անդամներին, ինչպես նաև Վյուրթեներգի երկրամասային խորհրդարանի առաջին և երկրորդ վյուրթեներգի երկրամասային խորհրդարանի սուտիկանապետը բոնապալատների պատգամագորներին: Բելյինի սուտիկանապետը բոնապալակի է օրինակների մի մասը և արգելել Հետազա հրատարակումն ու տարածումը (մինչև 1980 թ. Գերմանիայում եղել է հինգ հրատարակություն): Լեփակուսը քաղաքական ճնշման և նեթարկվել նաև իր սեփական Համայնքի կողմից, որից հետացել է: Նա 1919 թ. հրատարակել է գերմանական դիվանագիտական գրագրությունը Հայոց ցեղասպանության մասին «Գերմանիան ու Հայաստանը 1914-1918 թթ., դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու» 1920 թ.՝ գերմանիայի արտգործ նախարարության Հանձնարարությամբ 1920 թ. աշխատակցել է «Եվրոպական կառավարությունների մեծ քաղաքականությունը 1871-1914 թթ.» գրքի հրատարակությանը: Մահացել է 1926 թ. դեկտեմբերի 3-ին Մերանում:

ՕԹԹՈ ԼԻՄԱՆ ՖՈՆ ԶԱՄԴԵՐՄ

Ծնվել է 1866 թ. փետրվարի 17-ին: Եղել է պրուսական գեներալ և թուրքական մարշալ: 1874-ին ծառայության է անցել բանակում, 1913-ից գեներալ-լեյտենանտ էր: 1913-ից մինչև 1919-ը թուրքիայում պերմանական ուղմական միախայի դեկադարն էր, թուրքական բանակի 1-ին զորամիավորման հրամանատարը:

Լարվածությունը Ռուսաստանի և Թուրքիայի միջև նրա՝ Թուրքիա ուղարկվելուց հետո (Լիման Փոն Զանգերսի ճգնաժամը) պատճառ էր դարձել, որ նրան նշանակելին 1-ին զորամիավորման հրամանատար և դրանով իսկ թուրքական բանակի գլուխվոր տեսուչ: Մահացել է 1929 թ. օգոստոսի 22-ին Մյունխենում: Գրել է «Հինգ տարի Թուրքիայում» (Բելյին, 1920) գիրքը:

ՀՈՒԳՈ ԼԻՓՍԱՆ

Մնվել է 1863 թ., մահացել է 1925 թ.: Եղել է Հոգեբույժ: Դատավարության ժամանակ Բնողինում բժշկական գաղտնի խորհրդական և պատվավոր պրոֆեսոր:

ԹԵՇՈՐ ՆԻՍԱՅԵՐ

Մնվել է 1857 թ. փետրվարի 5-ին Բոլլում (Վյուրթենբերգ): 1894 թվականին Քիլի Համալսարանում միջազգային իրավունքի պրոֆեսոր էր, 1917 թ. միջազգային իրավունքի գերմանական ընկերության նախագահ:

ՄԵՀՄԵԴ ԹԱԼԵՍԻ ՓԱԾՍ

Մնվել է 1874 թ. սեպտեմբերին Կարիկալայում (Էդիրնե նահանգ), շարքային պաշտոնյայի ընտանիքում: Սալոնիկում դպրոցն ավարտելուց հետո մտել է ծառայության և 1895 թ. ստանձնել Սալոնիկի փոստային ու Հեռագրական գործակալության պետի պաշտոնը: Միացել է Կրիտթուրքական շարժմանը, որի համար 1892 թ. ձերբակալվել է: 1906 թ. Հուլիսի 22-ից մեկն է «Օսմանյան ազատության ընկերության» (Հետագայում՝ «Միություն և առաջադիմություն») կուսակցությունը հիմնադիր յոթ անդամներից, ինչպես նաև վերջինիս եռանդամ «Գերագույն կոմիտեի» անդամներից մեկը: Կարևոր մասնակցություն ունի Կրիտթուրքական Հեղափոխության նախապատրաստական աշխատանքներին, որի համար 1908 թ. արձակվել է պաշտոնից: Հեղափոխությունից հետո ընտրվել է օսմանյան խորհրդարանի պատգամավոր, 1909 թ. մայիսից մինչև 1911 թ. Հունվարը՝ ներքին գործոց նախարար, 1911 թ. Հոկտեմբերից մինչև 1912 թ. Հուլիսը՝ կապի նախարար և 1912-ից՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավոր քարտուղար: Էնվեր փաշայի հետ 1913 թ. Հունվարի 23-ին կատարել է Կրիտթուրքական պետական

Հեղաշրջում: Որպես ներքին գործոց նախարար (1913 թ. Հունվարից մինչև 1917 թ. փետրվար) և Մեծ վեզիր (1917 թ. փետրվարից մինչև 1918 թ. Հոկտեմբեր), նաև է զլսավոր պատասխանատուն Հայերի տեղահանության Համար և վարում էր, չնայած Անտանտի նկատմամբ ունեցած սկզբնական համակրանքին, Կենտրոնական պետությունների հետ դաշինքի քաղաքականություն: 1918 թ. Հոկտեմբերին փախել է Գերմանիա: 1921 թ. մարտի 15-ին Բնողինում սպանվել է Հայ ուսանող Սողոմոն Թեհրեյանի կողմից:

ԳՅՈՒՆԹԵՐ ՖՈՒՔՍ
ՀԱՆՍ-ՌԻԼՇԻՆ ԼՅՈՒԴԵՄԱՆ

ՄԱՐԴԱՍՊԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՓԱՍՏԱՔՂԹԵՐ ՈՒ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրատ. Խմբագիր՝ Հ. Բ. Պետրոսյան
Տեխ. Խմբագիր՝ Վ. Զ. Բդոյան
Կազմի ձեռավորումը՝ Գ. Վ. Մարիկյան

Համակարգչային շարվածքը և
ձեռավորումը՝ Թ. Վ. Վարդանյանի

Ստորագրված է տպագրության 24.07.08 թ.: Զափուր 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 5,8 մամուլ, տպագր. 7,25 մամուլ=6,74
պայմ. մամուլի: Տպագանակ՝ 300; Պատվեր՝ 55:

ԵՊՀ հրատարակություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արովյան 52